



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>








~~ՀԱՅԱԿ~~ ԳՈՅԱՆԱՔԻ ՏԵՐ ՄԱՐԴՈՒԹՅ

452

# ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԲՆՈՒԹԻՒՆ

Կ. Ա. Մ.

Ա. ԳԻՐՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ




140р.

— 33 —

Կ. ՊՈԼԻՑ  
ՏՊԱԳՐ. — Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԿՐՈԴԻ

1905

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES



Ter Sargsean, Sahale

Astnats ew brutiwn han.

ԱՍՏՈՒԱԾ ԵՎ ԲՆՈՒԹԻՒՆ

Grad  
EREN  
883  
BUR

معارف نظارت چدیله سنگ سنه ۴۲۰ تشرین اول ۱۸ تاریخ مخلو  
و ۵۷۵ نومرویی رخصتامه سیله طبع اول نشدر.

GRAD  
EREN  
883  
11.01.93

Քահանայութեանս Յիսնամեան (1854—1904)  
Յոքելեանի առքիւ կ'առուիրեմ մատենիկու  
Ուխսի Մանկանց եկեղեցոյ եւ  
բանասէր երիսասարդաց Ազգիս




## ՍԱՀԱԿ ՔԱՂԱՆԱՅԻ ՏԵՐ ՍԱՐԳՈՄԵԱՆ

# ԱՍՏՈՒՁՅ ԵՒ ԲՆՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

# Ա. ԳԻՐՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ



Տ. Կ. ՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐ. — Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ և ՈՐԴԻ

1905

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ

S. S. ՄԿՐՏՉԻ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈԼԻՂԻԿՈՍԻ

ԵՊԻՄԿՈՎՈՅԱԳԵՏԻ ԵՒ ԽԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐքԻ

ՆԱԽԱՄԵԽԱՐ ԱԹՈՅՈՅ

ՍՐԲՈՅ Է ԶՄԻԱՆԵՒԻ



Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՂԻՄԱՑ

S. S. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՐԲԱՁԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



Հ Ր Ա Մ Ա Ն Ա Ւ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ Կ. ՊՈԼՍՈՅ

S. S. ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԵՒ

ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՏ. ԺՈՂՈՎՈՅ

## Ն Պ Ա Տ Ա Կ

---

Ս. Գիրք Աստուծոյ խօսքն են, (այսինքն Աստուծոյ Եկեղեցութեամբը՝ Աստուծոյ տուն տալովը գրուած յայտնութիւններ են, Աստուծոյ կաևաց եւ խորհրդոց եւ զօրծոց վրայօֆ). Գիտութիւնք եւս Աստուծոյ գործմերն են, (այսինքն՝ Աստուծոյ արարչազործած նիւթին՝ Աստուծոյ նախահաստատած բնական օրենքներու ներքեւ ի՞նչ եղանական գործելուն, եւ ինչպէս արդիւնաւորելուն վրայ փորձառական հմտութեամբ բաղուած ծանօթութիւններ, եւ այն ծանօթութեանց վրայ հիմնուած դրութիւններ են):

Արդ, երբ Աստուած է որ խօսեր է Ս. Գրոց մէջ իր գործոց վրայ, անկարելի է որ անոր մէջ սուս կամ սխալ տեղեկութիւն մը գտնուի Գիտութեանց դեմ, որ իր գործմերն են. եւ երկ մէկ սուս կամ սխալ մը միայն գտնուի անոր մէջ, հերիէ է ան՝ Գրքին աստուածայնութիւնը սուս հանելու, որով ան ալ ան պտեն սուս կրօնց մէջ երեւցած աստուածային հեղինակութիւն պահանջող սուս գրմերէն մէկը կ'ըլլայ:

Բայց ինչէ՞ն է որ — կ'ըսուի — Կրօնից եւ Գիտութեանց տարեզրութեանց մէջ ցուցադրուած կ'գտնուին տիեզերաց կազմութեան եւ, կառավարութեան մասին

ինչ ինչ հակասուրիւններ՝ ընդ մէջ Կրօնից եւ Գիտութեանց, ոչ միայն անկրօններու՝ անասուածներու՝ զիտուրեանց սուս աւակերտներու կօղմանէ, այլ նաև նամնարել գիտուններու, զերմեռանդ Աստուածապատճեռու. մինչեւ իսկ Սկեղեցւոյ Հայրեռու կողմանէ։ Առ այս՝ Կրօնից եւ Գիտութեանց անկեղծ հետեւողք վսանաբար կ'պատախանեն. տարակոյս չկայ որ այդ հակասուրիւնն կարծուածները երբ լուրջ քննութեան ենթարկին, անմիջապէս պիտի տեսնուին որ ամենեւին երեւութական են, մինչդեռ Գիրք եւ Գիտուրիւնն սեւս միաբանութեան մէջ են եւ զիրար կ'բացարեն. Գրքին նարազա իմաստովը կ'ըմբռնուին Գիտուրիւնն, եւ զիտուրեանց անաղօս լոյսով՝ Գիտութեանց նւմարիս եզրակացուրեամբ կ'պարզուին կ'պատճուին Ս. Գիրք։

Աստուածառունչ մատեանը դարե՛ր եւ դարե՛ր տոկաց կեցաւ դիմացաւ կատաղի թօնամեաց մոլեգին յարձակմաններուն. դարե՛ր եւ դարե՛ր տեղացին անոր զլխուն դժոխային գօրութեանց սայրասուր սլաքներն ու մահառու տանքերը, բայց չկրցին սենանի անոր. նա մնաց միւս անխոց եւ անվէր : — Տրէյբըր Ամերիկացի երեւելի գիտունը իր «Պատմուրիւն մտաւորական զարգացման նւրոպայի» անուն գրքին մէջ (Հատ. Բ. էջ 145, 146, 224.) կ'ըսէ թէ՝ Վետասաններորդ դարուն մէջ Հռոմեական Սկեղեցւոյ կրած յեղաւորչութեան արդիւնքն այն եղաւ որ զիտուրիւնը յառաջդիմեց կրօնական բառեկացուրեան նետ. բնուադատուրեան ոգին արթնցաւ.

նին Յոյն եւ Հռոմեական գրուածոց՝ ինչպէս նաեւ միւս ամեն գրոց մէջ բան մը չվրիպեցաւ սրակն քննադատութենէ. «Այս բոցակէզ փորձէն մի միայն զիրք մը անվնաս եղաւ. այս զիրքն էր Աստուածառունչ Մատեանը».

Արդարեւ. այդ բոցակէզ քննադատութեան փորձերուն մէջ ի հանդէս բերուեցան ինչ ինչ անմիաբան, Գրոց եւ Գիտութեանց միջեւ. բայց ըստ նշգրտել հարազատ իմաստից Գրոց եւ ըստ զարգանալ Գիտութեանց՝ ինքնին ի յայտ եկան, որ անոնք ամենեւին միաբան էին եւ են. եւ ահա այդ փորձը ընել պիտի ջանամք մենք ալ այս տեղ Տիեզերաց կազմութեան եւ կառավարութեան մասին. ոչ քէ վիճաբանական ուղղութեամբ, որ քեւ լոյս կը ցայտեցրնէ, բայց չլուսաւորեկ. ըստ որում վիճաբանութեանց նպատակը նշանարտութիւնը խուզել երեւան բերել րլալովն հանդերձ՝ ամեն անզամ կ'ըեղի այդ ուղղութենքն, եւ կ'դառնայ յադրութիւն տանելու մրցում, ու ասեն վիճաբանակից ոչ մի կողմ յանձն առնլով պարտութիւն խոստովանիլ, խնդիրը միւս կ'մնայ ի մքան»:

Մենք նշանարտութիւնը պիտի փնտունք Գրոց եւ Գիտութեանց մէջ փոխադարձաբար, եւ անոնց բացարութիւններէն լուսաբանուելով անոնց մէջտեղ կեցած անխզելի միաբանութիւնը երեւան պիտի բերենք. անտուս օգտուելով՝ Կրօնի դասընթացի այս նոր նիւդին սկզբնաւորութեան համար՝ ներհուն հեղինակներու հանճարեղ իմաստասիրութիւններէն. եւ՝ մեր բազմամետա ծերութիւնը՝ յորում ձեռներէց կ'ըլլտմք այս նոր նիւդի

— Ժ —

դասընթացքը երկնել եւ ուրուազձել, քէ բանասէր երթասարդութեան հետախուզուզութեանց իբր օրինաւոր առաջնորդ, եւ քէ միանգամայն Երկրորդական վարժարանաց դասագիրք ըլլալու համար, հարկ կ'դնե վրանիս անոր մշակութիւնը եւ կատարելազործութիւնը կտակել ապագայ ձեռնիաս Պատուելի Ուսուցչաց. առանց երկարաբանելու անկէ յառաջ գալիք յոյժ բաղձալի օգուտները բուագրելով, որոնց փորձը առած եմք անձամբ դասախոսելով սովին, եւ առատ արդիւնաւորութիւնը տեսնելով.

Շա՛ եւ շա՛ և մեզ այս ի վարձաթութիւն . . .



# ԱՍՏՈՒԱԾ և ԲՆՈՒԹԻՒՆ

Կ Ա Մ

Ա. ԳԻՐՔ և ԳԻՏՈՒԹԻՒՆՔ



Գործքերնիս Գիտութեանց ճշմարիտ աշակերտներու ուղղուած ըլլալով՝ աւելորդ համարած ենք ի ըստ կղբան աստ՝ նախ առաջին՝ Արարիչ Աստուծոյ հարկաւոր գոյութեան համար ձեռնարկել, վասն զի բացարձակ ճշմարտութիւն է : Գիտութիւնք կ'ըսեն թէ առանց պատճառի գործ չկայ, և արդիւնքն պատճառուր կ'ճանչցուի, հետեւաբար՝ տիեզերք որ կան՝ ոչ մէկ գիտութիւն անոնց համար կ'ըսէ թէ ինքնին ինքնագոյութեամբ կան՝ առանց պատճառողական պատճառի. ամենքն ալ այդ պատճառողական պատճառը Աստուծած է կ'ըսեն, և մեզ այս մասին ըսելիք չմնար : — Միայն նիւթապաշտ փիլիսոփան կայ՝ որ Աստուծած անունը բերանը առնելու կ'վարանի, և մենք պիտի տեսնեմք գործոյս առաջին քայլերուն մէջ որ ի՞նչ որ նա բերնով խոստովանիլ չուզեր՝ դաւանանքովը կ'հաստատէ :

Ուրեմն կ'մնայ մեզ մէկէն տիեզերաց Արարչութիւնը և կազմութիւնը ձեռք առնուլ, որովհետեւ Աստուծած իր գործքերովը լաւ եւս ի յայտ կուգայ և կ'ճանչցուի (Հո. ա. 20 : Սաղմ. ԺԹ. 1 : Գործ ԺԴ. 16. ԺԵ. 27) :



# Ա.

## ԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՎ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՏԻԵԶԵՐԱՑ

Ահա՝ ինչ կ'ըսէ այս մասին Գիրքը. «Ի սկզբանէ արար (ստեղծ) Աստուած զերկին և զերկիր. և երկիր էր աներեւոյթ և անպատրաստ (ըստ Եթր. անձեւ եւ բախուր). և խաւար ի վերայ անդնդոց, և Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջրոց» (Ծննդ. ա. 1-2):

Գիտութի՞նք ինչ կ'ըսեն այս մասին: Կ'ըսեն թէ տիեզերական պարապութեան անհուն միջոցը սկիզբէն լի էր նիւթի մանրամասնիկներով, նիւկներով, որոնք իրարմէ բիւրաւոր տարբերութիւններ, տարբեր ձեւեր. տարբեր յատկութիւններ ունէին, եւ ատոնք կայ եղած զօրութեամբ մը յար շարժման մէջ ըլլալով՝ ամենուրեք իրարու կ'պատահէին. կ'զարնը-ուէին, կ'շփուէին, կ'փարէին, կ'կցուէին, կ'միանային. գնդակիկներ՝ գունդեր կ'ձեւանային շրջադարձու-թեամբ, և հետզհետէ նոր հիւլէններու կցորդու-թեամբք քանակներնին աճելով խոշորնալով՝ ահեզե-րական այս հիանալի անհեթեթ զանդուածները կազմեցին. բնական օրինաց ներքեւ գործելով՝ միլիոնա-ւոր տարիններու միջոցին, և բիւր միլիոն կերպարա-նափոխութիւններէ անցնելէ ետքը հազիւ այսօրեայ վիճակին հասած են. բայց չէ թէ ամէնքն ալ մեր աշխարհի վիճակն առած են, կամ միօրինակ կատարելութեան աստիճանը ունեցած են, այլ՝ իրենց քա-նակութեանց տարբերութեանց պատճառաւ ո՛ր մէկը դեռ եւս հրավառ լուսատու արեգակներ կ'մնան, որ

մէկը կեղեւանալու երես առած են, ուրիշներ իրենց յատուկ լոյսէն զրկուած կեղեւապատ օթեւաններ եղած են կենաց, և շատեր ալ մեռած աստղային դի-ակներ դարձած են:

Գրքին և Գիտութեանց այս տարբեր բացատրութիւնները վերիվերոյ քննողի մը այնպէս կ'երեւի որ անոնց մէջ անհամաձայնելի հակասութիւնք կան. բայց անոնք որ անոնց խօսքերուն բուն իմաստից (1) և հոգւոյն թափանցել կ'յաջողին, ակներեւ կ'տեսնեն թէ հակասութեան ստուելն անգամ չտեսնսւիր անոնց մէջ, և ամենեւին միաբան են:

Բացատրենք ըսածնիս. Գրքին նպատակն ըլլալով ցոյց տալ թէ նիւթը՝ յորմէ տիեզերք և աշխարհք կազմուած են՝ անսկիզբն յաւիտենական ինքնագոյ չէ: կ'ըսէ. «Ի սկզբանե», այսինքն՝ երբ տիեզերական անհուն միջոցը պարապութիւն էր, գեռ գոյութիւն չկար, երբ մանրամասնիկներ՝ հիւլեներ չկային. Աստուած ստեղծեց, այսինքն՝ չկայէն կայ ըրաւ երկինքն ու երկիրը, որ է ըսել, երկնից տարածութեանց մէջ գոյանալիք աշխարհքներու և երկրի գոյացութեանց նախնական նիւթը. նիւթին մանրամասնիկները, անտեսանելի ըլլալու չափ փոշետեսակ և անբաղայ: Գիտութիւնք ասոր դէմ կ'զրուցե՞ն: — Հին փիլիսո-փայութիւնը իր տղայութեան անփորձութեան մէջ միակողմանի խորհելով, որ Ոչինչէն ինչ յառաջ չիգար,

(1) Ս. Գրքին հարազատ իմաստը երեւան բերելու եւ Գիտութեանց հետ բաղկատելու համար հարկաւորաբար պարտիմք բնազիր օրինակներուն դիմել. Հին Կտակարանի մասին՝ Երրայլական բնազրին, եւ նոր Կտակարանի մասին՝ Յունականին. Թէեւ այլ եւ այլ լեզուաց Խարզմանութիւններն ալ մասամք կ'օգնեն առ այն:

ըսաւ թէ նիւթն ալ Աստուծոյ պէս յաւիտենական էր։ Արդի փիլիսոփայութենէն ալ Նիւթականութեան անԱստուածային դպրոցը միայն՝ որ Նիւթը ստեղծող յաւիտենական Աստուածը չտեսներ իր գործքերուն մէջ, կ'ըսէ թէ Նիւթը ինքնին ի յաւիտենից էր. այսինքն Նիւթին այն մանրամանը հիւլէները յաւիտենական ինքնագոյ էին (1)։ Միոյն Աստուծոյ յաւիտենական ինքնագոյութիւնը ժխտելու եւ ուրանալու համար այնչափ անհամար միլիոններով հիւլէներու յաւիտենական ինքնագոյութիւնը ընդունիլ և խոստովանիլը խելքի՝ մոռքի՝ տրամաբանութեան հակառակ է բոլորովին։ Եթէ ամեն պատճառներու միակ բացարձակ պատճառը Աստուած՝ ինքնագոյ յաւիտենական չ'կըրնար ըլլալ, անհնար. է որ այնչափ անհամար միլիոններով հիւլէներ ինքնագոյ և յաւիտենական. եղած ըլլան. գիտութիւնը աս չ'ընդունիր։ Բայց որովհետեւ հիւթականութիւնը բռնադատուած է խոստովանելու՝ որ այն հիւլէները « ինքնաշարժ » չ'են. « Կայ եղած զօրութեամբ մը » ի շարժման են, այս խոստովանութեամբ հիմնայատակ կ'քանդէ բոլորովին իր անԱստուած դրութիւնը. քանդի այդ կայ եղած զօ-

(1) Գերմանիա՝ որ արդի փիլիսոփայութեան մեծ վառարաններէն մին է, իսպան հերքած է, նէ-բայ-ան-նէ-նէ-նէ, եւ այս օրուան օրս ողջոյն Գերմանիոյ մէջ նէ-բայ-ան փիլիսոփայութեան միակ ուսուցիչն է Հեքել. մին, Հելմոծ, Վունդ, Լոմէ, Ուլրիշի, որ են մեծագոյն հանճարք Գերմանիոյ, կ'մերժեն նէ-բայ-ան-նէ-նէ-նէ, եւ Գերմանիոյ փիլիսոփայից մէջ նէ-բայ-ան-նէ-նէ անանկ վարկակօրոյս է, որ այն փիլիսոփաներէն մին՝ Բրոֆ. Դոլուք՝ այսպէս ըսած է Ամերիկացիի մը. « Եթէ մէկը նէ-բայ-ան-նէ-նէ կուսակից է, մեր Գերմանացիքս ուսեալ եւ կրթեալ չեմք համարիր այնպիսին »։ (Տե՛ս Գու-դէ Ճ-ր-ե-ր, Cook's Lectures, Second Series, p. 30)։

բութիւնը ի՞նչ անուամբ ալ մկրտել ուզէ, և ի՞նչ յատ-  
կութիւններ ալ տայ անոր, յայտնի կտեսնուի որ ամեն  
պատճառներու առաջին բացարձակ պատճառն է այն,  
այսինքն՝ Գրքին ուսուցած յաւիտենական ինքնագոյ  
Աստուածը, որ արարիչն է ամենայն արարածոց :

Որդի ճշմարիտ փիլիսոփայութիւնը ամենեւին  
չընդունիր՝ կ'ժխտէ նիւթին յաւիտենականութիւնը :  
— Այն բնագէտներն անգամ՝ ինչպէս Հըրպըրթ  
Սրենաէր՝ որ աշխարհի ստեղծման մասին Աստուա-  
ծաշնչին պատմութիւնը չ'են ընդունիր (իբրեւ ոչ—  
գիտական, կամ ռամիին իմացած կերպով՝ տառական  
և նկարագրական իմաստով), կ'ըսեն թէ Բնական  
Գիտութիւնք չ'են ապացուցաներ թէ Նիւթը յորմէ  
կազմուած է աշխարհու յաւիտենական է : Գաղղիացի  
անուանի բնտգէտը Լը Կոնդ, որ հիմնադիր է Դրա-  
կան փիլիսոփայութեան, Հըրլդըն և Լայէլ երկրա-  
բանները . և վերոյիշեալ անգղիացի փիլիսոփան  
Հըրպըրթ Սրենաէր՝ միաբան կ'խոստովանին թէ՝ Նիւ-  
թին սկզբնաւորութիւնը քննել և որոշել Բնական  
Գիտութեանց գործը չ'է . Բնական Գիտութիւնք ան-  
ձեռնհաս են որոշ բան մ'ըսել այս մասին : Ասոնք  
չ'են ընդունիր թէ Նիւթը յաւիտենական՝ անսկիզբն  
է . այլ կ'ըսեն թէ պարտի պատճառ՝ սկիզբ տուող  
մ'ունենալ . բայց թէ ի՞նչ է այդ պատճառը, սկըզբ-  
նաւորողը, գիտական ապացուցութեամբք չ'են կրնար  
ցուցընել : Ապա ուրեմն յայտնի կ'տեսնուի որ այս  
Գիտութիւնք Աստուածաշնչին ըսածը չ'են հերքեր,  
որ կ'ըսէ թէ՝ Նիւթը յաւիտենական՝ անսկիզբ չ'է,  
յաւիտենական Աստուածն ստեղծեց Եիւ թը :

Ահա յայտնապէս կ'երեւի ինչ որ չ'են կրնար ա-  
պացուցանել Գիտութիւնք այս մասին : — Ի՞նչ էր

այն պատճառը՝ յորմէ սկիզբն առին գոյացան նիւկին .  
ո՞վ էր այդ հիւկիները շարժման մէջ գնողը . (քանզի  
ինչպէս Գիտութիւնը կ'ըսէ՝ Նիւթին յատկութիւնը չ'է  
ինքնաշարժ ըլլալ . շարժումն ու դադարումը արտա-  
քին զօրութենէ կ'հաղորդուի իրեն ) : Ո՞վ էր այդ  
հիւկից այնչափ բիւրաւոր ձեւերն ու բազմաբեղուն  
յատկութիւնները տուողը : Ո՞վ է այն բնական օրէնք-  
ները նախակարգողը . որոց ներքեւ շաղուուեցան այն  
հիւկին , և այնչափ միլիոնաւոր աշխարհքներ արտա-  
դրեցին : Արդարեւ Գիտութիւնք այս հարցերու նը-  
կատմամբք բաներ մը չ'են հաստատեր , եւ առ այն  
անկարող ըլլալնին կ'խոստովանին , բայց Գըր-  
քին ըսածներէն ալ բան մը չ'են հերքեր , որ կ'ըսէ թէ՝  
այդ ամենուն պատճառողական պատճառը՝ ամենազօր  
ամենիմաստ արարիչ Աստուածն էր . Այն ստեղծեց  
այդ հիւկիները՝ չ'կայէն . Այն տուաւ անոնց այն բազ-  
մազան ձեւերն ու բազմաբեղուն յատկութիւնները .  
Այն ազդեց անոնց շարժումն և վարեց զանոնք ի  
գործ . եւ անոնց գործելու եղանակին համար . Այն  
նախակարգեց բոլոր տյան բնական օրէնքները : — Աս  
կ'խոստովանին ճշմարիտ գիտուններ : Մեծ բնազննինն  
եւ մեծ աստեղագէտն Սըր Ճօն Հերշէլ՝ կ'պնդէր թէ  
« Նիւթական մասնկաց և նիւկիներու յատկութիւնք  
կ'ցուցընեն թէ անոնք ստեղծուած են ամենիմաստ  
Արարչէ . և ինչ որ այն հիւկին կ'կատարեն բնական  
օրինացներքև՝ կ'ցուցընէ թէ պարզ գործիներ են որ  
կ'կատարեն զայն առ որ կարգուած են Արարչէն » :  
— Տարուին մեծ բնագէտն ալ կ'խոստովանի զայս՝  
« Ծագումն Տեսակաց » կոչուած գրքին կողքին վը-  
րայ գրելով . « Իմաստուն միտք մը հարկաւոր է ըս-  
տեղծելու համար ինչ որ բնական է » :

Թայց դիտողութիւնը ընողներ եղեր են թէ Գրքին  
« Խ ակզբանէ արար Աստուած զերկին և զերկիր » ը-  
սելը՝ փիլիսոփայական ճշմարտութեանց հակառակ է։  
Երկին և երկիր իրը տարբեր բաներ ցոյց տալով, կամ  
երկինքը իրը տաղաւար երկրի վերեւը պարզուած  
տարածուած՝ և կամ իրը վերնագաւառ նկարելով։ —  
Ա՛չ. Գրքին դիտումն ըլլալով՝ չ'է թէ երկինքը իրը  
կամար կամ տաղաւար հովանաւոր ցոյց տալ երկրի  
վերեւը, ո'չ ալ երկրի իրը վերին յարկը կամ վեր-  
նագաւառը ճանչցընել, և ո'չ ալ երկինքի՝ այսինքն  
բոլոր երկնային մարմնոց արարչութեան պատմու-  
թիւնն ընել, այլ միայն երկրի արարչութիւնը ուր-  
ուագծել; որովհետեւ երկինք ըսուած աստղային գը-  
րութեանց ամբողջութեան մէկ մասն է երկիրս, եւ  
երկինք և երկիր միանգամայն Աստուծմէ ստեղծուած  
են, ասիկա հասկցընելու համար՝ « Աստուած ոտեղ-  
ծեց երկինքը » ըսելուն՝ մէկէն վրայ կ'բերէ « Եւ  
երկիրը »։ և այսպէս երկրի անունը մէջ տեղ ձգելով՝  
ա'լ մէկդէ կ'թողու երկնքի վրայ խօսիլը, և կ'ակսի  
այնուհետեւ մի միայն երկրի վրայ ճառել, անոր նախ-  
նական վիճակը նկարագրել, և անոր վրայ կատարուած  
վեցօրեայ արարչութիւնը մանրամասնել՝ ըսելով  
« Եւ երկիր էր աներեւոյթ և անպատրաստ (Յըր.  
անձեւ եւ քափուր), և խաւար ի վերայ անդնդոց, և  
Հոգի Աստուծոյ ըրջէր ի վերայ ջրոց »։ — Գիտու-  
թիւնը այս բացատրութեան դէմ կուգա՞յ . կ'հակա-  
ռակի՞։ — Ո'չ, ընդհակառակն ինչ որ Գիրքն իր  
համառօտ նկարագրին մէջ ծածկաբար իմացընելով  
կ'անցնի, գիտութիւնը ընդարձակօրէն կ'բացատրէ ա-  
նոր ծածկաբանութիւնը, երկիրը աներեւոյթ անձեւ էր.  
այո, վասն զի սկիզբէն ստեղծուած նիւկները շարու-

նակ իրարու հետ համազանդուելով բիւրապատիկ կերպարանքներէ անցան, և շինեցին՝ ինչպէս երկանից անհամար արեգակները և աստղերը՝ այնպէս ալ երկրագունդս, կազային վիճակի մէջ, բոցակիզեալ կրակէ զանգուած մը, հրադունդ մը շրջադարձ, առ լեկոծ եւ յարածուփ + ճշմարիտ արեգակ մը ինքնաւլոյս, որ շատ գարեր մեր արեգական պէս լոյս եւ ջերմութիւն կ'ձառագայթէր համասփիւռ անլոյս (իւ րենց յատուկ լոյսերէն զրկուած) աշխարհներուն, եւ իր մէջ՝ մինչ իր կազային զանգուածը սոսկալի հրայրեացքին անհնարին տապէն շոգիներու ահագին կոյսեր ծրաբներ կ'ժայթքէր անդուլ, այն բոցերու կատաղի ծեծկուուքի մէջ այդ շոգիք կ'ծծուէին, մինչեւ որ շատ գարերու ընթացքին այդ գոլորշիացումը հետպհետէ աճելով ծայր աստիճան ուժգնութեան հասաւ, եւ ալ այնուհետեւ շոգիներու մրրիկներ փոթորկիլ սկսան, որոնք յաջողելով յաղթել բոցերու մոլեգնութեան՝ անոնց մէջ չ'էին լուծուեր բոլորովին և բոցազանգուեր, այլ մասամբ անոնց մէջէն զօրեղապէս ուլանալով՝ մեքենաներու մէջ ընդ երկար ամրափակ ճնշուած շոգիներու պէս՝ կրցան անոնցմէ վեր սուրալ, անոնց վերեւը սաւառնիլ եւ շուրջանակի պարապատել այն բոցերու կրակեալը, և շոգեաց այդ շարունակ բարդութիւնք այնչափ թանձրացուցին այն շրջապարոյր ամպերը, որ երկիրս արտաքին արեւներէ խափանուած՝ մնաց ալջամղջին մէջ այն ամպերուն տակը, որով որոշ երեւոյթ մը ձեւ մը չ'էր առներ. և իր հրանիւթ էութիւնը կը մնար կերպով մը աներեւոյք եւ անձեւ : Եւ էր « Անպատճառատ » կամ « Պարապ », այսինքն՝ անկարգ վիճակի մէջ, ամեն զարդերէ մերկ, և թափուր ի

բնակչաց : « Եւ խաւար ի վերայ անդնդոց » . վասն զի այն բոցեղէն անհեթեթ ալիքներու մոլեգին ծեծ-կուռքէն՝ իրար ընդհարուելէն՝ իրարու պարուրուե-լէն եւ իրարմէ բացատուելէն՝ ահագին անդունդներ կ'բացուէին անոնց մէջ , այնպիսի ահաբերան և դը-ժոխորովայն . զոր հին փիլիսոփայութիւնը Թոհ=Թոհ և Քաւոս անուանեց : — Այսպէս կ'իմաստասիրէ Գի-տութիւնը եւ կ'պարզէ Գրքին ասացուածը :

« Եւ Հոդի Աստուծոյ շրջէր ի վերայ ջրոց » : Գըր-քին աս յոյժ պարզ եւ կարճ բացատրութիւնը ամ-բողջովին երեւան կ'հանէ իր համառօտութեան մէջ ծածկուած բուն իմաստը , որով լիովին կ'գոհացընէ գիտնոց ամեն դասերը , աստղաբաշխները , բնազննին-ները , երկրաբանները , ևայլն . քանզի ասով յայտնի կ'ընէ թէ , ըսել կ'ուզէ որ՝ Երկիրս ստեղծագործութեան ատեն չ'է թէ մէկէն ի մէկ արդի վիճակով երեւան եկաւ անբնական լինելութեամբ , այլ գիտնոց վարդա-պետած եղանակաւ՝ բնական օրինաց ներքեւ ներգոր-ծուելով . անիկայ խառնակութիւն և ամայութիւն էր՝ սաղմնային վիճակի մէջ , երկիրն ու ջուրը՝ օդն ու շոգին խառն՝ ընդարձակ մունչող ովկիանոս մը , խիտ և ծանր շոգիներով պարապատեալ . և այն շոգինե-րուն՝ այսինքն՝ ջրերուն վրայ Աստուծոյ Հոդին՝ Աս-տուծոյ ներգործական զօրութիւնը կ'ըրջէր , այսինքն՝ կ'զործէր (1) , որ տակաւ յարդ եւ ի ձեւ կերպաւորէր .

(1) Բացատրութեան նոր եղանակ՝ նոր մեկնութիւն մը չ'է այս . Հայ . Եկեղեցին դարերով առաջ հրապարակած է իր այս դաւանութիւնը Շարսկանաց մէջ ի զէմս Հոգւոյն Սրբոյ երգե-լով . « Որ ի վերայ ջուրցն զօրով որեշտակէր զորուած . . . . » և էլք որեշտակածոց որ շրջէիր ի վերայ ջրոց . . . . » : « Որ որուածէն եւ Հօր եւ Որդւոյ ուուն Խորուածնելու է Հորու որուածն եւ այլն :

զայն : — Երջափոխականին դաւանութիւնն ալ այս  
է , եթէ միայն « Կայ եղած զօրուքիւն » անուանածը  
Աստուած է ըսէ , վասն զի ուրիշ անուն չկրնար տալ  
անոր :

Այսքան՝ աշխարհի ստեղծործութեան նախաւոր  
վիճակին վրայ . այսուհետեւ Գիրքը կուգայ վեցօր-  
եայ արարչութեան ստորագրութիւնն ընելու :



## ՎԵՑՈՐԵԱՅ ԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ

Ա. Օր . — Ծննդ. Ա . 3-5 . « Եւ ասաց Աստուած .  
Եղիցի լոյս , եւ եղեւ լոյս . և ետես Աստուած զլոյսն  
զի բարի է . և մեկնեաց Աստուած ի մէջ լուսոյն եւ  
ի մէջ խաւարին , և կոչեաց Աստուած զլոյսն Տիւ եւ  
զխաւարն Գիշեր . և եղեւ երեկոյ և եղեւ վաղորդայն  
օր մի » : — Գիտութիւնը ասոր ալ կ'միաբանի , և կը  
մեկնէ իսկ զայս . Գիրքը չըսէր թէ երկինք՝ այս-  
ինքն բովանդակ աստղային դրութիւնք ի խաւարի  
էին , եւ Աստուած լոյսը ստեղծեց անոնց ամենքը  
լուսաւորելու համար . այլ միայն երկիրս աչքի առ-  
ջեւ ունենալով ջրապատ՝ ամպածածուկ՝ մութ և աղ-  
ջամղջին . կ'ըսէ . «Եւ ասաց Աստուած . Եղիցի լոյս » .  
լոյս ըլլայ : Լոյս ստեղծուի չըսաւ . հրաման ըրաւ որ  
արդէն կայ եղած տիեզերաց լոյսը երկիրի վրայ ալ

ցոլանայ, ծագի. « Եւ եղեւ լոյս ». լոյս եղաւ. լոյսը ծագեցաւ; Այս եղաւ, որովհետեւ մինչեւ այն ատեն երկիրս շրջապատող այն ջրային գոլորշեաց հոծ՝ իրարու վրայ բարդուած թանձքախիտ ամպերը՝ առի չգոյէ հաստատութեան կամ մթնոլորտի՝ անմիջապէս կ'իտանային արտաքին սոսկալի ցրտութենէն, և թօնընկեցք դառնալով հեղեղներու պէս շարունակ կ'թափէին երկրի վրայ, եւ անդէն՝ նոյն հետայն երկրի հրեղէն զանգուածին ահագին տապէն անդրէն գոլորշանալով՝ ահոելի տակնուվրայութիւն մը կ'գործէին, մինչեւ որ այն շարունակական թօնընկեցներէն երկրի մակերեսը տակաւ կեղեանալով՝ երկրագնդոյս ջերմութեան սաստկութիւնը ամրափակեցաւ այդ կեղեւին տակ. և անոր մակերեսին վրայ սկսաւ ջերմութեան սատիճանը ցածնալ. անանկ որ այլ եւս այնպէս բարդ ի բարդ ամպեր չ'էին արտաշնչուեր, և առաջէն եղածներն ալ սկսան թեթևնակ և անօսրանալ. և ահա ան ատեն էր որ անօսրացած ամպերն ի վիճակի եղան արեգական լուսոյն տեղի տալու, որ կրցաւ մասամբ թափանցել անոնց մէջէն երկրի վրայ. այնչափ որ ցորեկ եւ գիշեր ըլլալը կրնար որոշուիլ. ինչպէս հիմա ձմեռուան այն օրերը որ երկինք բոլորովին ծածկուած կ'ըլլան թանձր ամպերով, թէ՛ եւ արեգակը չ'երևիր ցորեկ ատեն, ստկայն արժւը տկար կերպով կ'թափանցէ ամպերուն մէջէն և երկիրը կ'լուսաւորէ մթնշաղ լուսով մը:

« Եւ մեկնեաց Աստուած ի մէջ լուսոյն և ի մէջ խաւարին. և կոչեաց Աստուած զլոյսն տիւ և զխաւարն կոչեաց Գիշեր ։ այսինքն, Աստուած չ'թողուց որ երկրի վրայ այն ինչ ծագող լոյսը խաւարին հետ իրարու մէջ լուծուին, և մութնուլուսի խառ-

նուրդ մը կազմեն։ ինչպէս կ'պատահի արշալոյսի ծագումին՝ ինչպէս նաև արեւամոյին՝ սուղ առենի մը մէջ։ այլ զատեց զանոնք իրարմէ, եւ սահմանեց որ լոյսը զատ տիրէ երկրի, խաւարն ալ զատ։ և լոյսը Ցորեկ՝ խաւարն ալ Գիշեր անուանեց։ — « Եւ եղեւ երեկոյ և եղեւ վաղորդայն՝ օր մի (Եբր. օր առաջին) »։ Ասով կ'աւարտի առաջին աւուր արարչութեան պատմութիւնը։

« Օր առաջին »։ — Գրքին այս տեղ « Որ » անուանածը, այսինքն՝ արաշագործութեան վեց օրերը դրական իմաստով աստղաբաշխական 24 ժամու օրեր չեն իմացուիր։ այլ յոյժ երկար՝ որոշ՝ համաչափ ժամանակամիջոցներ, թերեւս բիւրաւոր և աւելի տարիներու շրջաններ, ինչպէս ստէպ այսպիսի առումներով ի կիր առած են Գիրք Օր բառը, տարի, հազար տարի, յաւիտենականութիւն, ևլն. նշանակութեամբ (Զաքար ԺԴ. 6: Բ. Գետ. Գ. 8: Թու. ԺԴ. 34: Եղեկ. Դ. 5. 6: Սղմ. ԺԹ. 10):

Ունիմք Գրքէն բաւական ապացոյցներ ցուցընելու համար որ Աստուած ի վեցօրեայ արարչութեան հաւանօրէն կ'գործէր այն կարգաւ և օրինօք զորս տպաւորած էր ի նիւթն։ և առ այս՝ շատ երկար՝ մանաւանդ երկարագոյն ժամանակամիջոցներ ըլլալու էին այն օրերը (Տե՛ս ի Քննական Կրօնադիտ. տիպ. Բ. Էջ 87-92)։ — Եւ իրիկուն և առեւ բառերն ալ գործածուած են այն վեց ժամանակամիջոցներուն սկիզբներն ու կատարածները նշանակելու համար։

Կան մեկնիչներ ալ որ կ'ըսեն թէ արարչութեան պատմութեան մէջ յիշուած այն վեց օրերը՝ վեց որոշ տեսիլներ էին, որք յաջորդաբար երեւցան Մովսէսի իրարու ետեւէ, և կամ տարբեր ատեններ,

յորս տեսաւ նա կարգ ըստ կարգէ արարչութեան վեց տարբեր պատկերները, և ինքը իբր օրեր նկատեց, կամ օր ըսելով բացատրեց այն տեսիլներու յաջորդութիւնները:

Բ. Օր. — Ծննդ. Ա. 6-8: Հրամայեց Աստուած որ մինչեւ ան ատեն երկիրս շրջապատող ջրերէն մաս մը (անշուշտ գոլորշացեալ մասերը) երկրիս մակերեսէն վեր բարձրանալով հաստատուն կամարի պէս մթնոլորտ կազմուի. և անանկ եղաւ. անոր համար անիկա ըստուեցաւ Հաստառութիւն կամ Երկինք. որով վարի ջրերուն և վերի ջրերուն մէջտեղը կայանք տռաւ օդը, զատուելով խառնակութեան կոյտէն, որ այնուհետեւ գոյանալիք ամէն նիւթեղինաց և կենսունակ գոյացութեանց ամենահարկաւոր՝ առաջին պէտք ըլլալիք սնունդը՝ կեանքն էր.

Գ. Օր. — Ծննդ. Ա. 9-13: Հրամայեց Աստուած որ երկինքին տակը մնացած վարի ջրերը մէկտեղ ժողվուին և ցամաքը երեւնայ: — Այս եղաւ հաւանականաբար երկրի մակերեսին ո՛ր մէկ մասերուն վեր բարձրանալովն, և ո՛ր մէկ մասերուն ցածնալ խորունկնալ խոռոչանալովը՝ երկրաբանական յեղափոխութեամբ մը. անանկ որ ջրերը ցած տեղերը խորութեալով մէկտեղ ժողվուեցան, և կաղմուեցան ովկիանոսները, ծովերը, լիճերը, գետերը, և բարձրացած մասերն ալ երեւան գալով ձեւացան կղզիները, ցամաքներն ու լեռները: — Երկրաբանք ժայռերուն այլեւայլ խաւերուն այժմու վիճակէն կապացուցանեն թէ երկրիս մակերեւոյթին վրայ այն բարձրանալմերն ու խոռոչանալմերն իրօք եղած են. և աներկբայ ապացոյցներով՝ կ'հաստատեն թէ

Երկրիս մակերեւոյթին վրայ հիմակուտն երեւցած ա-  
մենէն բարձր լեռներէն ոմանք ատենօք ջրերուն  
տակն էին, և իրենց այժմու դիրքերն առած են  
երկրիս մէջ պատահած մեծամեծ և սաստիկ ցըն-  
ցումներէ :

Այսպէս ջրերը ցամաքէն քաշուելով ետքը ցա-  
մաքը Աստուծոյ հրամանովը տեսակ տեսակ բոյսեր  
յառաջ բերաւ անմիջապէս, դալարիք, խոտ և ծառ,  
սերմերնին լրենց մէջ ունենալով, որոնք կոյս երկրի  
առաջին երկանց ամենահիմնեղ բեղմաւորութենէն  
արգասաւորուած արտադրուած ըլլալով՝ անանկ հրա-  
կայ աճունաճիւղ բուսեղէններ եղան՝ արդի ծառե-  
րէն և անտառներէն յոյժ բարձր և թաւախիտ, որ  
բոլոր տիեզերքը միապաղաղ անտառացուցին, որոնք  
ետքէն երբ երկրաբանական նոր յեղափոխութիւննե-  
րով գետնի խորագոյն՝ առաջին խաւերուն մէջ թաղ-  
ուեցան մնացին, քարանալով՝ հանքածխոյ անսպա-  
ռելի մժերք նիւթեցին երկրիս բնակչաց շատ հա-  
րիւրաւոր և հազարաւոր տարիներու բաւականաշափ :

Դ. Օր. — Գիրքը այսօրուան համար կ'ըսէ. Ծնն.  
Ա. 14—19: «Եւ ասաց Աստուած եղիցին լուսաւորք  
ի հաստատութեան երկնից ի լուսաւորութիւն ի վե-  
րայ երկրի, և եղիցին ի նշանս, և ի ժամանակս, և  
յաւուրս. և ի տարիս. և եղիցին ի լուսաւորութիւն  
ի հաստատութեան երկնից՝ ծագել յերկիր. և եղե  
այնպէս: Եւ արար Աստուած զերկուս լուսաւորսն ըզ-  
մեծամեծս. զլուսաւորն մէծ՝ յիշխանութիւն տունջ-  
եան, և զլուսաւորն փոքր յիշխանութիւն գիշերոյ;  
և զաստեղս. և եղ զնոսա Աստուած ի հաստատու-  
թեան երկնից լուսաւոր լինել յերկիր. եւ իշխել

տունջեան և գիշերոյ, և մեկնել ի մէջ լուսոյն և ի  
մէջ խաւարին. և ետես Աստուած զի բարի է, և լնո :  
— Այս խօսքերը եթէ ուզէ ոք բառական խմաստով  
պառուղ, իբր թէ արեգակը լուսինը և աստղերը  
մինչեւ այն ատեն դեռ ստեղծուած չ'էին և պրարչու-  
թեան այս չորրորդ օրը ստեղծուեցան, ասիկա թէ՝  
Դիտութեանց և թէ՝ Կրքին առաջէն զրուցած խօս-  
քերուն դէմ կ'ըլլար. ինչու որ Գիրքը առաջ ըսած  
է, ինչպէս վերը յառաջ բերինք : « Ի սկզբանէ ա-  
րար (ստեղծ) Աստուած զերկին և զերկիր » : Զերկին,  
այսինքն երկնային մարմինները, արեգակը՝ լուսինը  
և աստղերը, և անոնց հետ երկիրս, որ երկինքի՝  
այսինքն երկնաւոր մարմիններուն մէկ մասն է. Ա-  
սուց ամենը մէկեն ստեղծեց Աստուած Սկիզբէն և ոչ  
ետքէն՝ ուրիշ ուրիշ պատեններ . Անոր համար այս  
չորրորդ աւուր արարքին նկատմամբ չ'ընէր « ստեղ-  
ծեց », այլ կ'ըսէ. Աստուած հրաման ըրաւ որ « Ե-  
ղիցին » լուսաւորք ի հաստատութեան երկնից » .  
չ'ընէր նաև երկնից տարածութեանը մէջ . այլ ի հաս-  
տառութեան երկնից, այսինքն երկրի վերեւը նոր կազ-  
մուած հաստատութեան մէջ, որով կ'հասկցուի՝ ինչ-  
պէս առաջին օրուան արարչութեան կարգին բարձր՝  
թէ երկիրս իր լինելութեան սաղմնային վիճակին  
մէջ ամպերու թանձր մառախուզով վարագուրուած  
ըլլալով՝ աղջամղջին խաւարը կ'ափէր անոր վրայ ,  
և այն առաջին օրը Աստուծոյ հրամանաւ արեգական  
լոյսը տկար կերպով այնչափ միայն կրցաւ թափան-  
ցել ամպերէն և աղօտանչոյլ լուսաւորել երկիրս, որ  
չորեկը գիշերէն զանազանուէր. բայց դեռ ևս արե-  
գակը տեսանելի չ'էր երկրի, անոր վրայ թանձրա-  
ցած մառախուզովներուն պատճառաւ . չորրորդ օրյ միո-

այն (որ մինչև այն ատեն երկրիս մակերեսը պատած կեղեւին բաւական թանձրանալէն ջերմութեան աստիճանը բարեխառնութեան իջած էր, և ջրոց այն արտաքոյ կարգի արագ գոլորշացումը իսպաս դադրած էր. որով և ամենեւին ի բաց ֆարատուեր էր երկրի երեսէն այն խաւարաբողը մառախուղը), առեգակը սկսաւ հաստատութեան մէջ որոշ և պայծառ ծագել դիշերն ալ լուսինը և աստղերը սկսան պարզ և յստակ տեսնուիլ:

Այս չորրորդ օրուան պատմութեան 16 համարին « Եւ արար Աստուած զերկուս լուսաւորս » խօսքին մէջ եղած « արար » բառը՝ երրայեցերէն բնագրին « Ի սկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր » խօսքին մէջ գործածուած « արար » (ստեղծեց) բառը չ'է. անկէ տարբեր բառ մ'է. որ Հայերէն գրաբառին մէջ արար թարգմանուած է, բայց կ'նշանակէ բռաւ, դրաւ, կարգեց, սահմանեց. ինչպէս որ հետեւալ 17 համարին մէջ յայտնապէս կ'ըսէ. « Եղ զնոսա Աստուած ի հաստատութեան երկնից, լուսատուլինել յերկիր » : Կամ ուրիշ կերպով պարզեմք խօսքը: Աստուածաշնչին երրայեցերէնէն թարգմանուած աշխարհաբար օրինակներուն մէջ այսպէս կ'կարդամք. առաջին համարին մէջ « Ոկիզբէն Աստուած երկինքն ու երկիրը ստեղծեց » . իսկ այս 16 համարին մէջ « Աստուած երկու մեծ լուսաւորները ըրաւ » . չ'է թէ առաջին համարին պէս՝ ստեղծեց. թէ եւ մեր գրաբար թարգմանութեանց մէջ երկուքն ալ արար թարգմանուած են՝ անշուշտ տարբեր առումներով, ըստ որում հոմ բառ է: Այս ըսել է թէ այդ երկնային մարմինները երկրիս բնակչաց համար այն օրուընէ սկիզբն առին կատարել իրենց երեւութական պաշ-

տօնները. այն « Մեծ լուսաւորը »՝ արեգակը սկսաւ ցորեկուան իշխել, այսինքն՝ կանոնաւոր կերպով ելալով ու մտնելովը՝ օրուան սկիզբն ու վերջը աւելի որոշ կերպով ցուցընել, եւ իր լուսոյն և ջերմութեան ազգեցութիւնը երկրիս վրայ տարածել. անոր ջերմութեան աւելնալն ու պակսիլն ալ նշան եղաւ տարւոյն եղանակները որոշելու. իսկ « Պղտիկ լուսաւորը » լուսինը սկսաւ գիշերուան իշխել, ոչ միայն խաւարը մեղմացնելով, այլ և իր պէսափս լուսնական երեւոյթներովը տարւոյն աւելի մանր բաժանումները՝ ամիսները որոշելու ծառայելով։ Այսպէս արեգակը՝ լուսինը և աստեղք իրենց պէս պէս երեւումներովը և շարժումներովը նշան եղան ժամանակին այլ և այլ բաժանումները՝ օր, ամիս, տարի որոշելու։

Այս 16 համարին մէջ թերեւս աչքի զարնէ նաև « Եւ արար Աստուած զերկուս լուսաւորս զմեծամեծս » խօսքը՝ իբր անտեղութիւն կամ ձախող բացատրութիւն նկատմամբ միւս աստեղաց. բայց այդպիսի բան չ'կայ։ Գիրքը աս ըսելով՝ արեգակը և լուսինը իրական բաղդատութեան չ'հաներ միւս աստղերուն հետ։ ոչ ալ արեգակը և լուսինը՝ միմեանց հետ։ չ'ըսեր արեգակը և լուսինը միւս աստղերէն խոշոր են, այլ երկրիս բնակչաց տեսութեան առջեւ այս երկուքին միայն խոչըրագոյն երեւնալու առերեւոյթ բաղդատութիւնն է որ ի հանդէս կը բերէ. և այս մասին ալ ճիշդ գտնուելով՝ արեգակը և լուսինը հաւասար մեծութեամբ համաչափ չ'նկարագրեր, այլ անոնց ևս խտիր կ'գնէ « Զլուսաւորն մեծ » և « Զլուսաւորն փոքր » ըսելով։

Ե. ՕՐ. — ԾՆՆԴ. Ա. 20—23, բոլոր ջրային կեն-

դանիները՝ ձկները, և օղային հաւերը՝ թռչունները, եւ

Զ. Օրը. — Մննդ. Ա. 24—27, ցամաքային կենդանիները, սողունները, ընտանի չորքոտանիները և վայրի գազանները երեւցան, և ամենէն վերջն ալ մարդը:

•••••

## ԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱՐԱՆԱԽՈՐ ԷԱԿԱՑ

Դրքին մէջ՝ գործարանաւոր էակաց լինելութեան եղանակները բոլոր միւս արարածոց լինելութեան եղանակներէն տարբեր կերպերով կ'նկարագրուին: — Առջի չորս օրերուն մէջ գոյութեան եկող բաները պյնպէս մը կ'ստորագրուին, որ՝ թէ՛ և անոնց լինելութեան եղանակին մէջ յայտնապէս կ'տեսնուին Աստուածային կամաց և կարողութեան ներդործիչ ազդեցութիւնք, բայց այն գործողութիւնները իբր նորոգ ստեղծումներ չ'են նկատուիր. այլ արդէն ըստեղծուած բաներու իբր տնօրէնութիւնները, այսինքն՝ անոնց մէջները կամ վրաները կատարուած փոփոխութիւնները: Զորօրինակ. Առջի օրուան գործը հաւանականօրէն լոյս ստեղծել չ'էր, այլ տիեզերաց միւս մասերուն մէջ արդէն կայ եղած լոյսը բերել կամ թափանցել տալ էր երկրիս երեսը. Երկրորդ օրուանը՝ երկրիս մէջ կայ եղած օդին և ջրոյն իրար-

մէ բաժնուելով երկնից հաստատութեան կազմուիլն էր . Երրորդ օրուանը՝ երկրիս մէջ կայ եղած ջրերուն և ցամաքին իրարմէ զատուիլն էր , և Զորրորդ օրուանն ալ արդէն կայ եղած արեգական՝ լուսնի և աստեղոց իրեն լուսաւորներ երկնից հաստատութեան մէջ իրենց յատուկ պաշտօնները երկրիս նկատմամբ սկսելնին էր : Բայց Հինգերորդ և Վեցերորդ օրերու պատմութեանց մէջ չնշաւորաց սկզբնաւորութիւնք Աստուածային ստեղծագործ կարողութեան մասնաւոր մէկ ներգործութեանը կ'ընծայուին յատկապէս : Արդարեւ այս տեղ ալ կ'ըսուի թէ Աստուած հրաման ըրաւ որ ջրերը ձկներ հանեն իրենց մէջ , օդին մէջ թռչուններ թռչին . և երկրի վրայ անսառւններ շատնան , բայց կ'երեւի թէ այս խօսքերը կ'վերաբերին՝ չ'է թէ անոնց արարչութեան կերպին , այլ անոնց ապրելու՝ շարժելու կամ բնակելու տեղերու և տարրներուն . ըստ որում առաջին անգամ երկնքի և երկրի ի չգոյէ արարչութիւնը պատմելու ատեն գործածած « Արար » ստեղծեց բառը այս տեղ ևս մէջ բերելով չնշաւորաց արարչութեան կերպը՝ եղանակը յայտնի կ'ընէ ու կ'ըսէ . « Եւ Աստուած նտեղծեց մեծամեծ կետերը , և ամեն սողացող չնշաւոր կենդանին՝ որ ջրերը հանեցին անոնց տեսակին պէս ; » ու ամեն թեւանոր թռչունը իր տեսակին պէս > ևայլն . որով պարզապէս կ'տեսնուի թէ այն չնշաւոր կենդանիները ստեղծագործութեան մասնաւոր ներգործութեամբը ի գոյութիւն եկան :

Երկրաբանութիւն ; Ինապատմութիւն ; Կենդանաբանութիւն ; ևայլն , իբրեւ դրութիւն բան մը չեն կրնար սահմանել և զբուցել այս մասին . բայց մեծ գիտուններ բանականութեան անյեղլի օրինաց տրա-

մարանութեան հետեւելով կ'համաձայնին Գրքին այս  
ըսածներուն։ Տարուին արձակ համարձակ կ'խոստու-  
վանի զայս՝ ըսելով։ « Տնկոց և կենդանեաց կեանքը  
յառաջ եկած է կենդանի սերմերէ, և առաջին կեն-  
դանի սերմը գոյացած է Երամանաւ ամենիմաս արար-  
չին ամենայնի »։ — Եւ այսպէս պէտք էր ըլլալ։  
վասն զի Գիտութիւնք կ'ըսեն թէ՝ անշունչ անդդայ  
նիւթը՝ հողը՝ գործարանաւորութիւն, շունչ, կեանք,  
զգայութիւն չ'եր իրնար աւլ ինքնիրՄէն՝ իր ծնունդ-  
ներուն . ծնեալը՝ ծնողին կատարելութիւններէն բար-  
ձրը կատարելութիւն չ'կրնար ունենալ . ծնողը իր  
ունեցած կատարելութիւնները միայն կրնայ ածան-  
ցել իր ծնունդին, չ'ունեցած կատարելութիւնը չը  
կրնար տալ անոր . հետեւաբար այն գործարանաւոր,  
զգայուն, գնայուն, կենդանի արարած Աստուծոյ ըս-  
տեղծագործ զօրութեամբ հարկ էր ի գոյութիւն  
գային։

Մարդուն սկզբնաւորութիւնն ի՞նչպէս եղաւ .— Գի-  
տութիւնք ասոր վրայ ալ բոլորավին կ'լոեն . տիեզե-  
րաց վրայ մարդ էակը գոյութիւն չ'ունեցած ատեն՝  
մարդը ուսկի՞ց սերեցաւ կամ գոյացաւ և կենդանա-  
վառեցաւ . ասիկայ ոչ մէկ բնական Օրէնք կամ Գի-  
տութիւնք կրնան ի վեր հանել եւ պարզել . բայց  
մեծ գիտուններ՝ Տարուինի պէս խոստովանած են՝  
որ առաջին մարդն ալ հրամանաւ Արարչին ամե-  
նայնի գոյացաւ։

Կան՝ գիտունի հովեր առնող յաւակնոտներ, տե-  
սակ մը վայրաբան արքեխօսներ, որ Կրօնքին ամեն  
ուսուցածներուն հակասելու մոլեգնութեամբ՝ Գրքին  
զրուցածէն այլապէս արքեխօսնելու կ'ելնեն իրենց  
քմահաճոյից հետեւելով, եւ այլազգ սկզբնաւորու-

թիւններ կ'դնեն մարդուն ալ, անասնոց ալ, շատ այլանդակ և շատ արտառոց ենթագրութիւններով։ որոնք Գիտութիւններէն իրբև ճշմարտութիւն ընադունուած սկզբունքներուն ալ ամենեւին կ'հակասին։ — Ասոնցմէ ոմանք կ'ըսեն՝ թէ օդին, ջրերուն եւ գետնի հողերուն մէջ սկիզբէն անհամար մանրէներ՝ միզոռաներ, լինելով նիւթին նիւլիներուն պէս անհամար տեսակներով, անոնցմէ յառաջ եկած են ասունք և անասունք, մարդիկ ալ կենդանիք ալ։ Բայց այս կեղակարծ ենթագրութիւնը սա անպատեհութիւնը ունի՝ որ խնդիրը չ'լուծեր խնդրոյն բնութիւնը միայն կ'փոխէ։ Խնդիրը աս չ'էր թէ՝ ասունք և անսունք անասնիկներէ կրնա՞ն ծնանիլ՝ թէ ոչ։ այլ թէ Կեանիք ի՞նչպէս աշխարհի մօաւ։ Արդ, եթէ մանրէք եղած են անասնոց սկիզբ՝ կեանք տուող, մանրէք իրենք իսկ անասնիկներ ըլլալով՝ իրե՞նք ուսկից եղան։ ուսկի՞ց սկիզբ կեանք առած են։ այս խնդիրը անլուծելի մնացած է։

Ասկէց աւելի այլանդակութիւն ըսողներ ալ եղեր են՝ մանաւանդ մարդոց սկզբնաւորութեան մասին։ — Լամէթրի կ'ըսէ թէ՝ Երկիրս համապարփակ շուրջ պատող ջրերը երբ որ կամաց կամաց քաշուելով ցամաք երկիրը երեւան ելաւ, առաջէն այն ջրերուն մէջ լուղացող ձկները հաւկիթներ ածած ըլլալով՝ ջրերուն քաշուած ատեն անոնք ցամաք երկրին վրայ մնացեր էին, թերեւս աւազներուն մէջ թաղուած, որոց վըրայ արեգական ճառագայթները թումասի ջերմութեան ներգործութիւնն ընելով՝ այն հաւկիթներէն ելան մարդավառեակներ։ ինչպէս կոկորդիլամի հաւկիթները Նեղոսի աւազներուն տակ կ'թխսուին և անոնցմէ կ'ելնեն տիտեռնաձագեր։ և հաւանականաբար

այն հաւկիթները իրենց մէջ ամբարուած ունէին անոնց մանկութիւնը սնուցանելու համար բաւական կաթ։ Եթէ Գիրքը այսպէս նկարագրած ըլլար մարդուն ծննդաբանութիւնը. Լամէթրի արդեօք պիտի հաւանէ՞ր անոր ; պիտի ընդունէ՞ր զայն իրքեւ ճշմարտութիւն. ո՞չ ապաքէն իրքեւ անքնական խայտառակ մասալ մը՝ առասպել մը պիտի մերժէր. և սակայն հիմա ինքը այսպէս կ'վարդապետէ, Գրքին հակառակ խօսելու համար : Թո՛ղ այնպէս ըլլայ, սակայն ինքն ալ բուն խնդիրը չը լուծեր : Մարդը ձկան հաւկիթէն ծնաւ նէ՝ այդ ձուկ ըսուած կենդանին ուսկի՞ց ծնաւ՝ կեանք առաւ. կեանքը ի՞նչպէս մտաւ աշխարհք : — Առայժմ թողումք այս ինդիրը Լամէթրիի, որ եթէ կրնայ՝ իր կերպովը լուծէ. մենք նայինք թէ Բնական Գիտութիւնք՝ Բնապատումք եւ Արքեխոսք կ'ապացուցանե՞ն իր ըսածները, կամ գէթ իրքեւ հաւանական կ'ընդունի՞ն. Բնական Պատմութիւնը կ'ըսէ՞թէ ԶՈՒԱԾԻՆ անասնոյ հաւկիրէն ԿԵՆԴՐԻՆԱԾԻՆ ասուն կամ անասուն կ'ծնանի : Գիտութիւնը կ'ընդունի՞թէ հաւկին հաւկիթէն արծիւ՝ որոր, կամ ոչխար՝ առիւծ կ'ծնանի. ի՞նչպէս ուրեմն կենդանածին բանական մարդը ծնանի անբան ձկան կամ ո՛ և է ձուածին անասնոյ հաւկիթէն : Մարդիկ եթէ ձուերէ յառաջ եկան ; իրենք ալ ձու պիտի ածէին եւ ձուածին պիտի ըլլային. բայց անոնք ձու չ'են ածեր, եւ կենդանածին են . բնութիւնը կ'ընդունի՞ զայս : Եւ դարձեալ, այդ հաւկիթը ո՞րչափ կաթ կրնար պարունակել, և ո՞րչա՞ի հարկ էր պարունակել իր մէջ, որ նորածինին մանկութեան գէթ առաջին քանի մը տարիները՝ այսինքն՝ մինչեւ ակռաններուն բուսնելու և քալել սկսելով օրապահիկը ինքնին ճարել, կրնա-

լու ատենը սննդեանը բաւէր։ Եւ ո՞րպիսի անբնական կամ գերբնական կաթ ըլլալու էր այդ՝ որ առանց տարրադաղրուելու՝ աւրուելու՝ այնչափ երկաք ատեն դիմանար կենար։ — Աս ալ ինչո՞ւ չ'յիշեմք։ Անասնոց կենդանեաց ամեն տեսակներուն ձագելն ալ՝ շատ քիչ բացառութեամբ՝ ինքզինքնին քիչ շատ վարել կրնալու վիճակին մէջ ծնանելով և իրենց ծընողաց խնամոց շատ քիչ կարօտ կամ անկարօտ գըտնուելով հանդերձ իրենց ծնողաց խնամոց տակ կ'ծընանին։ Իսկ մարդոց ծնունդներն որ իրենց մանկութեան ատեն տարիներով ծնողական խնամոց կարօտ կը գտնուին՝ առանց ամենեւին բացառութեան, ի՞նչպէս կրնային ապրիլ և սնանիլ և զարգանալ իրենց կաթնամբար հաւկիթակեղեւներուն մէջ անխնամ՝ յորսայս ընկած, ցրտէն և տաքէն՝ սառէ եւ խորշակէ անվնաս ! ! :

Անտարակոյս Գիտութիւնք չ'են պատասխանառու Լամէթրիի այս աղճատաբանութեան։

Հսողներ ալ եղեր են թէ՝ մարդիկ սերեալ են Օրանկութանկ կամ Մարդակերպ ըսուած կապիկներէ։ Ուրիշներ ալ ըսեր են թէ՝ մարդոց նախնիք կապիկ էին, և բարեշրջումով տակաւ բանավարութեան գտնով մարդ եղան։ — Բնական Գիտութիւնք կ'ապացուցանե՞ն զայս։ Գիտութիւնք կ'ըսե՞ն թէ՝ անասունեն։ առուն, անբանեն՝ բանական կ'ծնի, կամ անասունը՝ առուն, անբանը բանական կ'դառնայ։ Բնա՛ւ ամենեւին։ բնական օրէնք ատանկ բաներ չ'են կրնար գործեր։ բայց և այնպէս Լայէլի պէս երեւելի Երկրաբանն ալ չ'գիտեմք թէ ի քո՞ւն թէ արթուն՝ համակարծիք գտնուեր է այս խելառներուն, և՝ թէն գոյթ ի գայթ ըսեր է թէ կրնայ մարդս՝ այս կեր-

պով յառաջ եկած ըլլալ, անշուշտ Գրքին հեղինակութիւնը դերեւելու մարմաջով, վասն զի այլուր (իւր «Հնախօսութիւն մարդոյ» անուն գրքին մէջ Առն-  
quity of Man. ch. 24) այս ցնորաբանութեան յիմա-  
րութիւնը կ'քաւէ և կ'ըսէ . Այսպիսի գիպուած մը  
« ԱՆՌԱՑԱՏՐԵԼԻ ԴԱՂՑՆԻՔ » է . և « Աս փոփոխու-  
թիւնը՝ որով անասունը մարդ եղաւ՝ այնպիսի փո-  
փոխութիւն է որ առջի էակին (անասունին) և ետքի  
էակին (մարդուն) մէջ տեղ նոյնուրեան կապը կ'խղէ» :  
Ահա ի՞նչպէս գիտուն մարդիկ ալ (1) Գրքին հեղինա-  
կութիւնը դերեւելու եռանդէն մղուած՝ գիտունի ե-  
րեսով Գիտութիւնները կ'պղծեն . Գիտութեանց և ի-  
րենց իսկ դաւանած սկզբանց հակառակ խօսելով : —  
Գիտութիւնք կ'ըսեն . Այլայլախառն անասնոց ծնունդը  
սերնդականութիւննին կ'կորսնցընեն . ինչպէս ջորիք.  
տարածեն հաւերու տակ թիտուած կամ փուան մէջ  
տաքցուելով ծնած հուերու տեսակներ՝ թուխս նըս-  
տելու յառակութիւննին կ'կորսնցընեն, նոյնպէս նաեւ  
իրարու պատուաստեալ տարբեց ծառերու պտուղներ՝  
սերմնակորյոս կ'ըլլան . կամ սերմերնին անարգասա-  
ւոր կ'դառնան եւ չ'են կընար բուսնիլ եւ պտուղ բե-  
րել : Մա՞րդը ինչպէս սերնդականութիւնը չ'է կոր-  
պնցուցեր՝ պահէեր է, եթէ երբէք անասնէ սերուած,  
փոխակերպուած կամ պատուաստուած է :

Երկրաբանութիւնը ո' և է փաստ չընծայեր մար-

---

(1) Մըր Զարլս Լալէլ՝ նշանաւոր երկրաբան է . բայց յոյժ վաղվաղկոտ, ամեն անզամ աճապարանօք կ'ընդունի անանկ եզրակացութիւններ, որ ետքէն ինամօք քննուելով մերժելի կը գտնուի . Ասոնց մէկ քանի օրինակները ետքերը պիտի տես-  
նեմք :

դոյս կապկէ կամ ուրիշ անասնէ մը սերելուն կամ փոխակերպուելուն ի նպաստ։ Թողումք կապկին երեսիվայր քայլելը, բրդու մարդը ուղիղ եւ քառածեռնեան լինելը, մինչդեռ մարդը ուղիղ կանգուն կ'քայլէ, լեշկմաշկով, երկծեռնեան և երկոտանի է, որ այս տարբերութիւնք անմիանալի կերպով կ'հեռացընեն սեռերն իրարմէ։ Թո՛ղ ասոնց համար ալ եական օարբերութիւնն չ'են ըսեն։ բայց մեծ գիտուններ աւելի որոշ վճռական տարբերութենէ կ'ձեռնարկեն։ Հըքսլէյ և Տէյնս կ'հաստատեն թէ Մինչև հիմա գտնուած մարդկային ամենէն հին գանկերը այս դարուս եւրոպացոց գանկերուն հետ համեմատուելով՝ միջին են մեծութեամբ։ « Մինչեւ ցարդ գտնուած գանկերուն մէջ ամենէն ստորինը՝ կ'ըսէ Հըքսլէյ, չ'կրնար անանկ էակի մը մնացորդ համարուիլ, որ մարդու և կապկի մէջ տեղ ըլլայ։ » (Dana's Abridged Geology. p. 238)։ Ամերիկայի Երկրաբաններէն և Կենսաբաններէն նշանաւորագոյնը՝ բրոֆ. Տէյնս, կ'ըսէ։ « Մարդակապկին որ իւր կազմուածքին կողմանէ նըմանագոյն է մարդոյ՝ ունի մարդուս ուղեղին հազիւ կիսուն չափ ուղեղ, և մարդը մարդակապկին հետ միացընող օղակ մը գտնուած չ'է։ Երկրաբանական քըննութիւններէն կ'սորվիմք որ մարդ, կենսական արարածոց գլուխը շատ հեռու եւ անջատեալ կ'մնայ անասնոց մէջ մարդու առաւելագոյն նմաններէն։ » (Անդ էջ 262)։ — Գիրքն ալ ճիշդ ասանկ կ'ըսէ։ Բոլոր անասուններուն մէջ մարդուն օդնական ըլլալու համար մէկը չ'գտնուեցաւ « Իրեն նման ». (Ծննդ. թ. 20)։

Կապիկը բարեւցումով մարդ չ'կրնար ըլլալ, բայց մարդը յուրեւցումով կրնայ կապիկ ըլլալ, կ'ըսէ Գիւ-

տութիւնը. և քանի՛ որ Օրանկութանկք՝ Մարդակերպք և ամեն տեսակ անասունք սկիզբէն գոյութեան եկեր էին սկզբնական նիւթէն, հողէն, կայ եղած զօրութեամբ մը, ինչպէս կ'ըսէ Շըջափոխականը, ինչո՞ւ համար մարդն ալ այդ կայ եղած զօրութեամբ նախնական նիւթէն՝ հասարակաց մայր հողէն գոյաւորած չ'ըլլայ, և անրնական՝ բնական օրինաց հակառակ եղանակաւ անասնէ մը փոխարկուելու ածանցուելու կամ սերելու հարկին տակ գտնուի. ի՞նչ ապացոյց կայ որ միայն մարդ էակը անասնէ մը գոյութիւն առնելու կամ անասնէ մը մարդ փոխարկուելու անազնուականութեան ճակատագրին տակ ինվեր է, մինչ բոլոր անասունք իրենց տեսակներուն մէջ՝ իրենց համասեռ ծնողներէ գոյութեան գալու ազնուականութեան մենաշնորհիւ օժտուած էին : — Ծ'ն անդր. շատ այլանդակ է այդ. անասնասեր ազնուականութեան անփառունակ փառասիրութիւնը տածողներ կրնան այդ անպատիւ տենջանքն ունենալ (<sup>1</sup>). մարդածին մարդը գիտէ յարգել և գնահատել իր գոյութեան վաեմապանծ ծագումը :

Մարդը ի՞նչ եղանակաւ ալ գոյացած ըլլայ՝ ի սկզբանէ անտի էր մարդ. չ'կրնար ըլլալ որ սկիզբէն անասուն ծնած եւ ապա ասուն գարձած ըլլայ. բոլոր Գիտութիւնք կ'հակառակին ասոր. բնութեան օրէնքները իսպառ կ'մերժեն կ'ժխտեն այս կեղակարծ ենթագրութիւնը, որ միայն Գրքին ըսածներուն հակառակելու համար մէջտեղ նետուած է. և արգարանալու կամ հաւանական երեւելու բնաւ ապացոյց

(1) Ինչպէս մարգարէն ըսած էր. « Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից եւ նմանեաց նոցա »: (Սաղմ. ԽԲ. 13, 21):

չունի : Որդը՝ թրթուրը՝ թիթեռնիկ կ'ըլլայ, քանզի բնութիւնը առ այն կ'տանի զայն . բայց օձը արծիւ կամ բոտոտը բազէ չ'ըլլար, բնութեան օրինաց հակառակ է : — Հիները ասսանկ ենթաղբութիւնները եղջերուախաղ կ'անուանէին . մենք ալ այս տեղ անոնց իմաստութեան հետեւող կ'ըլլամք, եւ աղէկ կ'ընեմք,

Հիմայ Գրքին դառնամք . նայիմք Դի՞րքը ինչ կ'ըսէ մարգուն արարչութեան նկատմամք . « Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ » (Ծննդ, Բ. 7) . Տէր Աստուած գետնի հողէն ստեղծեց մարդը՝ կ'ըսէ : բայց այս խօսքէն չ'հասկցուիր թէ ի՞նչ եղանակաւ կերպաւորեցաւ մարդը . Աստուծոյ անմիջական դործողութեամբը, թէ բնական օրինաց ներգործութեան տակ : — Որովհետեւ արարչութեան պատմութեան մէջ մինչեւ մարդուն ստեղծումը տեսանք որ ամեն տեսակ էակներ՝ բոյս, անասուն, եւայլն, բնական օրինաց տակ ներգործուելով ծնոնդ առած են, իրաւացի պատճառ մը չ'ունիմք ենթաղբելու թէ միայն մարդ էակը բնական օրէնքէն վեր՝ այլապէս սկիզբ առած գոյացած ըլլալու է . ընդհակառակն ունիմք զօրաւոր պատճառ՝ Գրքին խորհրդաւոր մէկ ակնարկը՝ հաստատելու թէ մարդն ալ ամեն գործարանաւոր էակաց պէս նոյն օրէնքներով ներգործուեր կազմուեր շինուեր է : — Սաղմոսաց մէջ տեսակ մը նկարագըրութիւն կայ մարդոյս կազմաւորութեան մասին, որ շատ ուշադրութեան արժանի է . եւ հաւանօրէն լոյս կ'սփռէ այս խնդրոյս վրայ . « Ո՛չ թաքեաւ ոսկը իմ ի քէն՝ զոր արարեր ի ծածուկ . և կար զօրութեան իմոյ ընդ ստորինս երկրի : Զանգործս իմ տեսին աչք քո, և ի գիրս քո ամենեքեան գրեցան, ի տուէ մողորեցան, և ոչ ոք էր որ առաջնորդէր նոցա » . (Սղմ.

Ճ. 15—16): Այս խօսքերը պէտք եղածին չափ բացայայտ չ'են արդարև մեր գրաբար Աստուածանչին մէջ, որ Եօթանասնից յունարէն թարգմանութենէն թարգմանուած է<sup>(1)</sup>. բայց Աստուածանչի Ընկերութեան Եբրայական բնադրէն թարգմանել տուած աշխարհաբար թարգմանութեան մէջ բացայայտ են, և խօսքին բուն իմաստը երեւան կ'հանեն. « Իմ գոյութիւնս չ'ծածկուեցաւ քեղմէ, երբ որ գաղտուկ տեղը շինուեցայ, երկրի խորութեանցը մէջ ճարտարութեամբ կազմուեցայ: Թու աչքերդ իմ անկատար կազմուածքս տեսաւ, եւ անդամներուս բուրը քու Գրքիդ մէջը գրուած էին, երբ անոնցմէ դեռ մէկը չ'կար, և ժամանակին պիտի կազմուէին » (Խղմ. Ճ. 15—16): Աս խօսքերը սա իմաստը կուտան մեզ, որ մենք մեր ակզրնաւորութեան մէջ ներքին զարմանալի կապակցութիւն մ'ունիմք բնութեան նիւթական դրութեան հետ. « Երկրի խորութեան » հետ, ուր « Ճարտարութեամբ կազմուեցանք »: Այս « Երկրի խորութեանցը մէջ ճարտարութեամբ կազմուեցայ » խօսքը յայտնի կ'ընէ՝ թէ բոլոր այս պարբերութեան խօսքերը մարդոյս բնական ծննդարանութեան չ'են նկատեր, այլ անոր նախնական սկզբնա-

(1) Մեր զրաբար եւ աշխարհաբար Սաղմուտաց զիխակարգութեանց մէջ տարբերութիւն կայ. Ժ.րդ զիխէն մինչեւ Ճ.է. ըդ զուխը զրաբարնիս որ Եօթանասնից Խարգմանութենէն Խարգմանուած է՝ մէկ զրովս ետ կ'մնայ աշխարհաբարէն, որ Եբրայեցերէնէն Խարգմանուած է, Եօթանասնից Խարգմանութեան մէջ Թ. եւ Ժ. զուխները միացուած ըլլալուն համար. ուստի Սաղմուներէն վերը յառաջ բերուած վկայութիւնը՝ զրաբարին մէջ Ճ. զուխն է, իսկ աշխարհաբարին մէջ Ճ. զուխը:

ւորութեան, առաջին անգամ գոյակերպուելու եղաւ նակին. առկից ալ հասկցուածը աս է որ՝ ինչպէս միւս գործարանաւոր էակները՝ տունկերն ու անաստնները Աստուծոյ հրամանաւ կազմուեցան երկրի խորութեանցը մէջ, հողէն, և Աստուածային արարչական զօրութենէ ներգործուելով կեանք ստացան, այսպէս մարդն ալ Աստուծոյ հրամանաւ հողէն կազմուեցաւ երկրի խորութեանցը մէջ՝ գաղյուկ տեղը, և Աստուածային արարչագործ զօրութեամբ կեանք ստացաւ:

Բայց մարդս բուսոց եւ կենդանեաց պէս կեանք և զգայութիւն ունենալէ զատ՝ դերազանցապէս գերազանց ուրիշ յատկութիւններ՝ առաւելութիւններ ալ ունի, անո՞նք ուսկից՝ եւ ի՞նչպէս ունեցաւ. բնական ի՞նչ ներգործութեամբ այս հողածին անբանը՝ բանական, անմիտը՝ մնաւոր, անկամը՝ կամեցող, անասունը՝ ասուն, և անզօրը՝ զօրաւոր եղաւ կամեցածը գործադրելու (թո՛ղ ատիկայ կ'ուզէ կամէթրիի հաւկթածինը լինի, կ'ուզէ նէ լայէլի որդեգրած Օրանկութանկասերը լինի): — Բնական Գիտութիւնք բան մը չ'են ըսեր և չ'են կրնար ալ ըսել այս հարցերու մասին. Գրքին ըսածին գէմ ալ չ'են կրնար առարկել, ոչ ալ հերքել զանոնք բնական փաստերով կամ՝ ապացոյցներով, Ուրեմն Գրքին ըսածներուն նայիմք. « Եւ ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ, և փըսեաց յերեսս (Եբր. յոնգունս) նորա շունչ կենդանի, և եղեւ մարդն յոգի կենդանի » (Ծննդ. թ. 7.): Բնաւ մեկութեան կարօտութիւն չ'ունի այս խօսքը. ինքնին պարզ՝ բացայայտ է. կ'ըսէ թէ՝ Աստուած իր նորակերտ արարածին վրայ ուղղակի ազդելով իր ստեղծագործ զօրութիւնը, անոր քթին ծակերուն

կենդանութեան շունչ փչեց . որով այն հողակերա  
որսածը եղաւ ան ատեն հոգեւոր , կենդանի , մարդ .  
այսինքն՝ այն նիւթեղէն մարմինը որ երկրի խորու-  
թեանցը մէջ կազմակերպեցաւ , աննիւթական հոգի  
ալ առաւ՝ ոգեւորեցաւ իր Արարէն , և եղաւ հոգիէ  
և մարմինէ բաղկացած էակ մը , ես մը , մարդ :

Ահաւասիկ խնդիր մ'ալ , — Հոգի :

Ի՞նչ է հոգին : Հոգին աննիւթ գոյացութիւն է՝  
օժտեալ բանականութեամբ . հոգիին յատկութիւնն է  
բանականութիւն , որ կ'զգայ , կ'տեսնէ , կ'իմանայ ,  
կ'ըմբռնէ , կ'դատէ , կ'իմաստասիրէ , կ'խորհի , կ'յիշէ ,  
կ'երեւակայէ , կ'կամի , և իր կամքը թէ բանիւ ար-  
տայայտելու . և թէ գործով իրագործելու կ'զօրէ :  
Արդարեւ մարդոյս մէջ Հոգի ըսուած այսպիսի էու-  
թիւն մը գոյութիւն ունի<sup>9</sup> : Դիտութիւնք այս մասին  
ալ Գրքին ըսածին դէմ չեն կրնար առարկել գիտա-  
կան ապացուցութեամբք , ո՛չ ալ հերքել անոր ըսածը .  
Ե կան շատ մեծ գիտուններ որ մարդուն էութեան  
մէջ նիւթին տակ սքողեալ անտեսանելի հոգին կը  
ծնանեն իր ԳՈՐԾՔԵՐՈՎ :

Որովհետեւ հոգւոյն գոյութիւնը անյաղթելի հզօր  
ապացոյցն է Արարիչ Աստուծոյ հարկաւոր գոյու-  
թեան , անցեալ գարու արդիւնքն եղող աննկոտուած-  
ներու կէտ նպատակին եղած էր Աստուծոյ գոյու-  
թիւնն ուրանալ կրնալու համար՝ հոգւոյ գոյութիւնն  
ալ ուրանալ . և ըսին թէ՝ վիրաբուժին դանակը մար-  
դոյս մարմինը ծուիկ ծուիկ ալ կտրատէ և անոր մէջ  
խուզարկելու ըլլայ նէ՝ հոգիի պէս բանի մը չ'պատա-  
հիր անոր մէջ : Իրաւ ալ անանկ է . հոգին նիւթ չէ  
որ մարդուն աչքին կամ ձեռքին տակ իյնայ . անտե-  
սանելի , անչօշափելի է ան . բայց դոյն այդ առար-

կութիւնը հակառակը կ'ապացուցանէ, թէ մարդ է ակը հոգիէ և մարմինէ բաղկացած է, մարդուն եսը նիւթ չէ, այլ հոգի՝ մարմնաւոր քնակարանի մէջ : — Ինչ չէ՞ն է որ մարդս մարած վիճակի մէջ եղած ատեն մեռեալ դիմակի նման է : այլ եւս անձին գիտակից ենը չ'է այն, և այն վիճակին մէջ ի՞նչ հարուածներ՝ ինչ չարչարանք ալ տրուին անոր մարմնոյն, կտոր կտոր՝ ալ կտրատուի այն՝ արդարեւ բան չ'իմանար, չ'զգար, բայց երբ զգաստ՝ լուրջ՝ արթուն է, բուռն և սոսկալի ցաւեր կ'իմանայ վիրաբուժին դանակին տակ : Մարմի՞նն է այդ զգացող իմացողը, մարմինի՞ն բնութեան մէջ է զգայականութիւնն և իմացականութիւնը . նիւթական մարմի՞նն է որ կ'զգայ՝ կ'իմանայ՝ կ'խորհի, թէ անոր մէջ թաքուն հոգեղէն իմացական էութիւնը : Նոյն իսկ քունի մէջ եղած ատեն նիւթական մարդը՝ ո՞վ է որ երազներու աշխարհը կ'պտըսկի, կ'խորհի, կ'գործէ, ևլն . և արթննալուն ալ կ'յիշէ . նիւթեղէ՞ն մարդը՝ որ անկողնոյն մէջ ինկած է անգործ, թէ անոր մէջ արթուն հսկող հոգին, որ մարմինը կենդանագործելով մարդուն եսը կ'շինէ : — Իրա՛ւ է որ հոգին մարմինին միջոցաւը գործունէութեան մէջ է, բայց մարմինը չ'է այն իմացական ԳՈՐԾԻՉԸ, մտաւորական գործողութիւնները կատարողը :

Բայց «Հոգի չ'կայ» ըսողները ասոր կ'պատասխանեն թէ՝ ուղեղն է որ կ'կատարէ այդ մտաւորական գործողութիւնները : — Սակայն մարդս մարած վիճակի մէջ գտնուած ատեն՝ ինչպէս գիտենք՝ նիւթական ուղեղը իրմէ փախած՝ պակսած չ'է, գանկին մէջ ամբողջովին կեցած է, բայց և այնպէս ո՛չ կ'զգայ ո՛չ կ'իմանայ իր մարմնոյն տրուած ո՛ւ և է հարուած

առանջանք և չարչարանք. վասն զի զգացումը նիւթ-  
չէ, նիւթեղէն չ'է, թէեւ նիւթին միջոցաւ կ'յայտ-  
նուի: Նիւթապաշտին աս վարդապետութիւնն ալ  
սխալ է: Սխա՛լ ամենեւին. ճշմարիտ փիլիսոփիայու-  
թիւնը բացէ ի բաց կ'ժխաէ այդ նիւրական իմացա-  
կանութիւնը: Նիւթը աննիւթական արգիւնքներ չը  
կրնար արագրել. նիւթեղէն ուղեղը աննիւթական  
խորհուրդ՝ ուշ՝ երեւակայութիւն, եւայլն, չ'կրնար  
ծնանիլ: Աշխարհի ամենէն նշանաւոր բնախօսներն  
ու կենսաբանները, ինչպէս են լոձէ, Վունդ և Ուլ-  
րիսի՝ ի Գերմանիա, Պիլ, Գարբենդը և այլք՝ յԱնգ-  
ղիա, Բիրս, Տէյնա, Տրէյրը և այլք՝ յԱմերիկա,  
ամենքը միաբան կ'ըսեն թէ՝ ուղեղին նիւթական  
գործողութիւնը որ կ'կատարուի մարդկային մտաց  
աննիւթական գործողութեանց հետ՝ չ'կրնար բա-  
ցատրուիլ ո՛ր եւ իցէ քիմիական, ելեքտրական, կամ  
ուրիշ Փիզիքական զօրութեամբ: Այսինքն՝ ուղեղին  
և ջիգերու մէջ Փիզիքական փոփոխութիւններ ո՛ր-  
շափ եւ սերտիւ կապակցեալ ըլլան մտաւորական  
գործողութեանց հետ, այս Փիզիքական փոփոխու-  
թիւնները չ'են բուն իսկ այն մեաւորական գործողու-  
թիւնն որ անոնց հետ ի միասին կ'կատարուին: Այս  
ուղեղի փոփոխութիւններէն ոմանք կրնան յառաջ  
գալ ելեքտրականութեամբ, վասն զի ուղեղին մէկ  
մասը կ'գործէ անդամները շարժման մէջ դնելու ա-  
տեն. զորորինակ, եթէ կենդանի կամ նոր մեռած  
շնչաւորի մ'ուղեղին այս ինչ մասերը՝ որ անդամները  
շարժելու համար կ'գործեն՝ ելեքտրական ազդեցու-  
թեան տակ բերուին, մկանունք կ'կծկին, ձեռքը կը  
շարժի և աչուըները կամ բերանը կ'բացուին կ'գոց-  
ուին: Ուղեղին մէկ ուրիշ մասը կ'գործէ մտաւորական

գործողութեանց ատեն . բայց ո՞չ ելեքտրականութիւն , և ո՞չ ուրիշ ո՞րեւիցէ բնական ծանօթ զօրութիւն կարող է դրգուել ուղեղին այն մասը գործելու՝ ինչպէս կ'գործէ երբ մտաւորական գործողութիւններ կ'կատարուին : Ուղեղին այն մասը շարժող զօրութիւնը Փիզիքական չ'է . այն մասին հարկաւոր շարժիչ զօրութիւնն է մտքէն կամ հոգիէն . այսինքն կամքէն . (Տե՛ս ի « Քննութիւն Մեթոսի վրայ գըրքուկին » . էջ 73—75. Գուգի ձառերը : Book's Lectures Second Serie . p. 31—50 . 65—76) : Պ. Դ. Թալանթարեանց ալ կ'ըսէ (տե՛ս ի Բիւզանդիոն՝ 2581 թիւ , 9/22 Մարտ , 1905) « Պերլինի համալսարանի բնախոսութեան նշանաւոր ուսուցչապետ Հնդ . Տիւ-Պուա-Ռէ յմօնն անհերքելի փաստերով բազմաթիւ փորձերով ապացուցած է թէ շարժիչ ջիղերն ելեւ-տական ուժով կ'շարժին : Մազնիսական ուժով է որ զգացումներ յառաջ կուգան զգայուն ջիղերու միջուցաւ , և վերջապէս իմ կողմէ հոգեծին յորջորջուած ուժով մ' է որ երեւան կուգայ գիտակցելու երեսյթը» :— Ուղեղը գործիքն է հոգւոյն՝ որով կ'լորհի նա , ինչպէս աչքը գործիք է հոգւոյն՝ որով կ'տեսնէ նա . և լն . ձիշդ . ինչպէս ակնոցը և դիտակը գործիք են կարճա-տես աչաց հեռուն տեսնելու . և իրենք չ'են տեսնողը : Ապա ուրեմն մարդոյս մէջ նիւթական մարմնոց բնութենէն տարբեր աննիւթ՝ իմացական բնութիւն ունեցող գոյութիւն մը կայ , որ այդ իմացական գործողութիւնները կ'կատարէ մարմինին միջոցաւ , և այդ է հոգին . որոյ պակսելուն՝ մարմինը կ'դիտակնանայ : Թէ մարդս հոգիէ եւ մարմինէ բազկացած է . այսինքն ի մարդն բանական հոգի մը կայ , անժխտելի ապացոյց է առ այդ նախ մարդկային բարբառը :

խօսքը, որ միջոց է բանական հոգւոյն իր մէջ խորհած, յղացած, ծնած գաղափարները արտայայտելու, և ուրիշ հոգեւոր էակի հետ գաղափարներ փոխանակելու: Բնութիւնը՝ գործիքը գործին յարմարցուցած է. կամ՝ գործելի գործին յարմար գործիք տուած է գործողին. բանական էակն ալ բանը յայտնելու՝ գաղափարներ փոխանակելու՝ խորհրդակցելու յատկութիւնն ունենալով՝ բնութիւնն անոր գործիք տուած է բարբառը: Ասիկայ միայն ասուներուն յատրով է, վասն զի հոգի՝ միտք՝ կամք ունին. իսկ անասունք աս յատկութիւնը չ'ունին. վասն զի հոգի՝ միտք՝ կամք չ'ունին, որ յայտնելու կամ փոխանակելու գործիք ունենան:

Բայց — կ'ըսեն գիտունի երես բռնողներէն ումանք — անասոնց գործքերուն մէջ ալ խորհուրդ՝ իմաստութիւն՝ տրամաբանութիւն կ'երեւի, և սակայն ոչ ոք կ'ըսէ թէ անոնք հոգի ունին: Մեղուք միաբանութեամբ՝ խորհրդով կ'գործեն յոյժ ճարտարարուեստ խորիսի մը, իբր մէկ կաղապարէ թափուած վեցանկիւնի համաշափ մոմեղէն բջիջներով, և անոնց մէջ իբր քանակաչափով կշռուած նոյնաչափ մեղրով: Կապիկը ըստ ամենայնի կուգայ կ'միանայ մարդուն՝ նմանակ գործքերով: Շերամը շատ վարպետութեամբ կ'նիւթէ մետաքսը, և իր բոժոժը անանկ իմաստութեամբ ձուածեւ կ'փեճեկէ մնամէջ՝ որ հաւկիթները ամենեւին անվեսա պահպանուին անոր մէջ: Մամուկը յոյժ ճարտարութեամբ կ'ոստայնէ իր վարմը՝ որ փորին ճանճեր որսայ. եւայլն: — Բայց ուղիղ արամարանել չ'է այս, և ձեռնարկութիւնը հետեւական չ'է: Անասունը եթէ խորհուրդ՝ իմաստութիւն՝ տրամաբանութիւն կ'գործածէ իր գործերը

գործելու համար, ուրեմն բնութիւնը վրիպած է իր օրինաց և գործոց մէջ. գործքին համար գործիք զլանալով գործողին. ինչո՞ւ լեզու և բարբառ չ'է չնորհեր անոր, որ խորհածը նմանւոյն հաղորդէ, երբ ընկերութեամբ միասին՝ կամ միաբանութեամբ կ'գործէ: Ո՛չ անասունը խորհուրդ՝ իմաստութիւն՝ տրամաբանութիւն չ'ունի. հետեւաբար բանական հոգի ալ չ'ունի. և իր գործքերուն մէջ տեսնուած ճարտարութիւնը իրմէն չ'է, մոքէն չ'է. զի միտք չ'ունի. այլ իր Ա-արշէն, որ անոր բնութեան մէջ այնպիսի գործելու մեմնական յատկութիւններ տարլացուցեր է: Կապիկը մարդոց նմանելու յատկութիւնն ունի. բայց խորհրդով չ'է որ կ'գործէ զայդ. հետեւանքի՝ արդիւնքի համար չ'գործեր. կ'գործէ անգիտելով հետեւանքը. առակին կապիկը<sup>(1)</sup> լաւ կ'բացատրէ զայս: Մեղուին գործանին վրայ արդարեւ կ'տեսնուի զարմանալի իմաստութիւն եւ ճարտարութիւն. երկրաշափական ճարտարարուեստ կտզմած մ'է իր խորիսնը, զոր խմբովին աշխատելով կ'գործեն միաջանութեամբ, և իւրաքանչիւր իր մասը կ'կատարէ առանց

(1) Առակը կ'ըսէ. Կապիկը Թնդանօթամիզ զօրաց կրթութեան հանիսատես ըլլալով լաւ մը կ'զննէ նէ անոնք ի'նչպէս կ'մաքրեն կ'սրբին Թնդանօթին փողը, եւ վառօղով ու ռումրով լեցնելէն ետքը երկաք զաւազանի մը ծայրը կապուած ջանով մը կ'բռնկցընեն անոր պատրոյզը, եւ վազն ի վազ կ'հեռանան քովէն: Զօրաց հանկարծակի առաջարին ատենը իր նմանակելու բնական դրդումէն մղուած կ'վազէ ինքն ալ այդ կրթութիւնն ընելու, եւ յետոյ պատրուզին կրակ տալով զինու որաց պէս ըիս մը վազել հեռանալ կեղծելէն ետքը՝ կ'դառնայ կուզայ կը կանզնի հրանօթին բերանը՝ անզուսպ հետաքրքրութենէ մղուելով տեսնելու նէ ինչպէս անկէ դուրս կ'ելնէ ռումբը, որ իր զլուխն ալ հետք կ'տանի:

Խորհելու անկէ յառաջ գալու արդիւնքը , որ է երկ-  
րաշափական կատարեալ համեմատութեամբ շինուած  
տուն եւ մթերանոց . բայց մեղուն չ'է ատիկայ խոր-  
հող հանճարողը . մեղուն չ'է ատոր ծրագիրը պատ-  
րաստողը , այլ՝ Արարիչը . որ անոր՝ ինչպէս նաև ա-  
մեն տեսակ անաւնոց բնութեանց մէջ դրոշմեր է ի-  
րենց գործելու յատկութիւնները , վասն որոյ այդ  
անասնոց տեսակք արարչութեան օրէն մինչեւ ցայս-  
օր իրենց գործելու եղանակին և չափին մէջ դոյզն  
ինչ փոփոխութիւն՝ բարւոքում կամ յառաջդիմու-  
թիւն՝ մացուցած չ'են՝ խորհելով , իմաստասիրե-  
լով , եւայլն : Աղամին օրով մամուկը ի՞նչ դիւրա-  
բեկ թելերով իր սստայնը կ'լարէր նէ՝ այս օր-  
ուանն ալ այն դիւրաբեկ թելերով կ'սստայնէ , որուն  
մէջ տկար ճանճերը կ'բանուին , իսկ զօրեղները կը  
պատռեն կ'անցնին . գո՞նէ շերամին արուեստէն չօգ-  
տուիր իր թելերը ամրացընելու , որ զօրաւոր ճան-  
ճերն ալ իր վարմին մէջ թակարդուին ասկից յայտ-  
նի կ'տեսնուի թէ ինքը չ'է իր գործերուն վրայ  
մտածողը զանոնք երկնող՝ ծրագրող՝ կարգադրողը ;  
Կատուն ծնած օրէն մուկ բռնելու , աղուէսը՝ հաւ-  
խեղելու , եւ գայլը՝ ոչխար փողոտելու արուեստին  
վարժ են . խորհրդով չ'է որ կ'գործեն , ունան աշա-  
կերառուելով չ'է որ կ'սորուին գործել , իրենց յատ-  
կութիւնն է այն գործելը . արուեստը մտքերնուն  
մէջ չ'է , բնութիւններնուն մէջ ունին . չ'է թէ մտա-  
ծելով , բնական բերմամբ կ'գործեն , մեքենաբար կը  
գործեն առանց տրամաբանութեան . ճիշդ այնպէս՝  
ինչպէս մարդուն շինած անշունչ մեքենան կ'գործէ .  
մարդը ի՞նչ արդիւնք յառաջ բերելու համար զայն  
յարմարցուցեր է նէ՝ միայն անիկա կ'գործէ , ան-

կէ տարբեր արգասիք չկրնար արտադրել, եւ այդ արտադրութիւնը մեքենայէն իրմեն չէ, իր խորհրդովը՝ հնարագիտութեամբը չէ. այլ անիկայ շինող վարպետին մտքէն. այսպէս եւ անասունը, բնութիւնը իրեն ի՞նչ մեքենական գործ յատկացուցեր է նէ՝ այն կրնայ գործել առանց մտածութեան և առանց կամեցողութեան. խորհուրդ՝ իմաստութիւն՝ կամք չունի. և ոչինչ կրնայ հնարել՝ ճարտարել. ուստի և խորհուրդ՝ գաղափար արտայայտելու դործիքը՝ բարբառ չունի:

Սակայն նորելուկ իմաստասէրներ ասոր կ'պատասխանեն թէ՝ անասուններն ալ իբրու հետ կ'խօսին աեսակ տեսակ ձայներով եւ եղանակներով. ըսել է անոնք ալ գաղափար կ'փոխանակեն: — Շատ յոռի ձեռնարկութիւն է աս ալ, ամենեւին անձշմարտանման: Ասուններուն ալ, անասուններուն ալ ձայնուններանուն վրայ միայն հիմնուած ըլլալով՝ բայց անասուց ձայնարկութիւնները խօսի չ'են, գաղափար՝ խորհուրդ չ'են յայտներ, այլ կիրք, զգացում միայն. Եւ քերականներուն Զայնարկութիւն կամ Միջարկութիւն անուանած աննշանակ ձայներն են. ինչպէս մարդիկ ալ բարբառէ զատ ունին ձայնարկութիւններ, որոնցմով կիրքերնին՝ զգացումնին կ'յայտնեն. այդ ձայնները իմաստ չ'ունին, մինչդեռ խօսքը մտքի գաղափարը կ'արտայայտէ: Որպէս զի լաւ ևս բացատրուի այս, առնումք, օրինակի համար՝ խուլ=համր մարդը, որ խօսելու կարողութենէ զուրկ ըլլալով կերպով մը անասունի հետ կրնայ բաղդատուիլ. բայց անմիջապէս անհուն տարբերութիւններ կ'աեսանուին անոր եւ ասոր մէջ տեղ: Խուլ=համրը բանականութիւն՝ միտք՝ կամք ունենալուն համար՝ թէ՝ եւ

խօսքէ զրկուած է, շուտով ճարը կ'հնարէ, կ'գտնէ միջոցը իր մտքին մէջ երկնած խորհուրդները նշան-ներով ձեւերով իր նմանւոյն հաղորդելու . մինչև իսկ կրնայ գրոց աշակերտուիլ եւ ըլլալ փիլիսոփոս մը . բայց ո՛չ մէկ անասուն մինչեւ հիմա ջանք ցուցըցած է իր գաղափարը յայտնելու ձայներով կամ նշան-ներով կամ գրով, միայն գիր ճանչնալ եւ ընթեռնուլ չկրնալ սորվիլը վճռական ապացոյցն է ասոր :

Անասնոց այդ ձայնարկութիւնք բարբառ չ'են ը-սինք, կիրքերու արտայայտութիւններ են . անոնք զգացում միայն ունենալով, զգացումնին յայտնելու ձայնարկութիւններ ունին . եւ որովհետեւ բանակա-նութիւն՝ միտք՝ խորհուրդ՝ կամք չ'ունին . բարբառ ալ չ'ունին : Ստոնց արձակած ձայները եթէ բարբառ ըլլային, մինչեւ հիմա ատոնց եղանակաւորումները յոյժ շատ պիտի աճէին, ընդարձակուէին . յետին տը-գէտ ազգերը՝ որոց բարբառք առաջէն յոյժ աղքատ էին բառերով, ըստ զարգանալ իրենց մտաւոր կա-րողութեանց՝ հազարաւոր՝ բիւրաւոր բառերով հա-րստացած են այսօր . բայց անասնոց ձայնարկու-թիւնք ի'նչ որ էին Աղամին եւ Նոյին օրերը՝ նոյն են մինչեւ այսօր. ո՛չ մէկ սոյլ՝ ո՛չ մէկ խազ աւել-ցուած են անոնց վրայ : — Հետեւութիւնը պարզ է : Անասնոց այդ ձայնարկութիւնք բարբառ չ'են : Որով-հետեւ բարբառ չ'ունին, ուրեմն գաղափար՝ խորհուրդ չ'ունին, ուրեմն և խորհող՝ հոգի չ'ունին, վասն զի բարբառը հոգւոյն խորհուրդը արտայայտող է : Եւ ըստ այնմ ի մարդն հոգւոյ գոյութեան ապացոյցն է բարբառը :

Հոգւոյ անմահութիւնն ալ յարակից էական մասն է այս խնդրոյն : Բայց հոգւոյն գոյացութիւնն ըն-

դունելը՝ անոր անմահութիւնն ալ ընդունել է, վասն զի հոգին աննիւթ էութիւն է, նիւթ չ'է որ մաս- նիկներէ բաղկացած ըլլալով՝ անոնց տարբաղադրը- մելովը մեռնի։ Հոգւոյն անահման փափաքները, բոլոր կենացը մէջ մինչեւ ետքը միշտ ուսանելու ջանքը եւ ի կատարելութիւն դիմելը։ ինչպէս նաև Արարիչ մը ճանչնալու եւ պաշտելու բնական բերումը՝ անտարակոյս յոչընչութիւն դառնալսւ քայլառու- թիւններ՝ անկումներ չ'են՝ մարմնոց պէս, որ կ'ծե- րանան կ'վատին փառութեան կ'դիմեն՝ ի հող լուծուե- լու համար ծնած ըլլալուն։ այլ բնածին մղում՝ ե- ռանդ յաւիտենական կենաց, զոր կ'զգայ իր մէջ, ո- րու համար ստեղծուած է։ Ասոնք ամենը զօրեղ ա- պացոյցներ են թէ հոգին անմահ եւ յաւիտենական է (ասոր վրայ ընդարձակօրէն խօսուած է ի՞ննական կրօնագիտ։ տպ. Բ. էջ 124—145)։ Հետեւարար երբ մարդը կ'մեռնի, մարմինը հողէն առնուած ըլլալով Արարչին վճռովը նորէն ի հող կ'լուծուի, և հետզ- հետէ նոր նոր կերպարանքներ կ'առնէ, բայց հոգին կ'երթայ Ստեղծողին քովը, մինչեւ որ հասարակաց յարութեան ատեն վերստին իր մարմնոյն հետ միա- նալով յաւիտենական կենաց մտնէ։ Այսպէս կ'ըսէ Գիրքը։

Բայց ըսողներ կան որ Մեռելոց յարութեան վար- դապետութիւնը Գիտութեանց հակառակ է։ Կան ը- սողներ թէ կոտրած կուժը կամ գաւաթը վերաշինել անկարելի է։ կան ուրիշներ որ կ'ըսեն թէ մարդուս մարմինը ի հող լուծուելուն՝ այնուհետեւ անոր ման- րամասնիկները բիւր միլիոն մարմիններու կ'խառնուին, և ի՞նչպէս կարելի է այնուհետեւ այն միլիոնատր մարմիններու խառնուող մասնիկները անոնցմէ զատ-

տին գան ժողվուին մէկտեղ, եւ վերակազմեն այն նիւթական մարմինը, որով և միանան իրենց հոգւոյն հետ. ասկէ զատ, մարդո իր կենաց մէջ շատ անգամ ամբողջովին իր մարմինը փոխած՝ շատ մարմիններ ունեցած է, իր մէջ մանրամասնկաց մէկ կողմանէ ի բաց լուծուելովը, և միւս կողմանէ առած սնունդով նոր մասնիկներ ստանալովը. այս շատ մը մարմիններէն որի՞ն հետ պիտի կրնայ միանալ հոգին, և նորէն նոյն անձը՝ նոյն եսը վերկենցաղել: — Թողումք որ մարմնոց յարութիւնք հրաշալիք են, և երբ ետքէն հրաշից գոյութիւնը եւ կարելիութիւնը ապացուցանեմք, այն ևս ապացուցուած կ'ըլլայ. այս տեղ աս միայն պէտք է ըսել որ մարդոյս մարմնոյն մասնրկանց տարրուծումը ի չի՛ դարձում չ'է, յարափոխութիւն է, և թէ՛ և բիւր միլիոնաւոր մարմնոց մէջ մտնեն ելնեն այդ մասնկունք, բայց բոլորին անոնց էութիւնը չ'են կազմեր, մասպամբ կ'կարկատեն զանոնք, ինչպէս նաև այն մարմինները՝ յորոց տարլուծուելով կ'բաժնուին՝ չ'են եղծաներ. վասն զի անոնց լուծուելուն հետ մէկտեղ միանգամայն ուրիշ մարմիններէ ուրիշ մասնիկներ կուգան կ'լեցընեն անոնց տեղերը և կ'կարկըստեն, և անոնց ամբողջութիւնը չ'եղծանիր ո՛չ ըստ բոլորին և ո՛չ ըստ մասին: Եւ որովհետեւ մարդուն հոգին և մարմինը առընչակից են միմեւանց, այսինքն ամեն անձնաւորութեան հոգին իր մարմինին՝ և ո՛չ ո՛ր և է մարմինի, ինչպէս նաև ամեն մարմին իր հոգիին՝ և ո՛չ ո՛ր և է հոգիի. կ'յարնչի՝ կ'վերաբերի՝ կ'պատկանի, ի յարութեան մարմնոց երբ հոգին երեւան կուգայ՝ առընչակից մարմնոյն մանրամասնիկները ո՛ւր՝ ի՛նչ մարմնոց մէջ ազ շաղուուած ըլլան, ըստ որում անոնց ամբողջ էու-

Թիւնը կազմած չ'են . կուգան կ'ժողվուին անոր մօտ ,  
և միանալով անոնց հետ՝ կ'վերակազմեն նոյն մարդը ,  
(տե՛ս ի Քննակ· Կրօնագ . տպ . Բ . 978—990) : Ինչպէս  
երբ հարիւրաւոր տեսակ փոշիներ իրար խառնուած  
տեղ մը կեցած ըլլան , մագնիսը կամ մագնիսացեալ  
երկաթը մօտենայ անոնց՝ այն ամեն տարասեռ փոշի-  
ները խառն անոր չ'են կառչիր , այլ իրեն առընչա-  
կից եղող երկաթի փոշիները միայն միւս ամեն  
տեսակ փոշիներէն զատչելով իսկ և իսկ կուգան  
կ'կացին անոր և կ'միանան անոր հետ . այսպէս ի  
հող լուծեալ մարմինք յարուցեալ ի մեռելոց պի-  
տի միանան իրենց հոգւոց հետ , և յաւիտեան պի-  
տի ապրին անմահ կեանքով : — « Քրիստոս յարեաւ  
ի մեռելոց , կ'ըսէ Գիրքը , առաջին պտուղն նիզեցե-  
լոց » (Ա . Կորնթ . ԺԵ . 20) . այս ամենազօր երաշ-  
խաւոր է մեր ևս յարութեան :

Բայց ասոր դէմ ալ առարկութիւններ ունին Գի-  
տութեանց աշակերտներ , թէ ի՞նչպէս հնար է որ այդ  
յարութեան որդիք յաւիտենական կեանքով ապրին  
այս հողագնդոյս վրայ , երբ ամենեւին սպառած պի-  
տի ըլլայ հոն կեանքը . երկրագունդս իսպառ պաղած՝  
աստղային գիակ մը դարձած ըլլալով : Սակայն Գրր-  
քին հարազատ իմաստէն չբլիսիր աս առարկութիւնն  
ալ : Գրքին մէջ ըսուած չէ թէ այդ յաւիտենական  
կեանքը սոյն այս հողագնդոյս վրայ պիտի ըլլայ ,  
կամ թէ՝ ուրիշ մոլորակի՞մ մը . կամ բուն իսկ արե-  
գակի՞ն վրայ , չէ նէ նոր հիւլեններէ նորակազմեալ նոր  
գնդի մը վրայ : — Եթէ Աստուած նախասահմանած է  
որ այս երկրագնդոյս վրայ ըլլայ երկրիս որդւոց յա-  
ւիտենական կեանքը , անտարակոյս իր յաւիտե-  
նական խորհուրդն ի գլուխ հանելու համար պի-  
տի հաճի ան ատեն զարմանագործել , վայրկեան մը  
կասեցընելով կամ անօրինելով մոլորակային շարժա-

մանց անփոփոխելի շրջանները, և թոյլ տայ մեր մեռեալ երկրագնդին՝ իր ճամբէն սուզ ինչ շեղելով ուրիշ մեռեալ մոլորակներէ մէկի՝ կամ գիսաւորի դէմ ուղղակի զարնուելու. կամ, թերեւս բնութեան մէջ մինչեւ ցարդ դեռ չ'ձանցուած օրէնքներ մէջ տեղ ելնեն, երբ տիեզերաց մէջ ընդհանուր մեռելութիւն տեղի ունենայ, և ամբոխում գործեն աստղային մարմնոց ձգողական եւ վանողական զօրութեանց մէջ, կամ բոլորովին տկարացընելով վանողական զօրութիւննին, որով սաստկապէս իրար ձգուելով իրարու վրայ իյնան կամ իրարու ընդհարին սաստկութեամբ, և որովհետեւ իւրաքանչիւրին քանակներու ծանրութիւնը սարսափելի կերպով բազմապատկուած պիտի ըլլայ իրենց յախուռն վազքի աներեւակյելի երագութենէն, իրենց ընդհարման անհնարին թափէն իւրաքանչիւր ծայր աստիճան սոսկալի ջերմութիւն ընդունելով՝ մէկէն կրակ պիտի գառնան(1), և հրավառ-

(1) Գիտութիւնք կ'ըսեն թէ՝ Հ-բառ-ն+ եւ Շ-բառ-ն+ աղրիւր են շերմութեան եւ հրոյ:— Երկանք երբ որ կռանով կ'ձեռուի՝ կ'տաքնայ եւ եթէ կրանի հարուածները անընդհատ շարունակեն՝ այնպէս սաստիկ կ'տաքնայ, որ կ' կարմրի կրակ կ'դառնայ: Զին քառասմբակ արշաւելով սալարիներու վրայ՝ պայտերէն կը-րակ կ' թօթափէ: Պողպատը կայծքարի զարնուելով կրակի կայ-ծեր կ' ժայթքէ:— Նոյն արդեանց կ'յանզի եւ Շփումը. Վայրենի Քարայիպք երկու փայտեր իրար շփելով արա'զ արա'զ՝ անանկ սաստիկ շերմութիւն կ'ձնուցանեն անոնց մէջ՝ որ փայտերը կրակ կ'առնեն կ'վառինտ Դանակը եւ ուրիշ սրելու զործիքներ յեսանի անուոց վրայ շփուելով՝ արագութեամբ՝ կայծերու խուբ-ճեր կ'սորեն:— Աս ըսել է, Հարուածոց եւ Շփմանց սաստկութե-նէն չափազանց շերմութիւն նախորդուելով այն մարմնոց՝ անոնց մանրամասնիկը կրակ կ'դառնան կ'հալին կ'ցնդին . . . : Աս բա-կարունքին վրայ ծեւուած է անշուշտ ասացուածքի այն ծեւն այ որով կ'ըսեմք. « Անանկ ապտակ մը տամ որ երեսէն կրակ ելնէ» :

ուելով հալելով լուծուելով պիտի ցնդին գոլորշիանան և վերադառնան իրենց նախաւոր կազային վիճակը ։ պիտի մանկանան նորէն, և նոր կեանքով պիտի սկսին ապրիլ։ Աս այսպէս՝ կամ ասոր մօտ (աստղային) յարութեան նման բան մը քիչ շատ հաւանական կրնայ համարուիլ։ վասն զի չ'կրնար ենթադրուիլ որ այնչափ բիւր միլիոնաւոր երկնային մարմինները այնպէս յաւիտենական կերպով մեռեալ դիակներ մնալու և տիեզերական անարեւ խաւարին աղջամդին մէջ միայն անօդուտ ցըշաններ գործելու գատապարտուած ըլլան։ Ապաքէն գիտուններ կ'ապացուցանեն թէ Զգողական զօրութիւնը՝ մարմնոց իրենց մէջէն է, իրենցմէ կ'բզի ։ իսկ Վանողական զօրութիւնը՝ մարմնոց իրենց մէջէն չ'է, առընթերակայ մարմիններէն եւ ջերմութենէ կ'ընդունին։ ըստ այս վարդապետութեան՝ որովհետեւ երկնային մարմիններու ընդհանուր մեռելութեան ժամանակ ամենքն ալ հաւասարապէս մինչեւ կեդրոննին պաղած՝ ջերմութենէ զուրկ պիտի գտնուին, և ջերմութիւն ո՛չ ուրեք պիտի երեւի, հետեւաբար բոլոր երկնային մարմինք զուրկ պիտի ըլլան վանողական զօրութենէ, և միայն ձգողական զօրութեամբ մէկզմէկ քարշելով ուժդին, և դիմադրող զօրութիւն ինչ չ'գտնուելով մէջ տեղ՝ իրարու վրայ պիտի իյնան ամենայն ուժգնութեամբ, որով եւ հարկաւորաբար պիտի պատահի վերոյգրեալ երկնային մարմնոց յարութիւնը։

Թերեւս ընդհանուր երկնային մարմնոց համար այսպիսի վերածնութեան մը կ'ակնարկեն Աւետարանք աշխարհիս կատարածին համար ըսելով։ « Արեգակն խաւարեսցի, եւ լուսին ոչ տացէ զլոյս իւր », ինչպէս և ծսայի կ'ըսէ։ Երկնից լուսաւորները և անոնց

համաստեղութիւնները իրենց լոյսը պիտի չ'տան . առեգակը պիտի խաւարի , և լուսինը իր լոյսը պիտի չ'տայ (Ես. ԺՊ. 10) . այսինքն՝ ընդհանուր մեռելութիւն պիտի տիրէ ան ատեն երկնային մարմնոց . «Եւ աստեղք յերկնից անկցին եւ զօրութիւնն յերկինս շար-ժեսցին » (Մաթ . ԻՊ . 29) . այսինքն՝ ընդհանուր նոր շարժումներ՝ ընդհարումներ տեղի ունենալով բոլոր այն երկնային մեռեալ մարմնոց մէջ՝ կենաց նորոգութիւն պիտի պատճառէ ամենում . մի եւ նոյն ակնարկութիւնը կ'ընէ և Ղուկաս ի Գործս Առաքելոց՝ (Բ . 19—20) Յովել մարդարէին խօսքովն ըսելով « Եւ տաց նշանս յերկինս ի վեր , և նշանս յերկիր ի խո-նարհ , արիւն եւ հուր եւ մրցիկ ծխոյ . արեգակն դարձ-ցի ի խաւար , եւ լուսին յարիւն . մինչչեւ եկեալ իցէ օր Տեառն մեծ եւ երեւելի » . (Յովել Բ . 30—31) :

Միլտոն եւս այսօրինակ վերկինցաղում մը կ'հան-ձարէ երկրի համար իր Կորուսեալ Դրախտին մէջ , Գիրք Գ . « Հրգեհեալ կիզեսցի աշխարհս . և ի մոխ-րոյ նորա բուսցին նոր երկինք և նոր երկիր՝ ի բը-նակութիւն արդարոց » . ճիշդ ինչպէս Պետրոս ա-ռաքեալ իր Կաթուղիկեայց երկրորդ թղթին մէջ (Գլ . Գ . 10—13) կ'ըսէ . « Այլ եկեսցէ օր Տեառն իբրեւ զգալ . յորում երկինք տագնապաւ անցցեն , և բնութիւնք հրով կիզեսալ լուծցին . եւ երկիր՝ եւ որ միանգամ ի նմա գործք գտանիցին . և ի լուծանել այսպէս այսր ամենայնի , ո՞րպիսի ինչ պարտ իցէ ձեզ գտանել . այլ սուրբ և Աստուածապաշտ կարգաւ՝ ակն ունել եւ փութալ հասանել գալստեան աւուրն Տեա-ռըն . յորում երկինն հրայթեացք լուծանիցին եւ բնու-թիւնն հրդեհեալ հալիցին : Նորոյ երկրի ըստ աւետեացն հայեցեալ սպասեմք » : Շարականներն ալ կ'կարծեմք

ասոր պէս վերակենցաղում մը կ'յայտնեն՝ իբր մեկ-  
նութիւն Առաքելոյս խօսքին. « ՆՈՒՌԳԻՆ տարեք  
երկրի ի ճայնէ հնչման փողոյն որ գոչէ զկենդանու-  
թիւն. ասէ արիք եկն Տէր կենդանեաց և մեռելոց ».  
(Ծար. Հանգստ. գձ. Տէր յերկնից) : — Եթէ իրօք  
ասանկ պիտի ըլլայ, ան ատեն տարակոյս չկայ թէ  
այն յարութեան որդիք պիտի կրնան սոյն այս երկ-  
րագնդոյս վրայ յաւիտենական կեանքը վայելել:  
Բայց Գիրքը այսպիսի բան մը որոշակի յայտնած չ'է:  
Գիրքը կ'ըսէ. Նոր երկինք և նոր երկիր. Նոր Երուսա-  
լէմ. այսինքն՝ իմանալի կայան մը անդ մըն է՝ այդ  
յաւիտենական կենաց բնակավայրը, անգիտելի տեղ  
մը, երկինքը, ուր սահմանած է Աստուած իր թագա-  
ւորութիւնը՝ յաւիտեան երջանիկ ընելու համար իր  
որդիքը (Յայտ, ԽԱ: Ես. կե. 17: կզ. 22), ուր հրեշ-  
տակաց կեանքը պիտի ապրին (Մատ. ԽԲ. 30), որու  
նկարագիրը անճառելի է կ'ըսեն Գիրք (Բ. Կորն. Ժր.  
1-ն): Եւ որովհետեւ Գիրքը ասկէ աւելի չ'յայտնա-  
բաներ, ոչ Գիրք ո՛չ ալ Գիտութիւնք կ'յորդորեն  
զմեզ այս մասին ասկից աւելի յառաջ երթալու:  
Կ'խոստովանիմք և պէտք է խոստովանիմք որ յաւի-  
տենական կեանք կայ. և թէ Գիտութեանց հակա-  
ռակ չ'է այս վարդապետութիւնը : Այս բաւական է:

Որպէս զի Գրքին՝ մարդուն համար զրուցած ամեն  
ասացուածոց բուն իմաստից խորը թափանցեմք, և  
մարդ էակին բոլոր արարածներէն գերազանց՝ արար-  
չութեան գլուխ գործոցն ըլլալուն պէտք եղածին չափ  
հասու ըլլամք. հարկ է մարդուն և միւս արարածներուն  
արարչութեան պատմութիւնները բաղդատութեամբ  
քննութենէ անցընեմք, ան ատեն առաջին հայեց-  
ուածով տեսածնիս աս պիտի րլայ որ ամեն արարածք  
ստեղծուեցան Աստուծոյ լոկ հրամայելովը. « Ասաց և

եղեն, հրամայեաց և հաստատեցան» : Բայց մարդուն սաեղծագործութեան գալով՝ անոր մեծ կարևորութիւնը ցոյց տալու համար Գիրքը կ'ըսէ թէ Աստուած յատուկ խորհուրդ և որոշում ունեցաւ այդ մասին . «Եւ ասաց Աստուած . Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան » (Ծննդ. Ա. 26) :

Խնդիր մը ևս . — Որ՞ու հետ կ'խօսի Աստուած . որ՞ուն կ'ըսէ «Մեր» պատկերին «Մեր» նմանութեանը պէս : Անտարակոյս հրեշտակներու հետ չ'է որ իբրև հաւասարներու հետ կը խօսի, և անոնց հետ չ'է որ խորհուրդ կ'ընէ, և «Մեր» կ'ըսէ . Արարշակից՝ զործակից անձերու հետ կ'խորհի և կ'ըսէ . «Արասցուք» : — Ոմանք կ'կարծեն թէ այդ յոդնակի խօսուածքի ձեւը Աստուծոյ վեհափառութիւնը ցոյց տալու կերպ մ'է, ինչպէս արդի թագաւորք իբրենց հրովարտակաց մէջ կ'գործածեն . Մենի հրամայցինք, մենի սահմանեցինք, մենի կ'վեճումք, և լն. ըսելով : Բայց բոլոր Աստուածաշունչ Գրոց մէջ երեք տեղ միայն յոդնակի ձևով կ'խօսի Աստուած իբրև հաւասարներու հետ . մէկ մը այս տեղ . մէկ մ'ալ մարդուն անկման ատեն, «Ա. հա եղև Աղամ իբրև զմի ի մենց» (Ծննդ. Գ. 22) . և մէկ մ'ալ աշտարակաշինութեան տեղը . «Եկայի իջցուի և խառնակեսցու զլեզուս նոցա» ըսելով (Ծննդ. ԺԱ. 6) ուրիշ ամեն տեղ առ հասարակ եղակի կ'խօսի . Ես եմ քու Տէր Աստուածդ . Եկու քեզի եպիպտոս խրկեմ . Ես կ'հրամայեմ, և լն . կ'ըսէ : Աս ալ կայ որ Երբ Մովսէս իր Հնդամատենին մէջ աս խօսքերը կ'գրէր (Քրիստոսէ իբր 1491-1451 տարի առաջ), թագաւորաց մէջ յոդնակի ձևով խօսելու սովորութիւնը ակսած չ'էր . շատ ետքի գարերու ոճ է այդ : Փարաւոն Մովսէսի կ'ըսէր . Ես Եհովան չ'եմ նանչնար,

և Խսրայէլն ալ չ'եմ քողուր (Ելք.է. 2). Երուսաղեմի Աղոնիսեղեկ Թագաւորը հինգ թագաւորներուն կ'գըրէր . ինձի ելէք, և ինձի օգնութիւն ըրէք (Յես.ժ. 4) Բաղակ թագաւորն ալ Բաղամին կ'ըսէր . Աղ ի՞նչ ըրիր ինձի . ես քեզ բերի իմ թշնամիներս անիծելու . . . հիմա ինձի հետ ուրիշ տեղ մը եկուր, ու անկէ անիծէ անոնք ինձի համար (Թու. իգ. 11-13). Եղակի ձևով խօսիլ՝ թագաւորաց այժմու սովորական խօսելու ոճովն է, մինչդեռ այն հին ատենները թագաւորներու մէջ այդ կերպով խօսելու ձեւ մտած չ'էր :

Հին մեկնիչներ՝ ինչպէս նաև նորերէն շատերը՝ նկատելով որ Աստուածաշնչին Հայերէն Աստուած Թարդմանուած անունը Երրայեցերէն բնագրին մէջ ելրիմ բառն է, որ յատուկ Աստուածոյ անունն է յոդնակի ձև ունի, այսպէս նաև վերի խօսուածքին մէջ «Արացուք մարդ ըստ պատկերի մերում» խօսքին ձեր յոդնակի է, արարչակից անձերու հետ խորհելու և խօսելու կերպով, ատոնցմէ հետեցընելով Աստուածային Մի էութեան մէջ բազմաւորութիւն մը կ'տեսնեն, և ասոնց հետ մեկտեղ նոր կտակարանի մէջ բացայատուած Հօր և Որդւոյ և Ս. Հոգւոյ վերաբերեալ վարդապետութիւնն ալ նկատի առնելով և իրար մերձեցընելով՝ Երրորդութեան վարդապետութիւնը նախանկարուած կ'տեսնեն աս համարին մէջ . իբր ըսել ուզելով թէ Երրորդութեան երրեակ անձինք են որ ընդ միմեանս կ'խորհին և կ'ըսեն. «Արացուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան :

Երրորդութիւն .— Աւասիկ յոյժ ծանր կնձուտ խնդիր մ'ալ, որու դէմ գիտական և անգիտական շատ մը

առարկութիւններ կ'տեղան : Ո՞րը կ'ըսէ . Գիտութեանց և խելքի դէմ է Աստուածութեան միւնոյն էութեան համար ըսել թէ Մի է , միանդամայն ալ երեք է : Ո՞րն ալ կ'ըսէ թէ Աստուածութեան մէջ Հայր և Որդի և Հոգի՝ երեք անձինք կան ըսելը Աստուած ընկերներ ունի ըսել է : Որ մէկն ալ կ'ըսէ . Աստուած Որդի ունի ըսելու համար՝ Աստուած կին ալ ունի ըսել պէտք է , որովհետև Որդի ծնած ունի , ևայլն : Մենք որովհետև Աստուածաբանութիւն չ'եմք գրեր կոր , համառօտիւ կ'պատասխանեմք այս ամենուն : — Ս . Գիրք Երրորդութեան վարդապետութիւնը ուսուցանելով չ'ըսեր թէ Աստուածութիւնը մէկ՝ միանգամայն երեք է . Երեխուրիւն է ալ չ'ըսէր . Երրորդուրիւն կ'ըսէ , (այս Երրորդուրիւն բառն ալ Ս . Գրքէն չ'է . Վարդապետները ետքէն յարմարցուցած են այս Վարդապետութեան՝ Երրեակ միութիւն ըսելու պէս) նշանակելու համար երից անձանց միասնականութիւնը , անբաժանելի մի էութիւնը՝ որ անհասանելի է մարդկային մտաց : Զ'ըսեր ան միեւնոյն տեսուրեամբ «Մի» և «Երեք» , այլ կ'ըսէ . Աստուած մի է էութեամբ՝ բնութեամբ՝ Աստուածութեամբ , և այլն . բայց այս մի էութեան մէջ երեք անձինք կան . չ'է թէ երեք էութիւններ , էակեներ գոյակներ կան՝ կ'ըսէ , ասանկ ըսեր նէ արդարեախելքի դէմ կ'ըլլար . այլ երեք դէմքեր կան կ'ըսէ , անբաժանելի միութեան մէջ (Ա Յովհ . ե . 7 ), որ արդարեախելքի վեր՝ անհասանելի վարդապետութիւն է , բայց խելքի դէմ չ'է , և կրնամք օրինակաւ մը փոքր ինչ միտք առնուլ : — Օրինակ կ'առնումք մարդկային հոգին . ասիկայ ունի իր մի էութեան մէջ երեք գէմքեր , Բան , Խորհուրդ և Կամք , որ հոգւոյն մի էութիւնը կ'էացընեն . բայց իրարմէ անջատ չ'են , և անջատաբար չ'են գործեր . հոգին երեք անջատ միութիւններու չ'է բաժնուած , և մէն մի անձ-

նուրոյն չ'գործեր . երեք = միութիւնը՝ այսինքն՝ հոգին է որ կ'գործէ , հոգին է որ կ'բանավարէ , հոգին է որ կ'խորհի . հոգին է որ կ'կամի . թան և Խորհուրդ և Կամք զատ զատ էակներ չ'են՝ պատահաբար իրար մօտեցած , այլ երեքը հոգւոյն մի էութենէն են՝ անբաժան , և էապէս մի են : Այսպէս Աստուծոյ մի էութեան մէջ երեք դիմաբաժանեալ անձինք կան . Հայր և Որդի և Ս. Հոգի , բայց անբաժանելի միութեան մէջ : Այս երեք անձինք ընկերակից չ'են իրարու . այսինքն՝ զատ զատ անհատականութիւններ չ'են , որ պատահաբար իրարու մերձենան և իրարու ընկերեն . այլ Աստուծածային մի էութենէն և ի միում էութեան՝ միութիւն են բնութեամբ , էապէս . այսինքն՝ մի անբաժանելի Աստուծութիւն : — Իսկ թէ՝ Աստուծ Որդի ունի ըսելը՝ կին ալ ունի ըսել կ'ըլլայ եղեր , ամեննեւին անհետևական եղարակացութիւն է այս . վասն զի Արարշին յափտենական ծնունդը մարդկային ծնոնդոց պէս ծնունդ չ'է . իրաւ ծնունդ բառով բացատրուած է , բայց արարածական բնական ախտաւոր ծնունդ չ'է . Որդին ծնունդ է ի Հօրէ՝ որպէս բան ի մտաց , կամ լոյս ի լուսոյ Այսպէս կ'թարգմանուի Որդոյ Աստուծային ծնունդը , որ անհասանելի է ամեննեւին մարդկային մտաց : Վասն զի Արարշին էութեան բնութեան հոգեղինութեան վրայ մեղի գաղափար տուող բան մը չ'եմք տեսներ արարածական բնութեան մէջ , որ քիչ շատ հասու լինէինք Անոր . ի'նչ որ Գրքերը զրուցեր են՝ մեղի այսչափ կ'ուսուցանեն , և ասկից անդին չ'եմք կրնար երթալ . աս ալ Գիտութեանց դէմ չ'է . Գիտութիւններէ վեր՝ շատ վեր՝ շատ բարձր է , Գիտութիւնք կ'խոստովզանին թէ Աստուծ կայ . աս հերիք է . Երարդութեան վարդա-

պետութիւնը Աստուած ուսուցեր է Գրքերով, աս ալ  
պէտք է ընդունիմք, թէ՛կ չ'կրնամք լիովին ըմբռնել  
« Մածովքն Տեառն Աստուծոյ մերում, և յայտնի-  
քըն մեզ և որդւոց մերոց յաւիտեան » :

Դառնամք արդ տեսնել թէ

Ի՞նչ է Աստուծոյ պատիւր եւ նմանութիւնը, որով  
Աստուած մարդս տեսղծեց : Մարդուն արարչութեան  
համար վերը յառաջ բերուած Գրքին խօսքը կերպով  
մը կ'բացատրէ մեզ այս. «Եւ ստեղծ Տէր Աստուած  
զմարդն հող յերկրէ, և փշեաց յերեսս (յոնգունս )  
նորա ունչ կենդանի, և եղեւ մարդն յոգի կենդանի» :  
— Աստուած՝ որովհետեւ Հոգի է՝ առանց մարմնոյ,  
ձեւ և կերպարանք չ'ունի . և մարդը՝ որ հողէն մար-  
մին շինուեցաւ, ձեւ կերպարանք ունի, ուրեմն այս  
տեսութեամբ մարդը իր մարմինին բնութեանը մէջ  
Աստուծոյ պատկերը՝ նմանութիւնը չ'ունի . բայց ո-  
րովհետեւ Աստուած անոր երեսին՝ քթին ծակերուն  
կենդանի շունչ փշեց և հոգի տուաւ անոր, ուրեմն  
անոր հոգիին բնութեանը մէջ է Աստուծոյ պատկերը  
և նմանութիւնը, այս ըսել է թէ՝ Մարդս Աստուծոյ  
պէս Բանականութիւն, Կամեցողութիւն և (իր Միտ-  
քը՝ Կամքը և Խորհուրդները յայտնելու և իր Կամաց  
որոշումները գործադրելու) Կարողութիւն ունի . կամ  
համառօտ ըսելով . Մարդս իմացական և բարոյական  
գործող էակ է :

Կնոջ ստեղծման գալով Գիրքը արարչութեան նոր  
կերպ կ'արտայայտէ : — Աստուած, կ'ըսէ, Որպէս զի  
իր նորաստեղծ առաջին մարդը առանձին ան-  
օգնական չ'մնայ . անոր կողին ոսկրներէն մին ա-  
ռաւ եւ անկէ շինեց առաջին կինը՝ Եւան (Ծննդ. Բ.  
20-23) : Ասիկայ Աստուծոյ հրաշագործ կարողութեան

արդիւնքն ըլլալով ետքէն երբ որ այս խնդիրը ձեռք  
առնումք և լուծեմք՝ թէ կարո՞զ է Աստուած հրաշա-  
գործել , և իրօք հրաշքներ գործած է, այս խնդիրն  
ալ ինքնին լուծուած կ'ըլլայ : Այս տեղ այսչափ մի-  
այն կրնայ ըստիլ , թէ ինչպէս որ բրուտը կարող է  
իր շինած ամանը այս ձեւէն այն ձեւին փոխել , կի-  
սել , կամ երկու ամանի վերածել . այսպէս Արարչա-  
պետն ալ կարող էր հրաշակերտած մարդուն կողին  
մէկը անկէ զատել առնուլ և զայն ի կին կերպարա-  
նել , ցոյց տալու համար ամուսնական կեանքին սերտ  
միութիւնը . թէ երկու ամուսինք մի մարմին են , և  
երկոքին՝ միոյ մարմեյ անդամք են (1) : Զայս դի-  
տելով Ս . Հարք կ'ըստն թէ Աստուած Աղամին գըլ-  
խուն ոսկրէն չ'առաւ կինը ստեղծելու համար . որ  
մարդուն վրայ չ'իշխէ . ոչ ալ ոտքին ոսկրէն , որ ա-  
նոր նուաստ գերին չ'ըլլայ , այլ՝ կողին ոսկրէն որ ա-  
նոր իսկական և բարոյական կողակիցը՝ սրտակիցը  
ըլլայ , ըստ ամենայնի համախոհ համակամ , և երկո-  
քին մէկ մարմինէ նիւթուած ըլլալով՝ իսկապէս մէկ  
մարմին լինին և ամուսնական լուծին տակ՝ միմեանց  
բեռն բառնան , զիրեար երջանիկ գործեն , և իրենց  
նմանեաց ծնող և տածող ըլլան՝ ընտանիք կազմելով :

Ի լրումն արարչութեան պատմութեան՝ յառաջ  
կ'բերեմք աս ալ որ երկրաբանական հետազօտութիւնք

(1) Այս Աղամի կողէն Եւայի արարչութեան սրբազան աւան-  
դութիւնը՝ որ մինչեւ ի Մովսէս հասած էր՝ թերեւս Եւ զրաւո-  
րապէս , Հնդկաց սրբազան մատենից մէջ Եւս կ'աւանդուի , ուր  
կ'ըսուի Թէ՛Մենու Հնդկաց իմաստնոց կ'ուսուցանէ Թէ «Առաջին  
մարդը որ Բրամա աստուածէն Ելաւ , ուուկէ էր , Եւ չ'կրնալով  
մինակ ապրի՝ բաժնուեցաւ յերկուու . ի Մանու (այր) Եւ ի Սա-  
տարուապա (կին)» . (տես ի Հնութ . Հնդ . Թովմ . Մաւրիկ . Անզղ.)

լիովին կ'հաստատեն՝ ինչպէս որ կ'նկարագրեն Գիրք երեք դպս գործարանաւոր էակաց, անկոց, անասնոց և մարդկան կարգաւ իրարմէ ետեւ ստեղծուած ըլլալ-նին :— Որովհետեւ ամենէն առաջ տունկերը ստեղծուեցան, երբ դեռ անասուն և մարդ գոյութիւն չ'ունէին, երկրաբանք երկրի ամենէն խոր խաւերուն մէջ քարացեալ տունկեր ( հանքածուխ ) միայն կը գտնեն և անոնց մէջ անասնոց և մարդոց ոսկերոտի չ'են գտներ : Անասունք տունկերէն ետքը ստեղծուած ըլլալնուն համար՝ այն առաջին խոր խաւերէն ետքը կազմուած երկրորդական քիչ խոր խաւերու մէջ կ'գըտ-նեն անասնոց ոսկերոտի, քարացեալ. ասոնց մէջ ալ մարդկային ոսկերոտի չ'են գտներ բնաւ : Որովհետեւ մարդը ամենէն վերջը ստեղծուեցաւ, մարդկային ոս-կերք ամենէն վերին քիչ խոր խաւերու մէջ կ'գըտ-նուին :

« Եւ հանգեաւ Աստուած յաւուրն եօթներորդի » ( Մննդ. Բ. 1-3 ). Եօթներորդ օրը ա'լ դադրեցաւ Աստուած արարչագործելէ, ալ ուրիշ արարած չ'ստեղծեց. սրբեց այն օրը, օրհնեց և նուիրագործեց, և Նաբար ( Հանգիս ) անուանեց, և իր արարչագործ բարու-թեան յիշատակին համար այն օրը սուրբ պահել'գոր-ծէ դադրիլ և իր պաշտօնին յատկացնել հրամայեց ( Ես. ծգ. 2 ծը. 13 ): Պատմութիւնը վկայելով որ նախապատմական անյիշատակ ժամանակներէ ի վեր աշխարհիս ամեն կողմերը եկող=գացող ամեն ազգեր և ժողովուրդներ շաբաթը եօթն օրերով կ'համրէին և եօթներորդ օրը նուիրական կ'համարէին . հանգիստ կ'ընէին ( ինչպէս այսօր )՝ առանց ամենեւին այս կամ այն մարդկային իշխանութեան սահմանադրութեան, ասով վկայած կ'ըլլայ Գրքին վեցօրեայ արարչու-

թեան և եօթներորդ աւուր նուիրագործման աւանդութեան։ ըստ որում այս սովորութեան կիրառութիւնը առաջին մարդէն սկսուած՝ որդւոց որդի պահուած և աւանդուած էր<sup>(1)</sup>, ի յիշատակ արարչութեան Աստուծոյ։ Յովակապս համառօտիւ կ'հաստատէ զայս ըսելով «Զկայ Յունաց կամ որ և է ազգի քաղաք մը յորս ըստ օրէնակի Հրէից՝ եօթներորդ օրը շաբաթանալու սովորութիւնը՝ չպահուի» (ի վերջն թ. գըրոց ընդ դէմ Ապահոնի։ Տե՛ս և ի Քննական Կրօնագիտ տպ. բ. էջ 104-105)։

---

(1) Եաբանու հանգիստը առաջին անգամ ըլլալով ծասնաբանեայ օրէնքին մէջ հրամայուած կամ սահմանադրուած չէ։ ատիկայ արարչութեան օրէն սկսեալ շաբունակուած էր մինչեւ ան ատեն, եւ Մովսէս այդ կիրառեալ աւուր հանգստութիւնն էր կ'յիշեցնէր Դորդ պատուէրով, որու մէջ չըսեր թէ Եօթները ու ուստի գոհն, այլ կ'ըսէ. «Յէֆու սրբել զօր շաբաթուն» (Ելք թ. 8-11)։ Հանգստեան օրը սուրբ պահելը ժէվ։



## ԴՐԱԽՏ ԵԴԵՄԱՅ

Հիմա կուգայ մարդուն առաջին բնակութեան տեղւոյն և ժամանակին խնդիրը : — Գիտեմք Գրքէն որ Աստուած մարդը ստեղծելուն՝ առաջին անգամ Եղեմական դրախտը բնակեցուց կնոջը հետ . և մեղանչելնուն ետքը դրախտէն դուրս ըրաւ , և դրախտին դիմացը բնակեցուց : — Ուր էր աս Եղեմայ դրախտը , և նախաձնողաց դրախտէն դուրս ելնելնուն ի վերքանի՝ հազարաւոր տարիներ անցած են :

Գիրքը կ'ըսէ թէ (Ծննդ. բ. գ.) Աստուած արևելքի կողմը Եղեմի մէջ պարտէզ տնկեց , որ Դրախտ կ'ըսուի , և ամեն տեսակ պտղատու ծառեր բուսցուց հան . ինչպէս նաև ազգի ազգի ծաղիկներ . և Ադամն ու Եւան այն տեղ բնակեցուց , հրամայելով որ այն պարտեզը մշակելով զբոսնուն և գուարճանան : — Այս դրախտի տեղւոյն ուր եղած ըլլալուն վրայ եւած տարածայնութեանց չափ աարաճայնութիւններ ո'չ մէկ խնդրոյ վրայ երեցած կան՝ Գրոց քննչաց և մեկնչաց կողմանէ : — Ոմանք դրախտը կ'տանին կ'դնեն Կիւիիկիոյ կողմերը՝ Ատանայի մէջ . ոմանք ալ Արարիոյ կողմերը՝ Մետինէի մէջ . «Եղէմ» և «Ադին» անունները Ատանա և Մատինէ անուններուն մերձաւոր՝ նմանաձայն գտնելով . այլք կ'դնեն Պաղեստինի մէջ . մէկ քանինէրը Ասորիքի մէջ՝ Լիբանանի կամ Դամասկոսի կողմերը , Յորդանանի բղյած տեղուանք , և ուրիշներ՝ ինչպէս Գրատիոս՝ Բաբելոնի մէջ , և Գելլարիոս՝ Քաղղէացւոց երկրին մէջ , Տիգրիս և Եփրատ

գետին սկսեալ մինչեւ Հնդկաստան ընդարձակելով  
անոր տարածութիւնը։ Բայց ի վերջէ բազմաթիւ  
քննիչներ ընդհամուր համաձայնութեամբ միաբանած  
են ըսելու՝ թէ այդ պարտէզը տնկուած էր Եփրատ  
և Տիգրիս գետերուն բղխած տեղուանք (որոց իրարմէ  
հեռաւորութիւնը հազիւ 15 մլոնի չափ՝ կամ երեք  
ժամու ճամբայ է կ'ըսուի)։ Վասն զի Գրքին մէջ ըս-  
ուած է թէ այդ պարտէզը ոռոգելու համար Եղեմէն  
գետ կ'բղխէր, և չորս ճիւղ ունէր, Փիտն, Գեհոն,  
Տիգրիս և Եփրատ։ Հետեւաբար այդ չորս գետերուն  
մէկտեղ դժնուած վայրը կրնայ եղած ըլլալ Եղեմը։

Առ հասարակ ընդունուած է որ այս գետերուն  
վերջին երկուքը՝ Եփրատ և Տիգրիս՝ նոյն անուննե-  
րով կոչուած այժմու Եփրատ և Տիգրիս գետերն են։  
— Եփրատ՝ որովհետեւ միւս գետերէն շատ աւելի  
ծանօթ էր Խորայելացւոց՝ իրենց բնակութեան երկ-  
րին մօտաւորութեան պատճառաւ, Աստուածաշնչին  
մէջ անոր լոկ անունը դրուած է։ և անոր դիրքին և  
ընթացքին վրայ բան մը ըսուած չ'է ճանչցընելու  
համար։ Իսկ Տիգրիսի վրայ՝ որ Խորայէլի բնակու-  
թենէն հեռուն կ'իյնար, ծանօթութիւն տրուած է  
թէ «Նա է ո՞յ երթայ յանդիման Ասորեստանի» կամ  
«Ասորեստանի արեւելեան կողմը կ'երթայ»։ Ճիշդ  
ինչպէս է Տիգրիսի այժմու ընթացքը։

Բայց երբ խնդիր կ'ըլլայ միւս երկու գետերուն  
համար, ոմանք կ'ըսեն թէ՝ ըստ որում հիմա այդ ա-  
նուններով ճանչուած գետեր չ'կան, ատոնք թերեւս  
ջրհեղեղի պատճառաւ հետակորոյս եղած են; և կամ  
երկրիս ընդերքէն ժայթքուած գետնաշարժներ,  
հրաբուղիներու պայթեւններ, դղրդիւններ և ցնցիւն-  
ներ՝ որ շատ մեծ փոփոխմունքներ յառաջ բերած են

Երկրիս մակերեսին վրայ, այդ գետերուն աղբիւր-ները սուզեր, գոցեր, կամ ընթացքնին տեղափոխեր են: Իսկ ուրիշներ ուրիշ անուններով երկու գետեր ցոյց կուտան, որոնց ակունք եվրատայ և Տիգրիսի ականց մօտերն են, և կ'ըսեն թէ ասոնք առաջ Փիտոն և Գեհոն կ'ըսուէին, և ետքէն անուննին փոխուած է: (Տես ի Հնախօս Հայ. Ինձինեան . հատ. Ա. էջ 251-264): Զիարդ և իցէ, հարկ չ'կայ այս մասին երկար քննութիւններ բանալ առ տեղեաւս:



## ՆԱԽԱԾՆՈՂԱՑ ԴՐԱԽՏԻ ԿԵԱՆՔԷՆ

Այստեղ միջանկեալ խնդիրներ կ'ելնեն Գրքին և Գիտութեանց միջեւ: Գիրքը կ'ըսէ թէ դրախտին մէջ տեղ տնկուած կային «Մառ գիտութեան բարւոյ և չարի» և «Մառ կենաց» ըսուած ծառերը, որոց պտուղներն ուտել արգիլեց Աստուած նախամարդոց, ըսելով որ ուտեն նէ պիտի մեռնին . և օճը՝ որ դաշտի բոլոր գազաններէն խորամանկ էր, Եւայի հետ խօսելով համոզեց զինքը ուտել այն պտուղէն, ըսելով որ ուտեն նէ չ'է թէ պիտի մեռնին, այլ աչուընին բացուելով բարին ու չարը պիտի գիտնան ( Ծննդ. Բ. Գ.): Գրքին այս ըսածներուն գէմ կ'ըսուի. Գիտութիւնք չ'են ընդունիր թէ այդպիսի բնական ծառեր կրնան ըլլալ, որ բարոյական ներգործութիւններ ունենան՝ կեանք և գիտութիւն պարզեող.

օձն ալ անբան անսառուն լինելով։ կարելի չ'էր որ  
մարդկեղէն բարբառով խօսէր Եւայի հետ։ և Եւա  
ի՞նչպէս չ'կացաւ այս հրէշային կամ հրաշալի իրո-  
ղութենէն, և մէկէն չ'վաղեց Աղամին քով անոր պատ-  
մելու որ անսառունը ասուն դարձեր է։ — Ծառոց  
մասին կ'ըսեմք թէ անբնական բան չ'կայ։ այդ ծա-  
ռերը հաւանօրէն բնական հասարակ ծառեր էին,  
բայց Աստուած նախածնողաց հնազանդութիւնը փոր-  
ձելու համար անոնց պտուղէն անհրաման ուտելու  
գործողութեան կցեց բարոյ և չարի գիտութիւնը,  
և լն։ և կան մեկնիչներ՝ որ կ'ըսեն թէ այլաբանու-  
թիւն մ'է այդ՝ որ նախածնողաց անհրաման առուս-  
նութիւնը կ'յայտնէ։ Խակ օձին համար թէ ամէն դա-  
գաններէն խորամանկ էր և անբան ըլլալով իրեւ-  
բանական խօսեցաւ։ անոր խորամանկութեան մասին  
կ'ըսեմք թէ ատիկայ կ'երեւի յայնո՞՝ որ մինչդեռ  
բոլոր գաղանք յախուռն ի կոիւ կ'յարձակին իրենց  
թշնամեաց վրայ՝ կեանքերնին պահպանելու անփոյթ,  
օձը թշնամին իրմէ զօրագոյն գտած ատեն մէկէն իր  
մարմնոյն գալարածոց պարոյրներուն մէջ կ'պարտկէ  
իր գլուխը՝ յորում է իր կենդանութիւնը, որով կը  
պահէ իր կեանքը։ Այլ մարդկեղէն բարբառով խօ-  
սիլը արդարեւ օձին յատկութիւնը չ'է, բայց Եւայի  
հետ խօսողն ալ անբան օձը չ'էր, այլ անբան օձ  
կերպարանեալ բանսարկու սատանան, ինչպէս Գիրքը  
այլուր ըսած է։ « Վիշապն մեծ՝ օձն առաջին, որ  
անուանեալ կոչի թեեղզերուղ (բանսարկու) և սատա-  
նայ, որ մոլորեցոյց զամենայն տիեզերս երկրի » (Յայտ. ԺԲ. 9. ի. 2)։ Խակ ինչո՞ւ Եւա այլ յայլմէ  
չ'եղաւ այս անսառունին ասուն դառնալէն։ վասն զի  
Եւա չ'էր գիտեր օձին ասո՞ւն կամ անսառուն լինելը,

և անփորձ էր այդ մասին . միայն Աղամ կ'ձանչնար բոլոր անասունները և անոնց յատկութիւնները գիտէր . անոր համար օձն ալ Աղամին դիմացը չելաւ փորձի , այլ անկէ մէկուսի՝ Եւայի զէմն ելաւ և յաջողեցաւ . որով նախածնողը արտաքսուեցան Եղեմայ գրախտէն :

### ՆՈՒԹԻՒՆ ՄԱՐԴՈՅ

ԱՌ պէտք է այս տեղ թողուլ Եղեմի դրախտավայրը , ուր շատ քիչ բնակեցան նախածնողը . և շուտ մը դուրս ինկան անկէ՝ պատուիրանազանցութեամք , և բնակեցան այնուհետու դրախտին դիմացը , ինչպէս կ'ըսէ Գիրքը . բայց ե՞րբ եղաւ տսիկայ , կամ մեր նախածնողաց սկզբնաւորութեան թուականը երրէ՞ն կը ակսի , ո՞րչափ կ'հիննայ . այսինքն՝ եթէ Աղամ ու Եւա մինչեւ հիմայ աւզրէին՝ քսնի՞ տարեկան եղած պիտի ըլլային :

Ս. Գիրք թուական մը ցոյց տուած չեն նախամարդոց ստեղծման , ինչպէս նաեւ անոնց Եղեմի մէջ ո՛րշափ ատեն ապրելնուն : Մեկնիչնե՛րը միայն թուական մը հաներ են Գրքին պատմական շրջանը մտնելու սկիզբէն : այսինքն նախածնողաց առաջին զաւակաց կայէնի և Աբէլի ծնունդը իրմեւ միութիւն առնելով , որմէ մինչեւ ի Քրիստոս 400՛ տարի կը հաշուըռտի՝ ըստ Եբրայական բնագրին Աստուածա-

շնչին (1), իսկ ըստ Եօթանասնից թարգմանութեան՝ 5508 տարի (2): Պատ Խաբանք և Ժամանակագիրք եւս առհասարակ ընդունած են այս թուականութիւնը՝ իբրեւ հաստատուն խարիսխ և հիմն տիեզերական պատմութեան:

Բայց այս տեղ առարկութիւններ կ'ելնեն մեր գիւմաց, որ Գրքէն քաղուած այս ամեն հաշիւնները տակն ու վրայ ընելու նորատակն ունին : — Կ'ըսուի թէ անասնոց կենդանեաց շատ կմախքներ և ոսկերոտիք դժնուած են երկրի ընդերաց խորագոյն խաւերէն, որոց վրայ երկրաբանութիւնը լուրջ քննութիւններ կատարելով ստուգած է թէ այն կենդանիք առ նըսուազն 15-20 հազար՝ կամ աւելի բիւրաւոր տարիներ առաջ ապրեր և մեռեր են երկրագնդիս վրայ, մինչդեռ Գրքին հաշիւնները քննելով երկրիս թուականը 6000 կամ ըստ Եօթանասնից 7500 տարին չը հասնիր: Բայց այս առարկութիւնը Գրքին բուն իմաստը չ'ըրբունելէն՝ սխալ հասկացողութենէ յառաջ եկած է, ասոր մէջ Գրքին հակասող կէտ չ'կայ: — Հսկնք արդէն թէ Գրքէն քաղուած թուականը աշ-

---

(1) Բայց հիմա ընդհանրապէս ընդունուած է քննիչներէ: որ Քրիստոսի ծնունդը պէտք է զնել իրեն ծննդեան ընծայուած սովորական Խուականէն չորս տարի առաջ, որով աշխարհի Թուականութիւնը մինչեւ ի Քրիստոս՝ 4000 տարի կ'հաշուուի:

(2) Այս 1504 տարիներու տարբերութիւնը Եօթանասնից Թարգմանութեան մէջ նահապետաց կենաց շրջանները երրայականէն տարբեր՝ երկար եւ կարծ դրուած ըլլալէն է, երրայական բնոպքին նշանակած տարիքներուն Թարգմանչաց կողմէ տարբեր իմացուելէն՝ ինչպէս նաեւ ծեռագիր օրինակողաց սխալներէն յառաջ եկած ըլլալու են, ինչպէս կ'կարծուի ընդհանրապէս:

խարհի յոչընչէ արարչութեան թուականը չէ , ո՞չ ալ մարդոյս ստեղծման . այլ նախածնողաց աշխարհի վրայ դրախտէն դուրս բնակութիւն հաստատելնուն թուականն է , և որովհետեւ վերը վեցօրեայ արարչութեան պատմութեան մէջ աս ալ հաստատուած ցուցուած է թէ այն արարչութեան վեց օրերը ասուղաբաշխական օրեր չ'էին , այլ յոյժ երկար համաշափ ընդարձակ ժամանակամիջոցներ , թերեւս բիւրաւոր կամ հարիւր հազարաւոր տարիներ էին . հետեւաբար այն վեցերորդ օրն ալ՝ յորում ցամաքային անասունք ստեղծուեցան , այնչափ շատ բիւրաւոր տարիներ ըլլալուն , մարդը դեռ չ'ստեղծուած՝ շատ անասուններ ծներ ապրեր մեռեր էին՝ հարիւրաւոր հազարաւոր պորտերով . և այդ բնական մահուամբ մեռած անասունոց կաշխացեալ մորթերէն էր որ Աստուած նախածընողաց մաշկեղէն հագուստները շինեց՝ դրախտէն դուրս վռնտած ատեն . ահա այդ վեցերորդ օրուան շատ մը բիւրաւոր տարիներու ընթացուց մէջ մեռած անասունոց մնացորդներն են այդ արքեխօսական ոսկերոտիք , որ երկրի խորագոյն խաւերուն մէջ քարացեր են . և այդ՝ ինչպէս կ'երեկ՝ Գրքէն ելած թուականութեան դէմ չ'է :

Այլ կան ուրիշ առարկութիւններ ալ որոշիչ նշաններով , որ մարդուն սկզբնաւորութեան թուականը տարապայման կ'հինցնեն . և ասիկայ հարկաւ կ'հակառակի Գրքին :

— Ոմանք մէջ կ'նետեն երկրիս խորերէն հանուած մարդկային քարացեալ ոսկեներ՝ խառն այնպիսի անասունոց ոսկերու հետ , որոց տեսակները շատ հին ատեններ՝ թերեւս բիւրաւոր տարիներ ռռաջ այն հինօրեայ անասունոց հետ ծներ՝ ապրեր և

մեռեր են : Ոմանք ալ ցոյց կուտան մարդկային ձեռապործներ՝ նոյնպիսի պայմաններու տակ, և կ'հետեւցնեն առիջ թէ՝ մարդուն գոյաւորութեան հնութիւնը 100,000 տարին կ'անցնի, ուրիշներ 200,000 տարի կ'ըսեն . իսկ Հեքէլ նիւթապաշտ փիլիսոփան անհաշուելի հնութիւն կուտայ մարդկութեան : Մենք ասոնց ի պատասխանի՝ միայն սա իրողութիւնը յառաջ կ'բերեմք թէ՝ մինչեւ հիմա երկրի խորերեն հանուած մարդկային ուսկերտիկն բնաւ մեկուն վրայ զոհացուցի ապացուցարեամբ հաստատուած չ'ե թէ անիկայ Աստուածանչեն քաղուած բուականեն աւելի հնութիւն ունի . հետևաբար, կեղակարգ՝ սուս կամ օխալ ենթադրութիւններ են այդ հաշիւները, և ամենևին անգոր :

Եւ ահա ժամանակակից գիտունի մը «Քննութիւն մեթոտի վրայ գրքուկին» ըստուած տետրակին մէջ գըրած հետևեալ պատասխանն ալ յառաջ կ'բերեմք նոյն առարկութեանց դէմ : «Երկրաբանութեան ուսումն երևան հանած է շատ իրողութիւններ որ ստոյդ են և մեծապէս հրահանգիչ նկատմամբ այս աշխարհի և անոր բնակչաց անցելոյն . բայց երկրաբանից շատ կարծիքներ դեռ հեռի են իրարու հետ համաձայնելէ և հաստատութիւն գտնելէ : Այս ենթադրութիւնները շարունակ մեծամեծ փոփոխութիւններ կ'կրեն . . . : Երևելի երկրաբանք շաա անդամ իրարմէ կ'աւարբերին երբ իրողութիւնները կ'բացաբեն : Ոմանք՝ ինչպէս են Լայէլ, Լըպոդ, ևայլն, երկրաբանական իրողութեանց ոմանց մասին կ'ընդունին այնպիսի տեսութիւն մը որ կ'առաջնորդէ զանոնք կարծելու թէ մարդկային ազգը շատ հին է աշխարհի վրայ, բայց նոյնչափ նշանաւոր ուրիշ երկրաբաններ նոյն իրո-

զութեանց կ'նային տարբեր աշօք, և այնպիսի հետեւութիւն չ'են հաներ։ Կան կարգ մը գիտուն մարդիկ որ սերտիւ կ'յարին ո'րեիցէ բանի զոր կրնան իբրև առարկութիւն գոլ ծածել ո'ր և իցէ վարդապետութեան դէմ զոր կ'կարծեն թէ կ'սորվեցնէ Առուրբ Գիրքը։ Նախ կ'պնդեն թէ Սուրբ Գիրք կ'սորվեցնէ այն ինչ վարդապետութիւնը, որ աւելի խնամով քննութեամբ կ'տեսնուի թէ ոչ այլ ինչ է եթէ ոչ Սուրբ Գրոց արուած սխալ մեխնութիւն մը, եւ ապա, ինչպէս եղած է Տենդերայի զոդիակոսի (۱)

(1) Սոյն խնդրոյն բացատրութիւնն ալ նոյն հեղինակէն քաղելով կ'ծանօթազրեմք հոս։ Ժամանակ մը անհաւատը շատ պարծեցան սա կարծեցեալ զիւտիւ թէ Տենդերայի զոդիակոսի ծագումը առնուազն 15,000 տարուան հնութիւն ունէ։ Վոլոնէյ ըսեր էր աս, եւ Գալուստ Կոստանդեան Վոլոնէյէն առնելով իր Մեթոտին մէջ ասիկայ՝ հետեւութիւն կ'հանէ ասկէ թէ Եղիպատացոց միտքը Եղիսերէն դարիրով առաջ մշակուած ըլլալով անոնք զտած էին առաջին անզամ զոդիակոսը Եղիպատոսի մէջ այնչափ տարիներ առաջ։ բայց Շամբոլիոն՝ բուն իսկ այդ Եղիպատոսին զոդիակոսի արժանազրութենէն ցուցըցած էր շատոնց թէ անիկայ Օգոստոս կայսեր ատենէն աւելի հին չ'էր (տես անոր մանրամասն տեղեկութիւնները Պըրճէսի «Հնութիւննեւ միութիւն մարդկային ազգի» կոչուած գրին մէջ, էջ 61-65)։ Նայն զրին մէջ կան նաեւ էջ 65-68, Եղիպատական հնութեանց հմուտ եւ զեռ կենդանի Մ. Պատուշն, Լոնտոնի երեւելի աստեղագէտ էլլիսէն, եւ Բարիզի երեւելի աստեղագէտ Պիոյէն ապացուցներ թէ Եղիպատական այն չըսր տախտակն'ըն որոց վրայ ճինզ մոլորակաց տեղերը նշանակուած են զոդիակոսի նշաններուն մէջ՝ Քրիստոնէակալմն Խու ականին 105-114 տարիներուն կ'վիրաբերին։ Պըրճէս եւս՝ Դաղդիական Ակադեմիայի անդամ Մ. Լաղրոնի (Latronne, Recueils des inscriptions Grecques et Latinnes de l'Egypte, Paris, 1842) զորէն սահմանեալը կ'բաղէ։ Ալյսպէս ցուցուեցաւ թէ բուր զոդիակոսի նշանները որ կան յԵղիպատոս, կ'զտնուին միայն յունական եւ հռովմէական ժամանակաց յիշատակարաններու վրայ, եւ ա-

դէպքին մէջ, իբրև գիտնական գիւտ կ'ընդունին ինչ  
որ յետոյ փորձով կ'հառկցուի թէ երեւակայութիւն  
միայն է :

«Քանի մը տարի առաջ մարդկային կմախք մը  
գտնուեցաւ Կուտատալուբա կղզին՝ խեցիներէ բաղկաց-  
եալ կրաքարի մը մէջ՝ Նախ ըսուեցաւ թէ այն կմախ-  
քըն անհուն հնութիւն ունէր բայց յետոյ ապացուց-  
ուեցաւ թէ այն կմախքն էր Հնդիկ Գարիպի մը որ  
իբր 200 տարի առաջ սպաննուեր էր պատերազմի  
ատեն : Այն կմախքը փոխանակ ապացուցանելու թէ  
բիւրաւոր տարիներ առաջ մարդ կար երկրի վրայ՝  
ցըսուց թէ ի՞նչ արագութեամբ կրաքար կ'կազմուի  
խեցիներէ՝ այս ինչ պարագաներու տակ :—Այլ և այլ  
տեղեր մասութիւներու, մասթուտոններու . և հիմա տե-  
սակը ջնջուած ուրիշ անասուններու ոսկերաց հետ մէկ-  
տեղ մարդու ոսկըներ գտնուիլը կ'ցուցնէ միայն թէ  
այն անասունք կ'ապրէին շատ ետքը քան որչափ  
կ'կարծուէր առաջ (1) : Այս գարուս սկիզբը մազոտ  
փոփի մարմինը դժոնուեցաւ Արջային ովկիանոսին ե-

---

նոնց հետքն անզամ չ'տեսնուիր Փարաւոններուն ժամանակներէ  
մնացած յիշատակարաններու, այսինքն՝ մեհեաններու, շիրմ-  
ներու եւ մումիաններու վրայ, եւ ասկէ կ'հետեւի թէ զոդիա-  
կոսն Եղիպտոսի մէջ ծագում առաջ չ'է, ինչպէս կ'խարհուէր  
ընդհանրապէս ըստ կարծեաց Տիրիւիի . այս անծանօթ էր  
Եղիպտոսի մէջ մինչեւ այս երկիրն անցաւ Յունաց ժեռքը :

(1) Սո, ն կարծեաց համամիտ կ'երեւի եւ համբաւաւոր գիտ-  
նականն ժիւլ Վեռն՝ իր գիտական վիպաց մէջ, յորս այնպիսի  
Նկարագիրներ կուտայ որ կ'ցուցընեն թէ անասնոց շատ տե-  
սակներ՝ որոնք արդէն շատոնց չըքացած անմետացած համոք-  
ուած են բնաբաններէն եւ երկրաբաններէն, դեռ եւս կ'ապ-  
րին անմարդի կամ ընդ երկրեայ խորոց մէջ :

գերքը Սիպերիոյ մէջ գետի մը ափը՝ ստուած։ և երբ  
մարմինը սառէն հանուեցաւ, շուները կերան զայն։  
Աս իրողութիւն կ'ցուցնէ թէ այն կենդանին կ'ապ-  
րէր շատ ետքը քան որչափ կ'կարծուէր։ և թէ Սի-  
պերիոյ մէջ կլիմայի մեծ փոփոխութիւն եղած է։  
. . . Թող ոչ ոք խռովի կարծեցեալ հակառութեամբ  
որ կ'ըսուի թէ կայ գիտութեան և Ս. Գրոց մէջ նը-  
կատամամբ պատմութեան մարդոյն։ քանզի հակառու-  
թիւնը կը վերնայ եթէ Ս. Գիրք ուզիզ մեկնուի և  
գիտութիւնը հասնի ստուգութեան։

Ահա՝ ուրիշ օրինակներ ալ, որոց մէջ փաստեր  
ձախողակի յառաջ կ'բերուին մարդոյս հնութիւնը  
ապացուցանելու համար, բայց կ'ցուցընեն և ոչինչ։  
ինչպէս կ'մատնանշէ վերոյիշեալ գիտուն հեղինակը։  
— Գաղղիոյ Սոմ (Somme) գետին հովտին մէջ  
քանի մը ստորերկրեայ տեղեր գայլախազէ գործի-  
ներ գտնուած են։ Սակէ Լայէլ և ուրիշ երկրաբաններ  
մէկէն հետեւուցին՝ առանց երկրայութեան՝ թէ բիւ-  
րաւոր տարիներ առաջ մարդիկ կ'ապրէին այն տե-  
ղերը։ Բայց վերջին խուզարկութիւններով շատ  
փաստեր գտնուած են։ որոց նայելով շատ երկրա-  
բաններ հիմա միաբան կ'հերքեն վերոյիշեալ երկրա-  
բանից կարծիքը։ Լոնտոն Թայմզ լրագրին 1879  
Օգոստ։ 29-ի շաբաթական թերթին մէջ Հըքսլէյի  
մէկ ճառը կայ՝ զոր խօսած է Բրիտանական ընկե-  
րութեան ժողովին մէջ՝ վասն յառաջագիտութեան  
գիտութեան, և կ'ըսէ։ «Կարելի չ'է գոհացուցիչ  
կերպով լուծել սա խնդիրը թէ ճշդիւ ո՛րչափ ժա-  
մանակ ընծայելի է Սոմ գետի հովտին մէջ գտնուած  
հին մնացորդներուն։ Բաց ի գիտուններէ քիչ ան-  
ձինք տեղեակ են թէ եւրոպայի Հիւսիսային կողմը

մեծ փոփոխութիւններ եղած են անցեալ 500 տար-  
ուան մէջ։ Խոլանսի հրաբուզիսք միշտ բորբոքման  
մէջ եղած են։ լավայի մեծ հեղեղներ վազած են,  
և ծովեղերքի մակերևոյթը մեծապէս փոխուած է։  
Կրնայ ըլլալ որ նոյնպիսի պատճառներ ահագին փո-  
փոխութիւններ յառաջ բերած են Առմի հովտին մէջ։  
ուստի ճիշտ և բանաւոր չ'է հովտին երեսյթներէն  
հետեւցընել ժամանակի հնութիւն»։

Լայէլ Ապահէվիլի և Ամիանսի մէջ գտնուած գայ-  
լախազեայ գործիներուն ալ մեծ կարեւորութիւն  
տուաւ, կարծելով որ անոնք մարդուս շատ հին ըլ-  
լալը կ'ապացուցանեն։ Բայց Գաղղիացի երկրաբան-  
ներու և ուրիշ գիտուններու ժողովի մը մէջ՝ որ  
յատկապէս գումարուած էր այդ մարդկային մնա-  
ցորդները քննելու համար, Էլի տը Պոմոն՝ այն գիտ-  
նոց նշանաւորագոյնը՝ յայտնեց թէ երկրաբանական  
համոզիչ փաստեր կան որ երկրի այն խաւերը՝ ուր  
գտնուեցան յիշեալ մնացորդք, արտաքոյ կարգի  
տաստիկ անձրւներէ կազմուած էին ոչ շատ հին  
ատեն։ Ուրիշ նշանաւոր երկրաբաններ համամիտ են  
իրեն այս մասին։

- Դարձեալ Լայէլ կ'պաշտպանէր մարդուն շատ հին  
ըլլալուն վերաբերեալ այն հաշիւնները՝ զորս կ'ընէին  
քանի մը գիտուններ՝ փաստ բռնելով այրած աղիւ-  
սի կտորներ և խեցեղէն անօթներ՝ որ գտած էին  
Նեղոսի տղմին մէջ՝ 60-70 ոտք խոր փորելով։ Ասոնց  
հաշիւններուն նայելով այն նիւթերը այնտեղ ծգուած  
ըլլալու էին 12-30 հազար տարի առաջ։ Բայց  
ասանկ հաշիւ ընողները երեք բան հաշուի առնլու կը  
մոռնային։ Ա. թէ՝ այն բաններէն ունանք կրնային  
խոր ջրհորներու մէջ ինկած ըլլալ։ Բ. թէ՝ նաև քիչ

ծանր բաներ՝ մուրճեր, և այլն, կընային նեղոսի յոյժ կակուղ տղմին մէջ իյնալով շատ խորերը իջնել. և Գ. թէ՝ պատմութիւնը յատկապէս կ'վկայէ որ կրակի մէջ աղիւս եփելու կամ թրծելու արուեստը շատ նազարաւոր տարիներու հնութիւնը չ'ունի. համեմատութեամբ շատ ետքի ատենի գիւտ է. և Աստուածաշնչին մէջն ալ առաջին անգամ ջլհեղեղէն ետքերը՝ Բարելոնի աշտարակաշինութեան ատենը անոնց գործածութիւնը յիշատակուած է (Մննդ. Ժա. 3), իբր 1757-60 տարի առաջ Քրիստոսէ:

Ուովհետեւ Ա. Գիրք բացորոշ թուական ցոյց տուած չ'են մարդոյս հնութեան, և մեկնիչներուն անկէ քաղած թուականութիւնն ալ քիչ շատ երկրայական է՝ Երրայական բնագրին. Սամարացւոց օրինակին և Եօթնասնից թարգմանութեան տարբեր թուականներուն պատմառաւ, աս ընդհանուր անստուգութեան մէջ իբրև հաւանականագոյն ընդունուած է Եբր. բնագրին հաշիւը. Քրիստոսէ 400է տարի առաջ, զոր պատմաբանք իբր հիմն ընդհանուր պատմութեան ընդունած են, և է ի գործածութեանն Ասկէ աւելի երկար թուականութիւնը Եօթնասնիցն է, որ ընդհանուր պատմաբաններէն ընդունուած չ'է, ընդհակառակն՝ աւելի կարճն ալ կայ. Երրայեցւոց ետքէն հնարած արարչութեան թուականութիւնը, որ մինչեւ ի Քրիստոս 3760 տարի կ'թուէ (1): — Արդ՝ որովհետեւ մինչեւ հիմա կարելի եղած չ'է համոզիչ փաստիւք ապացու-

(1) Երրայական այս տարբեր թուականին վրայ զիտողութիւն ընդոներ կան իրաւամբ, նէ Հրէայք ասով արարչութեան եւ Քրիստոսի ծննդեան մէջ տեղի միջոցը 244 տարի կարճըցուցած են, ցուցնելու համար նէ Քրիստոսի ծննդ ատենը Մեսիայի զալստեան համար սահմանեալ ժամանակը դեռ լրացած չ'էր.

ցանել մարդուն հնութիւնը քան որչափ Ս. Գրքէն  
ելած այս վերոյիշեալ հաշիւներով ցուցուած է,  
յայտնի կ'ըլլայ թէ Գիրք և գիտութիւնք այս մասին՝  
ևս տարաձայն չ'են, զոր կ'հաստատեն ողջամիտ գի-  
տունք: Թող այդ գիտունք լուծեն մարդկային ազգի  
հնութեան խնդիրը՝ ո՞րչափ կ'ներեն հետազօտու-  
թիւնք. Գրքերը ադ հետազօտութեանց դէմ չ'են. Ս.  
Գիրք տրուած չ'են մարդոց ժամանակագրութիւն կամ  
բնական գիտութիւն սորվեցընելու համար. Գրքին  
յայտնութիւնը չեղծանիր պատմութեան կամ բնա-  
կան գիտութեան ստոյգ հետազօտութիւններով:



## ՅԱՂԹԱՆԴԱՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ ՆԱԽԱՄԱՐԴՈՑ

Մովսիսի Հնդամատենին դէմ առարկող կ'գտնուին  
անանիներ. ալ որ ամեն բան՝ հիմակուան եզածներու  
հանգամանքներով բաղդատելով՝ ընդունելու. կամ  
մերժելու սկզբունքն ունին: Ասոնք կ'ըսեն թէ՝ Գըր-  
քին նախամարդոց ընծայած տարապայման յաղթան-  
դամութիւնը և հազարաւոր ամաց երկարակեցու-  
թիւնը անհաւատալի է ամեննեին. ըստ որում այնչափ  
յաղթանդամ երկարակեացներ ո՛չ երբէք երեցած են  
հողագնդոյս վրայ բոլոր ծանօթ ժամանակներու մէջ:  
— Ասիկայ արդարեւ իբրև խնդիր յառաջ բերելն առ

ւելորդ էր . բայց ամեն բան մաղէ անցընելու հարկին առջև՝ պարտաւոր գտնուած եմք չափով մը կարեւորութիւն ընծայել ասոր ալ, և կ'ըսեմք . Վաղժամանակաց իրեր և իրողութիւններ՝ ներկայից հետք' են կրնար բաղդատուիլ և անոնց վրայ չափուիլ, վասն զի աղ կ'ըլլար յոշայնափաւոյ առ այնպիսին ձեռնարկել :

Ինչ որ Գիրքը նախաւոր մարդոց յաղթանդամութեան մասին կ'յայանէ՝ յոյժ բնական է : Ինչպէս նախածին ամեն արարածք՝ անասունք եւ բոյսք՝ յոյժ տարապայման խոշորատեսակ երևան եկան առաջին անգամ՝ երկրի ամենէն յուռթի արգաւանդութեան ատեն, և այնպէս խոշորածին ոերեցան, հարկ էր որ մարդիկ ալ այնպէս յաղթանդամ գոյութեան գային եւ յաղթանդամ սերէին, և դարերուն հիննալէն ետքն է որ ճըղճիմնալ սքիլ պղտիկնալ սկսան անոնց կազմուածքն ալ : Երկրի խորագոյն խաւերէն հանուած յոյժ խոշոր մարդկային ոսկերոտիք անխարելի ապացոցներ են ասոր ( տե՛ս ի Քննական Կրօնագիտութ . տպ . Բ . էջ 446-447 ) : — Հոմերոսի և Վիրդիլիոսի դիւցազներդութեանց մէջ անոնցմէ ոչ նուազ անձնեայ հսկաներ կ'նկարագրուին, որք շատակերութեան մասին ալ անոնցմէ բնաւ վար չ'են մնար : Գիրքը թէ որ Սբրահամին համար կ'ըսէ թէ իր երեք հիւրերուն՝ եփած հորթ մը մեծարեց՝ երեք գրիւ բարակ ալիւրի շօթերով, կողիով և կաթով ( Մնն ԺԼ . ), և Ռերեկայ երկուուլ մորթեց և խորտիկներ պատրաստեց Խասհակին ( Մննդ . Խէ . ), Հոմերոս ալ Պենելոպի երկու երեք տարփաւորաց խնձոյից համար կ'ըսէ թէ՝ հանապազօր խոճկորներ կ'շամփրուէին, և ոչխարներ՝ ամիկներ՝ ամիճներ կ'խորովուէին ամբողջութեամբ, շատ մը

համագումարով՝ աղանդերներով՝ հացերով և գինիներով։ Այսչափ բաներ փորերնին թխել խճողել կըրցողները այժմու նրբակազմ՝ փոքրամարմին կամ թերահասակ մարդիկ չ'էին կրնար ըլլալ։ Բոլոր հին պատմիչներ միաբան են նախնեաց յաղթանդամութեան։ Սանքոնիաթոն, բերոսոս, Մանեթոն, Մաքսիմոս ծիւրացի, Դիոկորոս Սիկիլիացի, և այլք, Մովսիսի յարեւնուան կ'նկագրեն մարդկութեան նախնիքը յաղթամարմին, և համեմատութեամբ իրենց խոշոր կազմուածքին՝ որկորեայ։ Հոմերոս և Սոդենոս են որ առաջին անգամ ըսել մկան են թէ նախնեաց հասակներէն յոյժ նկնահասակ էին իրենց ժամանակակից մարդիկ (այսինքն՝ իրք 1000-900 տարի առաջ Քրիստոսէ)։

Տարիքներու համար ալ նոյն բանը պէտք է ըսել այնպէս սկայ մարդիկ՝ սկայ տարիք ալ ունենալու էին, շատ տարիներ ապրելու էին։ Վոլթեր միլիոնաւոր տարի կեանք կուտայ իր սուելծարանած ՈՒիրիացի սկային, մինչ գաճաճ երկրացին դար մը չ'ապրած կ'մեռնի։ և մենք կ'տեսնեմք որ փոքրամարմին էսքիմացին անձնեայ Խազախին և Թաթարին չափ չ'ապրիր։ բան մը՝ որ միւս ամեն գործարանաւոր էակաց՝ կենդանեաց և բուսոց վրայ ալ կ'տեսնուի։ բնութեան օրէնքները այնպէս կ'պահանջեն՝ որ կենդանին ո՛րչափ մեծամարմին է՝ այնչափ ալ երկարամաց ըլլայ։ Փիղը աքաղաղին պէս կարճակեաց չ'է։ թրթուրն ալ վիշապին պէս երկարակեաց չ'է։ այսպէս՝ բուսեղեններէն ալ կաղնին՝ եղեգին կեանքով չ'մեռնիր, կոտեմը կամ պրան ալ արմաւենւոյ կամ ընկուզենւոյ տարիքին չ'հասնիր։ Ուրեմն յայսմ ևս Դիրքը Գիտութեանց չ'հակասիր և անոնց հետ միաբան է, ըսելով թէ մարդկային ազդի նախնիք յաղթամարմին էին, հետևաբար՝ որկորեայ և երկարակեաց։

## Զ Ր Հ Ե Ղ Ե Ղ

Աստուածաշնչի հալածիչները մատերնին փաթթած են նաև ջրհեղեղի պատմութիւնը իբր զօրսաւոր առարկութիւն Դրքին դէմ. ցոյց տալու համար թէ անիկայ Գիտութեանց հետ չ'համաձայնիր, և հակառակ կ'իսօսի, և կ'ըսեն թէ՝ Խնչպէս կարելի էր երկրի վրայ տեղալ այնչափ ահադին քանակութեամբ ջուր, և համապարփակ պատել ողողել շուրջանակի բովանդակ երկրագունդը. մինչեւ ամենէն բարձր լեռներէն ալ 15 կանգուն վեր բարձրանալ. Խնչպէս կարելի էր տիեզերաց վրայ գտնուած այնչափ հազարաւոր անասուններէն եօթնական՝ կամ երկերկու զոյգ անասուն ժողվել, ինչպէս նաև անոնց ամենուն մինչեւ տարի մը բաւելու չափ ուտելիք համբարել Նոյակերտ այն տապանին մէջ, որ ատոնց քառորդն անգամ թերեւս բաւական չ'էր տանելու, ըստ որում 300 կանգուն երկայնութիւն, 50 կանգուն լայնութիւն և 30 կանգուն բարձրութիւն ունէր՝ վերէն մէկ կանգուն վերջաւորելով: — Այս առարկութիւնք եւս Գրոց հարազատ իմացուածէն չ'են ելներ. այո՛, երբ այսօրինակ քմահաճոյքով մեկնելու ելնեմք Գիրքը՝ ասնկ այլընդայլոյ իմաստներ կ'ստեղծեմք անոր մէջ՝ գահավէժ գատաստանով. որք արդարեւ կ'հակառակին գիտութեանց. բայց երբ շրջահայեաց նուրբ տեսութեամբ և բազմակողմանի քննութեամբ ջանամք Գըլ-

քին յայտնել ուզած բուն իմաստը կրկտել երեան բերել, կ'առանեմք որ Գիտութիւնք անոր յայտնութիւնները կ'հաստատեն :

Զրհեղեղին վրայ ուշադրութեան արժանի գլխաւոր խնդիրը անոր ընդարձակութեանը կ'վերաբերի (ի ներած. Ս. Գր. Հատ. Բ. էջ 31-37). այսինքն թէ՝ այդ հեղեղը բոլո՞ր երկիրս ողողեց հանապարփակ ամեն կողմերը ջրերու տակ թաղելով, թէ անոր երեսին մեկ մասը միայն : Առողք Գիրք կ'ըսեն թէ «Բոլոր երկնից տակը եղող բարձր լեռները ծածկուեցան», թէ «Երկրի վրայ շարժող ամեն մարմին . . . մեռաւ», եւ թէ «Երկրի երեսին վրայ եղող ամեն էակը չնջուեցաւ» (Ծննդ. Դ. 19-24): — Ոմանք պընդելով որ այս խօսքերուն իմաստը ընդհանուր է, կ'հետևցընեն թէ իրօք ընդհանուր եղած էր ջրհեղեղը : Իսկ ըստ այլոց որ այս խօսքերէն ընդհանուր իմաստ՝ հետևութիւն չ'են հաներ, պէտք է գիտնալ թէ ինչպէս հոս՝ նոյնապէս Գրոց շատ մասերուն մէջ ասանկ ընդհանուր խօսքեր կ'գտնուին, բայց տառական նշանակութեամբ չ'են առնուիր : Զորօրինակ. Ծննդ. ԽԱ. 56-57 համարներուն մէջ ըստած է թէ՝ «Երկրին բոլոր երեսին վրայ սով եղաւ». և թէ «Բոլոր աշխարհ Եգիպտոս կուգային . . . պաշար ծախու առնելու» . այս խօսքերուն հաւանական իմաստն աս է թէ՝ միայն Եգիպտոսի և շրջակայից վրայ՝ եւ ոչ թէ բովանդակ Երկրագնդին երեսին վրայ սով եղաւ, և թէ՝ խրայէլացւոց և Եգիպտոսացւոց ծանօթ բոլոր դրացի Երկիրներէն Եգիպտոս կուգային ցորեն գնելու, ո՛չ թէ Հնդկաստանէ, Զինաստանէ և ուրիշ ասոնց պէս հեռաւոր տեղերէ : Նմանապէս . Բ. Օրին Բ. 25 համարին մէջ կ'ըսուի թէ՝ Աստուած իորայէ-

լացւոց «Վախը ու սոսկումը բոլոր երկնից տակը եղող ազգերուն վրայ պիտի գնէր»։ բայց խօսքը յայտնապէս դրացի ազգաց համար էր, ո՞չ թէ երկրիս հեռաւոր մասերուն մէջ բնակող ազգաց համար։ Դարձեալ Ղուկ. Բ. 1 համարին մէջ կ'ըսուի թէ «Օգոստոս կայսրէն հրաման ելաւ բոլոր տիեզերքը աշխարհագիր ընել»։ Հոս ալ յայտնի է թէ Աւետարանչին միտքը «Թոյոր տիեզերքը» բաւին բուն բառական նշանակութեամբը բովանդակ երկրագունդը ըսել չ'է։ այլ Հռոմայ իշխանութեան տակ եղած երկիրները միայն Ըստ այսո՞ հիմա շատերը միաբանած են ընդհանրապէս այս իմաստին՝ թէ ջրհեղեղը իրօք ընդհանուր չ'էր։ այսինքն բովանդակ երկրիս երեսը չ'ողողեց։ այլ այս մոտք միայն ընդհանուր էր։ որ Նոյի ժամանակ երկրիս մարդաբնակ եղած մասն ամբողջ ողողեց։ ինչպէս հիմա ալ՝ թէ՛ և ո՞չ այնպէս ընդարձակածաւալ՝ ստէպ մեծամեծ ողողմունքներ եղած են և կ'ըլլան, ամբողջ քաղաքներ և գեղեց կործանելով՝ տիեզերաց այլ և այլ մասերուն մէջ։

Հաշիւ եղած է որ Աղամէն մինչև Նոյ՝ երկրիս բնակիչք չորս հինգ միլիոնի հասած էին՝ տասը սերբնեան ժամանակ, և այսչափ մարդիկ Եփրատայ և Տիգրիսի հովիտներուն պէս բարեբեր երկրի մը մէջ ապրուելու և կերակրուելու դժուարութիւն չ'կրելնուն՝ հաւանականապէս այն գետերէն շատ հեռու ցրուած և տիեզերաց ամեն կողմերը բնակութիւն հաստատած չ'էին։ Պատմութիւնը ասոր հակառակ չ'ըսեր։ Ուստի ջրհեղը՝ թէ՛և երկրիս երեսին մէկ փոքր մասը միայն ծածկէր, բաւական էր գլուխ հանել Աստուծոյ նպատակը, որ էր Ծնջել բոլոր մարդկային ազգը։ Հաւանականաբար այսպէս եղած է։ Ջրոյ

հեղեղ մը գալով երկրին այն փոքր մասին վրայ ծածկեց երկիրն այնչափ խորութեամբ . որ նոյի և անոր ընկերներուն տապանին մէջ կ'երենար թէ բոլոր բարձր լեռները երկնից տակ ծածկուած էին ջլով :

Հստ ՚իրոց՝ բաց ի քառասնօրեայ տեղատարափ անձրևներէ՝ մեծ անդունդին աղբիւրներն ալ բացուեցան , որով կրնայ հասկցուիլ թէ երկրաբանական յեղափոխութեամբ մը ծովու յատակը բարձրանալով կամ ծովեղերաց մէկ մասը սուզուելով , մեծ ծովուն՝ թերևս Արաբիոյ ծովուն ջրերը եկան զեղան ցամաքին վրայ : Ա. յս ջուրը հեղեղի պէս ուժգնութեամբ գալով Հարաւէն՝ կրնար գէպի Հիւսիս քշել տանիլ տապանը , որ ջրերը քաշուելուն նստաւ Մասիս լերան վրայ , զոր թուրքերը՝ Աղըր տաղ (Առապար լեռ) կ'անուանեն , և Պարսիկները՝ Գուհի նուհ (Նոյի լեռ) :

Արդարեւ եթէ Գրոց խօսքերը ընդհանուր իմաստով առնլով ջրհեղեղը բովանդակ տիեզերքը պատեց ոլողեց ալ ըսեմք՝ Գիտութեանց ամեննեին չ'հակառակիր՝ ջրոց քանակութեան մասին : Ո՞չ ապաքէն՝ ինչպէս տեսնուեցաւ արարչութեան պատմութեան մէջ որ երկրագունդս երբ կազային վիճակի մէջ անձեւ և թափուր՝ խառնակութեանց քաւոս էր , համապարփակ չուրջ պատած էր ջրերով . և այն ջրերը մասամբ վեր քաշուելով մթնոլորտին մէջ կախուեցան , և մնացեալներն ալ ծովերուն՝ ովկիանուներուն և լիճերուն մէջ ժողվուեցան , որոնք այսօր ցամաք երկրիս երեք չորրորդ մասերը կ'բունեն . ուրեմըն երկիրս պատող այդ ջրերը քանակութեամբ չ'էին պակսած . և ինչպէս որ անոնք երկրիս երեսէն քաշուեցան՝ այնպէս ալ կրցան վերադառնալ բովանդակ

երկիրս ողողելու և անոր ամեն կողմերը պատելու՝  
ըստ առաջնոյն :

Իսկ ամեն տեսակ անասուններէն ալ տապանին  
մէջ զետեղելու խնդիրը յոյժ դժուարին՝ մանաւանդ  
թէ անհնարին կ'ընէ ջրհեղեղի ողողումը համաշխար-  
հական իմանալը. Վասն զի կ' կարծուի թէ ան ատեն  
8000էն աւելի շատ տեսակ անասուններ կային՝ թը-  
չուններով և զեռուններով. և տարակոյս չ'կայ թէ  
անկարելի էր բոլոր այս տեսակներէն եօթնական  
կամ երկ'երկու հատ տապանը առնել, ինչպէս նաև  
անոնց ամենուն համար մինչև տարի մը բաւելու չափ-  
ուտելի պարեններ ամբարել անոր մէջ. Դիտելու  
կէտ մ'ալ այս է որ պատճառ կայ կարծելու թէ  
անասունք արարչութեան ատեն ամեն տեսակները  
համախումբ միենոյն տեղը չ'ստեղծուեցան, այլ  
անոնց այլ և այլ տեսակներէն մէկ քանին երկրիս  
մէկ մասին մէջ, այլք մէկ ուրիշ մասին մէջ, և ետ-  
քէն իրենց բնիկ տեղերէն տարածուեցան ուրիշ տե-  
ղեր. և կամ՝ անոնք ամենքը ստեղծուեցան իրենց  
յարմար կլիմաններուն տակ. անանկ որ հիմակուան  
պէս ան ատեն ալ Եւրոպա, Արևելեան Ասիա և  
Ամերիկայ կային անասուններ՝ որոնք նոյի բնակած  
տեղուանք չ'կային: Հիմա երկրիս այլ և այլ կողմե-  
րը խոռոչներու մէջ կամ գետնին տակ գտնուած  
տարբեր ուկրոտին՝ կը ցուցընեն թէ անասնոց այլ և  
այլ տեսակները միշտ այսպէս մասնաւոր տեղերու  
յատուկ էին: Եթէ ջրհեղեղը ընդհանուր ըլլար, որ-  
պէս զի Զին կամ Ամերիկայ գտնուած անասնոց տե-  
սակներն ալ չ'ջնջուէին, անոնցմէ ալ զոյդ զոյդ բե-  
րել հարկ պիտի ըլլար այն հեռաւոր երկիրներէն.  
բայց եթէ երկրիս մարդաբնակ մասին վրայ միա՞ն

պիտի ըլլար, աւելորդ էր այն հարուածէն ազատ մնալիք երկիրներէն անսասուներ բերել, որով և տապանը կրնար պարունակել եօթն եօթն կամ երկ' երկու անսասուն անոնցմէ միայն որ ջրհեղեղին պատահելիք տեղերը կ'գտնուէին: — Ս. Գրքին խօսքէն բացարձակապէս չ'հասկցուիր թէ ջրհեղեղը ընդհանուր էր տիեղերաց վրայ. և բոլոր ապացոյցներուն նայելով՝ հաւանական է մանաւանդ թէ տեղական էր ողողումը. և այն բաւական էր տապանին մէջ ապաւինողներէն դուրս բոլոր մարդիկը միանգամայն երկրիս երեսէն ջնջելու:

Ի բաց թողլով հին ազգաց գրեթէ ամենուն աւանդութիւնները, որք կ'յիշեն այս մեծ սատակիչ ջրհեղեղը, որմէ քիչ մարդիկ՝ այս է՝ ութ հոգի միայն կրցան ազատիլ (տե՛ս ի Քննակ. Կրօնագ. տպ. Բ. էջ 452—453), երկրագնդիս պատմութեամբն ալ հաստատուած է ջրհեղեղի ստուգապէս տեղի ունեցած ըլլալը: Տըլիւք, Գիւլիէ, Հումբոլտ եւ ուրիշնանաւոր երկրաբաններ ապացոյցներով հասաստած են թէ երկրիս երեսը մեծ եւ յանկարծական փոփոխութիւն մը կրած է ճիշդ այն ժամանակ՝ յորում ջրհեղեղը պատահեցաւ կ'ըսեն Գիրք, այս է 2349 տարի Գրիստոսէ առաջ:



## ԱՂԵՂՆ ԵՐԿՆԻՑ ԿԱՄ ԾԻԱԾԱՆ

Գիրքը կ'ըսէ թէ ջրհեղեղէն ետքը Աստուած Նոյի հետ ուխտ դրաւ որ մէյ մ'ալ բովանդակ աշխարհը միանգամայն չ'պատժէ ջրհեղեղով, և իր այս ուխտին նշան սոււաւ երկնից Աղեղը՝ Ծիածանը. կամ ի'նչպէս կ'ըսուի ռամկօրէն՝ Ծիրանի գօտին: — Ասիկայ ալ խնդիր ընող եղեր է թէ՝ Ծիածանի երեւումը բնական օրինաց գործողութեանց արտադրութենէն է, հետեւաբար և բնական օրէնքներու կարգադրուած նախայաւիտեանէն իր գոյութիւնն ունէր. ի՞նչպէս կ'ըլլայ որ Աստուած ջրհեղեղէն ետքը սահմանած կ'ըլլայ անոր երեւումը՝ սահանաբաց անձրեւներու ատեն աշխարհի մարդիկը նոր ջրհեղեղի մը երկիւղէն ապահովելու համար. ինչպէս կ'ըսէ Գիրքը. «Եդից զաղեղն իմ յամաս » (Ծննդ. Թ. 13.): — Աս ալ Գրքին հարազատ իմաստէն չ'է. Գիրքը չ'ըսեր թէ Աստուած ա'ն ատեն նորոգ սահմանեց կամ ատեղծեց Ծիածանի երեւոյթը, այլ՝ արդէն կայ եղած երկնից աղեղի կամ ծիածանի երեւումի համար կ'ըսէ թէ՝ իմ աղեղս ամպերուն մէջ պիտի դնեմ՝ պիտի երեւցնեմ: Երբ որ ամպերը ժողվեմ երկրի վրայ անձրև բերելու համար, կ'ըսէ, աղեղս ամպերուն մէջ պիտի տեսնուի, իմ ու ձեր մէջտեղի ուխտս յիշեցընելու համար (Ծննդ. Թ. 14—17): Աղեղը կար՝ բնական օրինաց կայ եղած ժամանակի սկիզբէն, բայց Աստուծոյ «Ուխտին նօսմբ » չ'էր, ա'ն ատեն ջրհեղեղէն ետքը նշանակեց Աստուած՝ որ այնուհետեւ այդ երեւոյթը իր և մարդոց մէջտեղ դրած ուխտին յիշեցուցիչ նշանն ըլլայ:

## ՍԵՐՈՒՆԴՔ ԵԲԻՑ ՈՐԴԻՌՈՑ ՆՈՅԻ

Հնգամատեանի Ծննդոց Գրքին Ժ. Րդ ԺԼ. Րդ գըլուխները Նոյի երեք որդիներէն սերեալ եօթանասուն ազգաց անունները, եւ այն ազգաց երկրիս երեսը ցրուելուն պատմութիւնը կուտայ։ Աս պատմութեան դէմ ալ շատ ջանքեր եղած են անգիտական առարկութիւններ հանելու, որ Հնգամատենին վաւերութիւնը տարակոյսի տակ ձգուի. մենք անոնք այս տեղ յառաջ չ'պիտի բերեմք զուր աշխատութեամբ. այլ միայն Տօքթըր Անկրսի (ի Ներած. 11. Գրքի Հատ. Բ. էջ 37—40) Ծննդոց գրքի վերոյիշեալ գուխներէն՝ արտաքին պատմութեան հետքաղդատութեամբ հանած տոհմագրական մէկ պատկերը պիտի դնեմք. եւ ետքէն քանի մը յոյժ նշանաւոր պատմաբաններու դիտողութիւնները ի հաստատութիւն յառաջ բերելով ցոյց պիտի տամք որ Գիրքը այս մասին ալ Գիտութեանց հետ միաբան է, և Պատմութիւնը ըստ ամենայնի կ'հաստատէ անոր ըսածները։

Ծննդոց Գրքի այս պատմութեան մէջ դիտելու արժանի է որ Յարեթէ 14 սերունդ միայն յիշուած է. իսկ Քամէ՛ 30, և Սեմէ՛ 26։ Ասոր պատճառը թերես սա է որ Յարեթի սերունդը դնաց բնակիլ երկրի այն կողմերը որ և ստուածաշնչին մէջ պատմուած դէպքերուն տեղէն շատ հեռու էին, ուստի և սրբազն մատենագիրը հարկ չ'համարեցաւ խօսիլ այն սերնդեան վրայ ա'յնչափ ընդարձակ, որչափ խօսե-

ցաւ Գամայ եւ Սեմայ սերնդոց վրայ , որոնցմէ կ'իջ-նէին Ա . Գրոց պատմութեան մէջ ստէպ յիշուած ազգերը :

Յարեթի սերնդէն սկսելով , կ'ենթադրուի թէ անոր որդւոյն Գոմերէ սերեցան Կիմմերացիք , նախնի բնակիչք Արիմու , ինչպէս նաև Կիմմերացիք և Կեղտք որ գրաւեցին Գերմանիա եւ Մհձն Բրիտանիա : Մագոգէ սերեցան , ինչպէս կ'կարծուի . Սկիթացիք , որ Կասպից ծովուն հիւսիսային և արեւելեան հիւսիսային կողմը բնակեցան . եւ յետ ժամանակաց թերեւս անցան Ամերիկայ :

Մարտայէ սերեցան Մեղացիք , այսինքն՝ Մարք , որք բնակեցան Կասպից ծովուն հարաւային կողմը . և անյէ դէպ ի հարաւ մինչեւ Հնդկաստան գացին : Յաւանայ սերունդն էին Յոնիացիք կամ Յոյնք որ բնակեցան բուն Յունատան եւ Փոքսն Ասիոյ արևմտեան եզերքը : Կը կարծուի թէ Թորելի և Մոսքայ սերունդը բնակեցաւ Աև . և Կասպից ծովերուն մէջտեղ : Ոմանք կ'կարծեն թէ Մաժաք՝ Կեսարիոյ հին անունը՝ Մոսոք բաւէն ելած է : Թիրասէն սերեցան թերեւս Թրակացիք որ Դանուր դետին մօտ բնակեցան : Գոմերի որդիէն՝ Ասքանասէն՝ թերեւս սերեցան Դերմանիոյ և Անդղիոյ Սաքսոնները : Ծիփաթի սերունդը կ'կարծուին այն ազգերը որ բնակեցան Կարպաթեան լերանց մօտ , Աև ծովուն արեւմտեան կողմը : Թոգարմա կամ Թորգոմ ընդհանրապէս կ'համարուի Հայոց նախահայրը : Եթէ այսպէս է՝ Թորգոմ բաժնուած ըլլալու է Գոմերի միւս որդիներէն , որ՝ ինչպէս վերը յիշուեցաւ . կ'կարծուի թէ գացին դէպ արևմուտք , մինչեւ եւրոպա :

Յարեթի թուներէն ուրիշ չորս ալ կ'յիշուին ,

այսինքն Եղիսա , Թարսիս , Կիտացիք և Դոդացիք ,  
իբրեւ որդիք Յաւանայ : Թարսիսի սերունդն՝ ըստ  
Յովսեպոսի՝ բնակեցաւ Կիլիկիա , որոց մայրաքաղաքն  
էր Տարսոն . ըստ այլոց , Թարսիս կոչուած երկիրն ի  
սկզբան Սպանիա էր : Ըստ Յովսեպոսի՝ Կիտացիք էին  
Կիպրոս կղզւոյն բնակիչները : Եղիսա և Դոդացիք  
Յունաց ուրիշ ցեղերուն նախահայրերն էին :

Յարեթի սերոնդին համար կ'ըսուի (Ծննդ. Ժ. 5)  
« Աղքաց կղզիները իրենց երկիրներովը՝ ... անոնցմէ  
բաժնուեցան » : Ս. Գրոց մէջ կղզի կ'կոչուին երբեմն  
այն երկիրները ուր Քանանացւոց երկրէն ծովով կ'եր-  
թուի : Ուստի և Յարեթի սերունդը կ'գտնեմք Կաս-  
պիական , Մե ու Միջերկրական ծովերուն եզերքը :  
Այս ծովերուն եզերքէն ցրուեցան Յարեթեան ազ-  
գերը Եւրոպա , Հիւսիսային և Հարաւային արևելեան  
Ասիա . և յետ Ժամանակաց՝ ինչպէս ոմանք կ'կարծեն՝  
Ամերիկայ :

Քամայ սերունդը բնակեցաւ Ասիոյ Հարաւային  
կողմը , Տիգրիսի և Եփրատայ ստորին հովտին մէջ ,  
Արարիա , Միջերկրական ծովուն արեւելեան եզերքը  
և Ափրիկէ : Ներբռովթ՝ որ Քամայ անդրանիկ որդւոյն  
Քուչայ սերոնդէն էր , հիմնեց Բարելոնի հռչակաւոր  
տէրութիւնը : Այս տէրութիւնը տարածուեցաւ դէպի  
հիւսիս Տիգրիսի հովտին երկայնութեամբը մինչեւ  
Նինուէ . Ասորեստանի տէրութեան մայրաքաղաքը  
(Պնն. Ժ. 8—12) : Քուչեանք տարածուեցան նաև դէպ  
արևմուտք մինչեւ Արարիա եւ Ափրիկէ : Եգիպտա-  
ցիք Քուչա անունը կուտային Եգիպտոսի Հարաւային  
կողմի երկրին որ հիմա Հապէց կ'կոչուի : Ըստ կարծ-  
եաց ոմանց յարդեաց , Հապէց անունը Քուչա բառէն  
կ'ծագի : Քամայ սերունդը հիմնեց նաև Եգիպտոս :

Ս. Գրոց երրայեցերէն բնագրին մէջ Եգիպտոսի տըրուած սովորական անունն է Մեստրեմ. որ Քամայ երկրորդ որդւոյն անունն էր։ Այս երկրին այժմու անունն է Մըսըր։ Կ'կարծուի թէ Ծննդ. Ժ. 13-17 համարներուն մէջ Մեստրեմի սերնդոց արուած անունները կ'վերաբերին քանի մը փոքր ազգերու որ Ափերիկէի մէջ կ'բնակէին Եգիպտոսի մօտ։ Այս ազգերէն մին՝ Փղշտացիք՝ գաղթելով Ասիա, բնակեցան Միջերկրական ծովուն հարաւային արեւելեան եզերքը։ Երեմիայի ԽԶ. գլխոյն Յրդ համարին մէջ Եգիպտոսի դաշնակից ազգաց հետ կ'յիշուին Փուղացիք։ Ուստի կ'կարծուի թէ Փուղի սերունդն ։ Վրիկէի ազգերէն էր։ Քամայ չորրորդ որդին՝ Քանան՝ բնակեցաւ Քանան կոչուած երկիրը, զոր յետոյ Խրայէլացիք գըրաւեցին։ Քանանի սերնդոց մէջ ամենէն նշանաւորներն էին Փիւնիկեցիք, որ բռնեցին Միջերկրական ծովին եզերքը, Փղշտացւոց հիւսիսային կողմը, և հոն շինեցին անուանի քաղաքները Տիւրոս և Աիդոն։

Նոյի մնացեալ որդւոյն Սեմայ սերնդոց պատմութեան սկիզբը՝ Սեմայ համար կ'ըսուի թէ Երերայ բոլոր որդւոցը հայրն էր։ Խնչո՞ւ համար այս պարագան մասնաւորապէս կ'յիշուի. անտարակոյս վասն զի Երերէն կ'սերէին Աբրահամը եւ անոր սերունդը Երրայեցիք. որոց պատմութիւնը Ս. Գրոց մէջ այնպէս մեծ տեղ կ'բռնէ։

Սեմայ որդւոց մէջ առաջ կ'յիշուի ևղամ. որոյ սերունդը բնակեցաւ Պարսկաստան, և որոյ անուանմէ կոչուեցաւ այն երկրին մէկ մասը (Ծննդ. ԺԴ. 1: Դան. Հ. 2: Գործ. Բ. 9): Սեմայ երկրորդ որդին է Ասուր, որ ի սկզբան հիմնեց Ասուրեստանի թագաւորութիւնը Տիգրիսի հովտին մէջ։ Կ'թուի սակայն թէ այս եր-

կիրն անցաւ ժամանակ մը Քամայ սերնդին , որ թերեւս արտաքսեց Ասուրի սերունդը քիչ մը ժամանակ . և յետոյ ինք արտաքսուեցաւ նորէն նախնի բնակիչներէն : Որփաքսադայ սերունդը կ'կարծուի բնակած ըլլալ Ասուրի հիւսիսային կողմի երկիրը : Ղուղի սերընդէն էին Լիւդացիք որ Փոքուն Ասիւյ արեւմըտեան մասը բնակեցան : Արամայ սերունդը բռնեց Միջագետաց հիւսիսային մասը և Ասորիք : Կ'կարծուի թէ Արամայ որդւոց միոյն՝ Հուսայ երկիրն Արարիոյ հիւսիսային կողմն էր , Պաղեստինու եւ Եփրատայ մէջ տեղ : Հոս կ'բնակէր Յոր : Ծննդոց յիշեալ Ժ. գըլխոյն 25-30 համարներուն մէջ կ'յիշուին Արահամունախոյն երերայ որդիքը : Ասոնք բազում էին թըւվկ . բայց անոնցմէ մեծադոյն մասը կ'թուի բնակած ըլլալ Արարիա : Յեկոտան , Ոփիր , Եւիլա , ինչպէս կը կարծուի , Արարիոյ մէջ ցեղերու կամ տեղերու անուանք էին , թէպէտ ոմանք կ'կարծեն թէ Ոփիր Հնդկաստանի կամ արեւելեան Ափրիկէի մէջ էր :

Նոյի որդւոց սերնդոց բնակութեան վրայ վերը յիշուած պատմութենէն կ'իմացուի թէ Սեմայ սերունդները Ասիոյ երկրին մէկ մասը բռնեցին . Քամայ սերունդները նոյն երկրին հարաւային մասը եւ Ափրիկէ . իսկ Յաքեթի սերունդները բռնեցին մընացեալ ընդարձակ երկրիներն Ասիոյ մինչեւ Հիւսիսային և արեւելեան և արևմտեան ծայրը , և Եւրոպ :

Հնդամատենին աս տիեզերական ազգաց Նոյի որդիներէն նախածագման՝ սարնդականութեան և ճիւղաւորման մասին երեւելի պատմաբաններ ըստ ամենայնի միաբան են : — Բրոֆ . Ռոլինսըն կ'ըսէ . Խնչ որ գրած է Մովսէս (Ծննդ . Ժ.) հին ազգաց իրարու-

Հետ ունեցած ազգային խնամութեանց եւ չափով  
մ'ալ իրենց աշխարհագրական դրից վրայ՝ զարմա-  
նալի է որ պատմական նորանոր հետազօտութիւնք  
զօրաւոր կերպիւ կ'հաստատեն այն նկարագրին  
ճշդութիւնը։ Զորօրինակ՝ Ծննդ. Ժ. գլխոյն Զ հա-  
մարին մէջ ըսուած է. « Որդիք Յաբեթի Դոմեր. Եւ  
Մագոգ. Եւ Մաղա. Եւ Յաւան, ևայլն. ասով յայտնի  
ցուցուած է Յաբեթեանց, Մադայի՝ այսինքն Մարաց,  
Դոմերի՝ այսինքն Կիմբրացոց, և Յաւանայ՝ կամ  
Յունաց մէջ եղած ազգակցութեանց կապը, ըստ Գեր-  
մանացի բանասիրին Շլեկելի, որ ցըցուց թէ եւրո-  
պայի Ասիական կամ Հնդեւրոպական գլխաւոր ցեղերն  
իրարու համացեղ են։ Նաև նոյն Ժ. գլխոյն 10 հա-  
մարին մէջ ըսուած է թէ Քուչեանք էին նախնի բը-  
նակիչք Բաբելոնի։ Մինչեւ այս վերջին օրերս ասի-  
կայ ընդունուած չ'էր պատմաբաններէն։ ումանք առ  
իրեւ հակառակ ճշմարտութեան կ'մերժէին։ բայց  
այժմ կատարելապէս հաստատուած է անոր ստուգու-  
թիւնը Բաբելոնի հին արձանագրութիւնները կար-  
դալ յաջողելով։ Պունացն առաջները ըսած էր թէ  
Ափրիկէն գուրի՝ ուրիշ տեղեր Քուչեան չ'կային ա-  
մենեւին. և թէ « Ասիացի Քուչեանք Ս. Գրոց մեկ-  
նիչներուն երեւակայութեան մէջ կային »։ Սակայն  
մօտերս գտնուած ապացոյցը թէ Բաբելոնի նախնի  
բնակիչք Քուչեան էին, այնչափ զօրաւոր է որ՝ ա-  
մենէն երեւելի պատմաբաններէն մին՝ Մ. Լենորման,  
իր գրուածոց մէջ կ'ընդունի, թէ Բաբելոնի մէջ Սեմ-  
եան պետութիւնը՝ հաստատուելէն քանի մը դար ա-  
ռաջ Քուչեան պետութիւն մը կար։ — Սըր Հենրի  
Բոլինսըն՝ որ իր կեանքն անցուցած է հին ազգաց  
պատմութիւնը քննելով, կ'ըսէ. « Ծննդոց Գրքին

Ժ.րդ գլուխն ամենէն հին պատմական հատուածն է .  
եւ ազդաց նախնական համացեղութեան վրայ ամե-  
նէն արժանահաւատ վկայութիւնն է » : Նոյն հեղի-  
նակը աս ալ կ'ըսէ . « Եթէ մէկ դի դնեմք Աստուա-  
ծաշունչը եւ միայն մեր հետազօտութեանց հետևիմք,  
պիտի համոզուիմք թէ Աննասարի դաշտն է այն տեղը  
ուսափ ցրուեցան երկրիս բոլոր ազգերը » (Ծննդ. Ժ.  
1—9 : Journal of Royal Asiatic Soc. հատ. ԺԵ. Մասն-  
թ. էջ 232) : Սըր Հենրիի եղբայր Բրոֆ . Բոլինսըն  
եւս կ'ըսէ . « Մովսէսի Գրոց պատմութիւնը համաձայն  
է արդի պատմական հետազօտութեանց : Ինչ որ այն  
Գրոց մէջ ըսուած է տեղերու, ազգերու եւ լեզունե-  
րու վրայ՝ ճշմարիտ է, եւ որչափ աւելի հմուտ կ'ըլ-  
լամք այն հին դարերուն . այնչափ աւելի կ'հաստատուի  
Հնգամատենին նշմարտութիւնը » :

---

## ԱՇՏԱՐԱԿԱՇԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄՆ

### ԼԵԶՈՒԱՑ

Ջրհեղեղէն ետքը մարդոց առաջին բնակավայրը  
եղաւ Նոյի տապանին նստած տեղուանքը, որ անստա-  
րակայս չ'է թէ Մասեաց սուր գագաթին վրայ նըս-  
տած էր, որ 14,000 ոտք բարձր է շրջակայ գետնէն,  
և վերին մասը իբր 3,000 ոտք բոլորովին ուղղահայ-

եաց . և մշտնջենաւոր ձիւներով պատանուած է . այլ անոր խոնարհագոյն մէկ կողին վրայ , ուսկից նաւին բնակիչք դիւրաւ կրցան իջնել եւ այն տեղուանք բնակութիւն հաստատել : Ասիկայ կ'հաստատուի նաև արտաքին հին պատմութենէ . Արիւդենոս , Թազմա-վէպն Աղեքսանդր և Թիւզանդացին Փաւստոս կ'ըսեն թէ իրենք աչքովմին տեսեր էին որ Հայք ստէպ կ'եր-թեւեկէին նաւին գտնուած այդ տեղը , եւ անոր բե-կորներէն (որ մինչեւ իրենց օրերը դեռ եւս կ'կենա-ին) կ'առնուին կ'բերէին « Դեղ օգնականութեան բնակչաց աշխարհին » , եւ « ի ծեփածոյ նաւին նաւ-թոյ ի բժշկութիւն և ի ջնջան ցաւոց ինչ բժժանաց » (Քուզ Դար . Գ. Գլ. Ժ : Եւսեբ . Քրտն . հատ . Ա : Խոր . ի պատմ . Հռիփ.) :

Ինչպէս ըսինք , լերան այդ խոնարհագոյն կողէն տապանին բնակիչք կրցան դիւրաւ իջնել հարթ եր-կիրը , եւ առ տեղեաւն՝ դրին բնակութիւննին . որով և իրենց այդ առաջին իջնեան ըրած տեղին անունն ըսուեցաւ Նվիճնուան կամ Նախջուան . որ է Նախի-ջեւան : Հետեւեալ տարին անշուշտ տեղւոյն բնա-կիչք ի գլուխ տարւոյն՝ նախորդ տարրուան մէջ ի-րենց ականատես եղած այն ահաւոր տեսարանը յի-չեցին եւ այն աշխարհակորոյս ջրհեղեղին յիշատակը կատարեցին՝ իրար ջրերու՝ լիճներու մէջ դլորելով , ի-րարու վրայ ջուր թափելով . ինչպէս ետքէն սովո-րութիւն եղաւ այս մինչեւ ցայսօր . եւ աղաւնիներ թոցընելով ի յիշատակ նոյի արձակած աղաւնինե-րուն . և այնուհետև տարւոց տարի տօնեցին այդ տօնը , որ ետքէն Վարդավառ ըսուեցաւ կոտապաշտու-թեան ատեն՝ նուիրուելով Ամանորայն դից Արամազ-

դայ (1), որուն բագինը վարդերով կ'զարդարէին այս  
տարեգլխի տօնին :

Մարդիկ արագ բազմանալով՝ ո'չ եւս կրնային այն  
տեղ ի միասին բնակելու . երկիրը բաւական չ'ըլլա-  
լով այնչափ բազմութեան բնակութեան և անեղեան,  
և հարկ եղաւ իրենց ուրիշ արդաւանդ տեղեր փըն-  
տրուելու . ուստի գաղթականներ ելան անոնցմէ և  
Արեւելքէն դէպ ի Սենաարայ դաշտերը չուեցին և  
այն կողմերն ալ տարածուեցան : Անկից ալ հարկ ըլ-  
լալով աւելի հեռաւոր և ընդարձակ տեղուանք գաղ-  
թականութիւններ խրկելու՝ իրենց արագ արագ ա-  
ճելութեան պաաճառաւ, իրենց գլխաւորներուն խոր-  
հըլդովը որոշեցին այն տեղ քաղաք մը շինել (Ծը-  
հեղեղէ իրբ 120 տարի ետքը) իրենց կեդրոնավայր ըլ-  
լալու համար, և յոյժ բարձր աշտարակ մ'ալ՝ որ գը-  
լուխը մինչեւ երկինք հասնի . որպէս զի թէ՛ պար-  
ծանքի համար իրենց յաւիտենական յիշատակ մ'ըլ-  
լայ ան, և թէ՛ միանգամայն իրենց միութեան մայր  
=նակութեան կեդրոնայոյցն ըլլայ, և բոլոր երկրի  
վրայ ցրուելով իսպառ չ'հեռանան իրարմէ . այլ ամե-  
նէն հեռաւոր տեղերէն կարող րլան անոր բարձրու-  
թեան գագաթը տեսնել և վերադառնալ կեդրոննին  
( Ծննդ . ԺԱ . 1-ն ), ուր Ներբազթ իրենց գլխաւոր-

(1) Ո. Գր. լուսաւորիչ այս ամենէն հինաւուրց տօնր՝ միւս  
հեթանոսական տօներուն հնտ չ'ջնջեց՝ սրբ հայերը Քրիստոնէ-  
ութեան դարձուց. քննելով իմացաւ որ անոր սկզբնաւորութիւ-  
նը ճշմարիտ Աստուածպատութեան ժամանակէն էր՝ Աստու-  
ծոյ հրաշալի փրկութեան յիշատակին համար սահմանուած. մի-  
այն՝ որովհետեւ հեթանոսութեան ատեն Ամանորի կուռքին  
պատւայն համար տօնել սկսեր էին այն տօնը, նորէն ճշմար-  
տին Աստուծոյ ի պատիւ տօնել հրամայեց՝ յիշատակաւ Այլա-  
կերպութեան Փրկչին :

ներուն զօրագոյնը սկսած էր տիրապետել և աշխարհի առաջին պետութիւնը հիմնել. թերևս երրորդ պատճառաւ մ'ալ. այսինքն՝ որպէս զի եթէ երկրորդ ջրեղեղ մ'ալ պատահի՝ անոր բարձունքն վերելակելով կարենան զերծանիլ այն երկրորդ Աստուածաստ պատուհասէն։ Ասոր համար, կ'ըսէ Գիրքը, աղիւս շինել ոկսան և կրակի վրայ թրծելով քարերու տեղ դործածեցին զանոնք, և շաղախի տեղ ալ ձիւթ, որ այն տեղուանք շատ կ'գտնուէին գուբերով լեցուն. և այնպէս բաւական բարձրացուցին չէնքը։ Սակայն անոնց այս ամբարտաւան քան ամբարիշտ խորհուրդը հաճելի չ'էր Աստուծոյ, և մէկ վարկենի մէջ անգործադրելի ըրաւ զայն՝ անոնց ամենուն լեզուն մէկէն խառնակելով այն տեղ, այնպէս որ իրարու խօսք չ'հասկնալով՝ չ'կրցին գործքերին ալ յառաջ տանիլ, և ցրուեցան տիեզերաց ամեն կողմերը՝ այնպէս կիսկատար թողլով աշտարակին չէնքը։ Եինած քաղաքնին կոչուեցաւ Բաբելոն, այսինքն՝ խառնակուրիւն, լեզուաց խառնակութեան պատճառաւ, և աշտարակը Բաբելացւոց ձեռքը բաւական ատեն իբրեւ տաճար Բելայ և դիտարան արեգական և երկնային մարմնոց գործածուելէն ետքը՝ Բաբելոնի անկմամբը ան ալ երեսի վրայ թողուեցաւ, և ատեն անցնելով կամաց կամաց կործանեցաւ՝ աւերակաց կոյտ դարձաւ ( Ծննդ. Ժ. 5-9 ). ինչպէս կ'պատմէ Ստրաբոն։

Տօքթը Անկըս կ'ըսէ թէ ( ի Ներած. Ս. Գր. Հատ. Բ. էջ 41-42 ), շատ դարեր ետքը Բաբելացւոց Նաբու-քողոնոսոր թագաւորը ուրիշ աշտարակ մը շինեց յիշեալ նախնի աշտարակին աւերակաց մօտերը հաւանականօրէն. այս երկրորդ աշտարակն ալ ետ-

քէն կործանուած է և անոր աւերակները դեռ եւս կեցած են այժմու Հելլահ քաղքին մօտ , և կ'կոչուի Պորսիրա , կամ « Լեզուաց աշտարակը » : Մօսերս այդ աւերակներուն մէջէն սեպաձեւ արձանադրութիւն մը գտնուեցաւ , որուն մէջ Նաբուքողոնոսոր կ'ըսէ թէ՝ Ինքը շինեց այն աշտարակը՝ նախորդ թագաւորէ մը շինուած ուրիշ վաղեմի աշտարակի մը հիմանց վրայ : Յիշեալ արձանագրութեան մէջ սա խօսքը դրուած կայ . « Վաղ ժամանակաւ ժողովուրդը թողած է զայն (հին աշտարակը) ; չ'կրնալով իրենց խօսքը ըստ օրինի յայտնել » : Ե՞յլ խօսքը յայտնի ակնարկութիւն ըլլալով լեզուաց խառնակութեան՝ Գրքին պատմութիւնը կ'հաստատէ :

Գալով Գրքին պատմած լեզուներու խառնակութեանց բաժանումներուն , ամենեւին հակառակ չ'են Գիտութեանց . և լեզուակազմաբանութեան տեսութեանց լիովին կ'պատասխանէ : Վասն զի լեզուներու խառնակումը այնպէս չ'եմք իմանար , իբր թէ ամեն մէկ ընտանիք կամ գերդաստան սկսան բոլորովին նոր լեզուներ խօսիլ այն տեղ . այլ հաւանականօրէն իւրաքանչիւր գերդաստանի լեզուին տարբերութիւնը կայացաւ իրենց սկզբնական լեզուն այնպիսի կերպով արտէքերելուն մէջ՝ որ միւսները չէին համեսնար : Սո մի և նոյն նախնական լեզուն գլխաւոր երեք մայր լեզուներաւ ճիշդաւորեցաւ նոյի որդւոց երեք մեծ գերդաստաններուն թուռվը , ինչպէս հաւանօրէն կ'յայտնեն Գրքին խօսքերը (Ծննդ. Ժ. 5. 20. 31) , որոց տարբեր արտասանութիւններէն ալ ճիւղաւորեցան շատ ուրիշ լեզուներ :

Կ'գտնուին լեզուաբաններ որ կարծիք յայտնած են թէ լեզուները ո'չ թէ մէկ կամ երեք լեզուներէ

ճիւղաւորուած են, այլ սկիզբէն շատ մայր լեզուներ եղան, որք մէկ կողմէն կ'մարէին կ'մեռնէին կ'անհետանային, և միւս կողմէն ճիւղեր արձակելով նորեր կ'ծնէին կ'աճէին կ'բազմանային: — Աս ալ կարծիք ենթադրութիւն է, արհամարհելի չ'է ։ բայց ստուգութիւն չ'է. և եթէ ստուգուի ալ՝ ամենեւին չ'հակասիր Գրքին ըսածներուն: Գրքին ըսածը աս է թէ՛ Տէրը բոլոր երկրին լեզուն խառնակեց. անանկ որ « Խրաքանչիւր իր ընկերին լեզուն չ'հասկնայ » . (Ծննդ. ԺԱ. 7—9): Այդ լեզուները ամենքն ալ թէ՛ զատ զատ մայր լեզուներ եղած ըլլան, եւ թէ երեք ճիւղեան լեզուաց գաւառաբարբառներու ճիւղաւորումներ, ասոնց երկուքն ալ Գրոց իմաստից գէմ չ'են, միանգամայն միաբան ալ են. սակայն սկըզբնական շատ մայր լեզուներու ենթադրութիւնը լեզուաբաններու ընդհանուր վարդապետութեան հակառակ է:

Լեզուներու ուսման ուշադրութիւն ընող գիտուն լեզուաբանք այլ և այլ լեզուաց մէջ բառերու և խօսքի ձեւերու կողմանէ նմանութիւններ գտնելով, այդ նմանութիւններէն կ'հետեւցընեն թէ բոլոր լեզուները մի՛ և նոյն սկզբնական լեզուէ մը ծագումն առած են, ինչպէս Աստուածաշոնչը կ'պատմէ. եւ այս նմանութեանց վրայ հիմնելով յիշեալ գիտունք լեզուաց բաժանում մը կ'հիմնեն՝ երեք ճիւղերու վրայ. Ա. Սեմական լեզուի, որոց մէջ կ'դասաւորին Եբրայեցերէնը, Արաբերէնն ու Ասորէրէնն: Բ. Յաքերական լեզուի, որոց մէջ կ'պարունակուին ( Հայերէնը ), Յունարէնը, Լատիներէնը, Հնդկաց Մանսքրիդ լեզուն և Հիւսիսային Ասիոյ և Եւրոպայի մէջ, ինչպէս նաև Ամերիկայի Նւրոպայի գաղթականաց մէջ խօս-

ուած գրեթէ բոլոր լեզուները : Այս ցեղ լեզուները երբեմն կ'կոչուին նաև Արիական, Հնդեւրոպական եւ կամ Խնտոգերմանական, ցուցնելու համար թէ այս լեզուները ուսկից մինչեւ ուր տարածուեր են : Դ. Քամեան լեզուք, որոց մէջ կ'գտնուին չին Բաբելացւոց լեզուն, Եգիպտացերէնը և Ափրիկէի լեզուները (միայն Զիները ի բաց առնելով, որ այս երեք դասերէն մէկուն տակ դասաւորուիլ չ'է կըրցած) :

Հիմա երկրի վրայ խօսուած լեզուներուն թիւը իբր երկու կամ երեք հազար կ'կարծուի, որոց զանազան ճիւղաւորումներն ալ մեկտեղ առնելով մինչև 7,000ի կ'հանեն ոմանք : — Ինչպէս կ'առեսնուի՝ լեզուաբաններու վերոյիշեալ բաժանումը կ'պատասխանէ նոյի երեք որդիներէն սերեալ ազգաց վրայ Ծնընդոց Գրքին մէջ յիշուած ազգահամարին : Այս երեք դաս լեզուաց մէջ տեսնուած նմանութիւնը, որ բոլոր լեզուաց մի և նոյն սկզբնական մայր լեզուէ մը ծագում առած ըլլալնին կ'ցուցընէ, բաւական հաստատութիւն է Ս. Գրոց պատմութեան, թէ աշխարհիս կանխական դարերուն մէջ մարդիկ համախօս եւ միալեզու էին :



## ԿՈՐՄԱՆՈՒՄՆ ՍՈԴՈՄ ԵՒ ԳՈՄՈՐ ՔԱՂԱՔԱՑ

Սոդոմ և Գոմոր քաղաքաց Աստուածային պատուհասն ալ ուրեք ուրեք յառաջ բերուած են իրեւ առարկութիւն, ըսելով թէ՛ Գիրքը թէ՛ ինքզինքին և թէ՛ միանգամայն Գիտութեանց դէմ խօսած է: Հակառական չ'է՞ կ'ըսեն, այս քաղաքներուն Աստուծոյ կողմէն կործանուիլը՝ Իրեն այն ուխտին դէմ: որով ուխտեց Նոյի մէյմ'ալ հանրական պատիժ չ'տալ աշխարհի, մարգիկը համանգամայն կորսնցընելով, եւ երկնքէն հուր և ծծումբ տեղալը Գիտութեանց՝ բընական օրինաց դէմ չ'է՞: — Աս ալ Գրքին խօսքերուն բանագրոսիկ քաշկուտուքէն ելած առարկութիւն է: Աստուած իր ուխտը հաստ ստեց Նոյի հետ, ըսելով թէ՛ Մէյ մ'աւ բարոր երկրի վրայ եղող տեսն մարմին՝ ա ևն մարդ միանգամայն չ'պիտի ջնջեմ կորսնցընեմ ջրհեղեղով (Ծննդ. Թ. 8—17): ԲՈՒԹՐ ԵՐԿԻՄԸ չ'պիտի անմարդացընեմ, ըստու բայց չ'ըստու թէ երկրի այս ինչ մասն՝ այն ինչ քաղքին կամ քաղաքներուն հանրական պատիժ չ'պիտի տամ: ասիկայ ո՛չ հակառական՝ ո՛չ ալ հակառակ է: Նոյնպէս Գիրքին՝ այն քաղաքներուն վրայ Աստուած հուր եւ ծծումբ տեղաց՝ ըսելը (Ծննդ. ԺԹ. 24—29), ա ևնեւին հակառակ չ'է բնական օրինաց: որչա՛փ անգամներ իմացեր եմք և պատ նութիւնը վկայեր է՝ թէ այս ինչ եւ այն ինչ քաղաքները երկինքէն քար՝ մոխիր՝ շանթաքար՝ կար իր անձրեւ ևայլն տեղացեր են,

անտարակոյս բնական պատճառներով, ո՞ր մէկը ուրական հողմերէ, ո՞ր մէկը թաթառներէ, ո՞ր մէկն ալ ուրիշ դեռ չգիտցուած բնական պատճառներէ։ Կրնար այս բնական պատճառներէն մէկն ալ Աստուած իբրեւ միջոց գործածած ըլլալ իւր նպատակը յառաջ վարելու համար։ Բայց Գրքին ըսածը աս չ'է։ անոր բացատրութենէն պարզապէս հասկցուածը աս է թէ՝ Աստուած պատճեց այն քաղաքները հրաշքով և կամ բնական օրինաց միջոցաւ՝ հրաբխային հարուածով, ինչպէս ենթադրած են շատ քննիչներ։ Ասոնց և ո՛չ մին հակառակ է Գիտութեանց, և մեզ ալ ըսելիք չ'մնար ասոր վրայ։



## Ի՞ՆՉ Ի՞ՆՉ ԵԳԻՊՏԱԿԱՆ ՎԱՐԵՄԻ

### ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՔ

Աստուածաշունչը պախարակողներէն ոմանք Մովսէսի Հնգամատենին վաւերականութիւնը դերեւելու համար սա առարկութիւնն ալ ըրած են թէ անոր մէջ կան յիշուած քանի մը սովորութիւններ կամ ակնարկութիւններ որք եգիպտական չ'են, կամ Մովսէսի ժամանակէն շատ ետքը՝ Հրէից եգիպտոսէն ելնելէն երկար ատեն ետքը եգիպտացւոց մէջ մտած էին։ Այսպէս են, կ'ըսեն, էշ պահել . (Ծննդ. ԽԵ. 25), ըստ որում այս անստունը հին եգիպտացւոց գարցելի էր։ Ներքինի ունենալ (Անդ. Լէ. 36). ծառայից իրենց տէրերուն ընտանեացը մէջ համարձակութիւնը (Անդ.

լթ.), գինւոյ գործածութիւնը (Անդ. Խ. 9—22), ո-  
րուն համար Երողոտոս կ'ըսէ թէ Եգիպտոսի մէջ չը  
կար. նոյնպէս մատանի և ուրիշ զարդեր գործածե-  
լու (Անդ. ԽԱ. 42), վերակացուներ ունենալու (Անդ.  
ԽԴ. ԽԴ.), սեղան նստելու սովորութիւնները (Անդ. ԽԴ.),  
չէնքերու համար աղիւս գործածելը (Ելք. Ա. 14) ևայլն:  
Բայց նոր գտնուած եգիպտական հնութիւններ կամ  
յիշատակարաններ ասոնց ամենուն ալ հնուց ի վեր  
եգիպտական ըլլալը կ'հաստատեն: Եգիպտոսի մէջ  
դեռ կ'գտնուին աղիւսներ, որոց վրայ եգիպտական  
ամենէն հին թագաւորներուն անունները գրոշմուած  
են. և շատ յիշատակարաններու վրայ կ'տեսնուին  
ներքինիներ, վերակացուներ, զարդեր, խնջոյք, և ու-  
րիշ նկարագիրներ, որոնց մէջ յայտնի կ'տեսնուին թէ  
Եգիպտացւոց հին ընկերական սովորութիւնները ճիշդ  
այնպէս էին, ինչպէս Հնդամատեանը կ'պատուի: Նոյն  
իշատակարանները կ'ցուցընեն թէ Եգիպտացիք կ'ա-  
ծիլուէին (Ծննդ. ԽԱ. 14.), գլխով բեռ կ'տանէին և  
ոչ կոնակով (Անդ. Խ. 16), թէ հովիւններն արհամարհելի  
էին եւ նշաւակ Եգիպտացւոց ծաղրաբանութեանը,  
(Անդ. ԽԳ. 32: ԽԶ. 31), թէ ժողովուրդը այլ և այլ  
ջոկերու բաժնուած էր (Անդ. ԽԷ.) թէ օտարականաց  
Եգիպտոսի հոչակատոր « Բեհեզէ հանդերձներ » հագ-  
նիլն՝ անոնց քաղաքացութեան իրաւունք ստացած  
ըլլալուն նշան էր (Անդ. ԽԱ. 42): Բոլոր այս իրո-  
ղութիւնները հաստատուած են քանդակներու վրայ  
տեսնուած պատկերներով, և կամ Երողոտոսէ յայտ-  
նապէս յիշուած են իբրեւ Եգիպտոսի յատուկ սովո-  
րութիւններ (տե՛ս ի ներած. Ս. Գր. Հատ. Բ. էջ  
7—8):

ՅԵՍՈՒԱՅ ԱՐԵԳԱԿԸ ԿԵՑԸՆԵԼԸ ԵՒ

ԵՍԱՅԵԱՅ ԵՏ ԴԱՐՁԸՆԵԼԸ

Իբրեւ լրումն գլխաւոր առարկութեանց ընդ մէջ Քրոց և Գիտութեանց՝ մէջ կ'բերուին նաև Յեռուայ արեգակը կեցընելը, եւ Եսայեայ (առ Եղեկիայիւ) արեգական ստուերը արեւու ժամացուցին վրայ տասն աստիճան ետ դարձընելը<sup>(1)</sup>, որոց համար առարկուք կ'ըսեն թէ Գիրքը ատոնք պատմելով ըսած կ'ըլլայ թէ արեգակը երկրի շուրջը կ'դառնայ, որ աստղաբանութեան վարդապետութեան հակառակ է։ Այս առար-

---

(1) Սինէացւոց սրբազն զրոց մէջ կ'յիշուի Յեռուայ արեգակը կեցընելու հրաշքը սա խօսքերով։ « Եաօյի Խազաւորութեան ատեն արեգակը տասն օր հորիզոնէն վեր անշաքժ կեցաւ »։ Հարկ չ'կայ ըսել թէ աս ո՞ո՞ օրուան Թուոց առաւելութիւնը՝ Սինէացւոց ամեն բանի մէջ Թուոց չափսզանցութիւն ընելու սովորութիւններնուն է։— Ովիդիոս Հատին հեթանոս բանաստեղծը իր « Ֆաթոնի կառք » կոչուած երեւայական պատմութեան մէջ կ'ըսէ թէ՝ առաջ հե ո՞բո՞լ որ հե ի՞սսո՞ւեցո՞ւ։ Նոյն պատմութեան մէջ Ֆաթոն Քանանացի իշխանին անունը յիշած ըլլալէն յայտնի կ'ըլլայ թէ Ովիդիոս Փիւնիկեցիներէն առած է աս պատմութիւնը, որոյ դէմ պատերազմած ատեն Յեսու՝ աս հրաշալի իրողութիւնը տեղի ունեցաւ։— Երողոտոս նմանօրինակ դեպք մ'ալ յաւազ կ'բերէ։ կ'ըսէ թէ Եղիպտացիք իրեն պատմեր են որ Օք հե ո՞բո՞ւէ Աքւասուտէ ի՞սկէն նո՞եր դե՞ք Աքե՞ւց դշեր ե։ Աս ալ առ Եղեկիայիւ արեւու ստուերին տասըն աստիճան յետաղարծի հրաշից աղաւաղութիւնն է՝ անտարակոյս

կութիւնք ևս Գրքին խօսքերը սխալ առնելէ յառաջ եկած են, որոց վրայ խօսիլը թերեւս չ'արթէր, բայց պէտք է խօսիլ։ — Գիրքը ըսած չ'ունի թէ՛ Արեգակը Երկրիս բոլորտիկը կ'դառնայ. թէ՛ և այն տեղ՝ Երկիրն է որ արեգական ուրբար կ'դառնայ ալ ըսած չ'է։ — Գիրքը այս տեղ (Յես. Ժ. 12—14) իր կողմանէ չի խօսիր, Յեսուսին բերնէն կ'խօսի Յեսուսին ըսածը յառաջ կ'բերէ։ Յեսուս՝ ինչ որ կ'անսներ՝ այնպէս կը խօսէր. ինչպէս մենք ալ գիտնալով հանդերձ թէ արեգական շարժումները առերեւոյի՛ են և շարժողը երկիրս է եւ ոչ արեգակը, աչքովնիս տեսածնուս պէս կ'ըսեմք, Արեգակը ծագեցաւ, բարձրացաւ, դարձաւ, մայրը մոռաւ, ևլն. բայց Յեսուսին համար վստահաբար կրնամք ալ ըսել թէ ինքը տեսածին պէս գիտէր լուսաւորաց շարժումը. Գիտութիւնք յայնժամ փիլիսոփաներու խառնակութեանց թոհ-բոհին մէջն էին. գիտուններն ալ չ'էին գիտեր ան ատենները. թէ երկիրս էր արեգական շուրջը դարձողը, և ոչ արեգակը երկրիս չուրջը. հետեւաբար Յեսուս ինքն ալ իր բանակն ալ իրենց աչքերուն տեսածին պէս կ'հաւատային թէ դարձողը արեգակն էր. անոր համար արեգական ըսաւ թէ. « Կեցիր » տեղդ. բայց իր նպատակը Արեգակն է դանուլի ըսել չ'էր. իր նպատակը գիշերը ուշացընելն էր. և առ այն վախնալով որ մութը վրայ չ'հասնի, գիշերուան իշխող լուսաւորին (լուսնի) ալ ըսաւ որ կեցած տեղէն չ'խախափ՝ յառաջ չ'երթայ։ Այնպէս ալ եղաւ. հրաշխով արեգակը և լուսինը մէկ օրուան չափ տեղերնուն չ'խախափացան, այսինքն՝ այնպէս երեցան։ Մենք ցոյց տուած եմք այլուր՝ թէ Յեսուայ՝ արեգական հետ կուսնի ալ « Կեցիր » ըսելը՝ արդի աստղաբանութեան համա-

ձայն էր. իսկ կատարումը՝ հրաբ էր։ Գիրքը Յեսուայ այս խօսքը յառաջ բերելովը Գիտութեանց հակառակած չըլլալէ զատ՝ ուրիշ տեղ յայտնի ըստ է թէ շարժունը երկիրս է և ոչ արեգակը ( տե՛ս ի Քննական Կրօնագիտ. տպ. Բ. էջ 509-510 )։— իսկ Եսայեայ արեգական ստուերը արեւու ժամացուցին վրայ տասն աստիճան յետս ընկրկելը ( Դ. Թադ. Ի. 8-11 )՝ եթէ երևութական և վայրկենական չէր իբրև նշան՝ իր բերած պատգամը Եղեկիայի հաւատալի ընելու համար միայն, ուրեմն հրաբ էր, և մենք հրաշից վրայ ետքերը պիտի խօսիմք։



# Բ.

**Մինչեւ հռո կ'վերջանայ՝ Աստուածաշունչը չ'սերողներուն (1) ընդհանուր կամ գլխաւոր առարկու-**

(1) Աստուածաշնչին ամենէն կատաղի Թշնամիներէն եղած է անուանի անկատուածն Վոլթեր, որ մեռքէն եկած ամեն միջոց ի զործ դրաւ Գիրքը հալածելու համար, որու դէմ իր մէկ հատիկ զէնքն էր ծալը, միշտ ծաղրել անցնիլ անոր ամենէն յուրջ վարդապետութիւնները, պատմութիւնները եւ բառերն իսկ, առանց բնաւ օրինաւոր պատասխանոյ կամ հերժման. եւ նեղը մտած ատեն առանց ամենեւին խիղճ ընելու սուտն ալ քշելու չ'է վարանած. Գիտութեանց դէմ ալ բնութեան օրինաց հակառակ եւս խօսելէ քաշուած չ'է, բաւական համարելով որ իր նպատակը յառաջ վարելու յաջուղէր. . . . Որպէս զի Հնգամատենին վաւերութիւնը. եւ անոր Աստուածայնութիւնը սուտ երեւցընելու ատիկէ, էն խոշոր սուտը մէշտեղ զլորելէ չ'է կասած. եւ ըսած է Խէ Մովսէսի ատենը գեռ զիրը հնարուած չ'էր. բայց անոր այս ըսածը ոչ միայն զիւտերու ծշմարիտ պատմութիւնը բոլորպին սուտը կ'հանէ, այլ նոյն իսկ իրեն անկատուած զաղափրոնները պաշտողներն անզամ՝ որոցմէ է եւ Դալուստ Կոստանդնեան՝ կ'հաստատեն. Խէ զիրը 5000 տարիէն աւելի առաջները կար, եւ կ' զործածուէր. այսինքն՝ Մովսէսին իրը 1500 տարի առաջ. եւ այս յոյժ յարմար կուզայ Գրքին ի'նչ ի'նչ ակնարկութիւններուն, որոցմէ մեկնիչք ոմանք կ'հետեւցընեն Խէ Մովսէս իր Հնգամատեանը զրած ատեն արդէն իր մեռը ունի, հաւանականաբար հին զրութիւններ. եւ անոնցմէ մին կ'. յիշէ ինքը «Տերոշը պատերամներուն Գիրքը » տնուանելով (Թու. հԱ. 14-15): Ո՞ւր Խողումք որ Յեսու եղբ Քանանացւոց երկիրը նուանեց, այն տեղ Դաբիր

Թիւնները, որք ամենեւին չեն զօրել Գրքին մէկ նշանախեցն անդամ ցոյց տալ թէ Գիտութեանց հակառակ է. ընդհակառակն մենք մինչև հոս տեսանք որ ըստ ամենայնի միաբան են Գիրք և Գիտութիւնք, և զիրար կ'լուսաբանեն. կ'մնայ այժմ Տիեզերաց կա-

քաղաքը կար, որուն առջի անունը Կոբեն - Սեֆեր էր ( Յես. ԺԵ. 15 ). այսինքն՝ Գէրէ +ուշ+. ըսել է ան ատեն ոչ միայն գլուխ ալ կային ( տես ի ներած Ս. Դր. Հառ. Բ. էջ 5-6 ) ի հէմուկս Վոլթերի, որ կ'ստէր՝ առանց կարմրելու. — Շատեր կ'համարեն թէ զիրը նախաջրնեղեղեան նահապետաց ատենի զիւտ է. Փիւնիկեցիք եւ եզիպոսացիք թեւե կամ թեւդ անուն աստուած մը կ'զնեն զրոց գտակ, որ ներեւս Սէթ նահապետը կ'ակնարկէ, Դիտուն հեղինակ մը այսպէս կ'նկարագրէ զինքը. Վոլթեր ոչ թէ տրամարանող՝ այլ ծաղրող էր. Վոլթեր հանձար էր. բայց ո՛չ թէ ճշմարտապէս զիտուն։ Թէ ի՞նչ հեղինակութիւն ունենայու է Վոլթեր իրեւ զիտուն, կ'երեւի փիլիսոփայական բառարանին մէջ խեցիներու վրայ զրած յօդուածէն, ուր կ'ըսէ. « Զեմ ուրանար թէ ծովէն հարիւրաւոր մղոն հեռու տեղեր կ'զտնեմք բարացեալ ոստրէներ, խեցիներ, եւայլն, որ ծովային խեցիներու կ'նմանին. բայց միթէ վստա՞հ եմք թէ երկրի հոլը չ'կրնար յառաջ բերել այս բարացեալ խեցիները. Նկատերով բուսային ակատի բուսնելք՝ պարտիմք զգուշաւոք ըլլալ մեր եզրակացութեան մէջ: Ինչպէս որ ակատը ծառէ յառաջ եկ սծ չ'է եւ կ'նմանի ծառի, նոյնպէս կրնայ ըլլալ որ ծովէ յառաջ եկած չ'ըլլան բարացեալ խեցիներն որ կ'նմանին ծովային խեցեմորթաց : — Ընդ դէմ բանի եւ բնութեան այսպիսի այլանդակ եզրակացութիւն մը իրեւ ճշմարիտ զիտունի ողջամիտ վարդապետութիւն ընդունել ուզողը անտարակոյս յիմար չ'է նէ ամենեւին խելառ ըլլալու է. եւ մենք այնպիսւոյն հետ գործք չ'ունիմք: — Անզոլիացի հոչչակաւոք պատմաբանն Լորտ Մազոլէյ ասպէս կ'խօսի Վոլթերի վրայ. « Վոլթեր չ'էր կրնար շինել. նա բանդէլ կործանել միայն զիտէր. էր կործանման ճարտարապետ. Վոլթեր նողած չ'է մեզ ոչ մի վարդապետութիւն որ յիշուի անոր անուամբ. բնաւ բան մը աւելցուցած չ'է զիտութեան գանձուն »:

ռավարութեան խնդիրը ձեռք առնուլ, որ ամենէն հատու և զօրաւոր գէնքը համարուած է Գիրքը արհամարհողներուն ձեռքը:



## ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՏԵԶԵՐԱՑ

Սստուած սատղծեց տիեզերքը, բոլոր աստղային կամ արեգակնային դրութիւնները. և անոնց մէջ եղած ամեն բնական և բարոյական էակները. հետեւաբար նա միայն կարող է իր յառաջասահման նըպատակին ուղղութեանը մէջ վարել զանոնք. վասն որոյ Գիրքը կ'ըսէ թէ՝ մինչեւ իսկ երկուքը մէկ լսաւակի ծախուող ճնճղուկներէն մին գետինը չ'իյնար առանց Սնոր. և ոչ մարդուն գլխէն մազ մը կ'կորսուի առանց Ստեղծողին կամաց: — Իսկ բնական Գիտութիւնք՝ թէ՛ ուղղակի չ'են ընդհարիր Գրքին ասըսածներուն, չ'են հերքեր զանոնք բացէ ի բաց, բայց չ'են ալ հաստատեր ապացուցութեամբ. վասն զի անոնք միայն բնական զօրութիւնները՝ բնական զօրութեանց օրէնքները կ'առեսնեն. բարոյական զօրութեանց և անոնց օրինաց հետ բան չ'ունին: Անոնց գործը նիւթին վրայ ըլլալով՝ նիւթով միայն կրնան զբաղիլ աչքերնին նիւթին յար վոփոխմունքներուն՝ բնական զօրութեանց և օրինաց ներքեւ առած այլ և այլ նոլանոր երևոյթներուն յառած՝ ան միայն կ'առեսնեն. նիւթին վրայ աղդող բնա-

զանցական զօրութիւնը չ'են տեսներ և չ'են կրնար ատանկ բան մը ապացուցանել . ասիկայ բնազանցութեան գործն է : Ուստի ճշմարտութիւնն ըսած կըլլամք՝ ըսելով որ, ՞է թէ բնական Դիտութիւնք ինքնին, այլ գիտուններէն ոմանի են որ կառնեն Արարչէն իր գործերը և կուտան զանոնք երկրորդական պատճառներու, այսինքն՝ բնական զօրութեանց, փակելով նոյն ատեն աչքերնին բուն առաջին պատճառը ( զ'ԱՄԱՍԱՅԻ ) չ'տեսնելու, որ միայն կըրնայ բացատրել երկրորդական պատճառնելը :

Բովանդակ Գիտութիւնք՝ անհստուածային դրութիւնը՝ անվաստուած նիւթականութիւնը բոլորովին հակառակ կ'գտնեն բնական վարդապետութեան, և նոյն ատեն կ'խոստովանին թէ ամեն Գիտութեանց նախատարիերց գերբնական սկզբնաւորութեան հարկին տակ ի դոյութիւն եկած են : — Աշխարհի մեծագոյն գիտունները ճանչցած և խոստովանած են թէ բնութեան օրէնքները չ'էին կրնար ոչ ինքնագոյութեամբ ծագիլ բուսնիլ . ոչ ինքնին հաստառուիլ կարգագրուիլ, ո՛չ ալ իւրովի շարժիլ և գործել : — Մեծ գիտունն Ակասիզ՝ որ քանի մը տարի առաջ Ամերիկայի մէջ մեռաւ, երբ բնական գիտութեան վրայ խօսէր, բնութեան մէջ տեսնուած երեւոյթներու և իրերու նկատմամբ յաճախ կ'ըսէր . « Այս իրերը կ'ցուցընեն միտք մը . ասոնք կ'ցուցընեն թէ խորհող և իմաստուն միտք է Հեղինակն ընութեան » : Տրէլրը կ'ըսէր թէ՝ Նախնական իմաստութիւն մը՝ այսինքն ինքնագոյ իմաստուն էակ մը կանխաւ տեսաւ և կարգագրեց բնական զօրութիւններ՝ որ որոշեալ արդիւնք յառաջ բերեն : Մեծըն Նեւտոն իւր տեսաբանութեան ( Opties ) երրորդ

գրքին մէջ կ'ըսէ . « Աշխարհներ Ստեղծողին՝ իրեն  
կ'իյնար իր ստեղծած աշխարհները կարդի դնել :  
Ողջամիտ փիլիսոփայութեան հակառակ է աշխարհի  
ծագումն ուրիշ կերպով եղած ենթադրել , կամ պըն-  
դել թէ աշխարհ կրնար քաւուէ ելնել՝ լոկ բնու-  
թեան զօրութիւններով » : Քերլեր աստղագետն ալ՝  
Նեւառնի աշխարհները իրարու կապող ձգողութեան  
օրէնքը գտնելէն առաջ՝ երբ որ մոլորակային շարժ-  
մանց օրէնքը գտաւ , շատ ուրախացաւ . ինչպէս ին-  
քը կ'ըսէ . իրը թէ սորվեցաւ այն խորհուրդները  
զորս ունէր Աստուած՝ երբ կարդի կ'դնէր արարչա-  
գործութիւնը : Զ'կրնար ըլլալ խորհուրդ՝ առանց  
խորհողի : Այն խորհուրդն որ կ'երեւի տիեզերաց  
կարգադրութեան մէջ՝ հարկաւ կ'ցուցընէ խորհով մը  
որ այն կարգադրութիւնները կ'ընէ : Արգիւնք  
կ'ցուցընեն պատճառը , և Աստուածային արդիւնք  
կուտան մեզ հաւատալ Աստուածային պատճառի մը :  
Բնութեան զօրութիւնները խոհուն մտքի մը առաջ-  
նորդութեան տակ գործելու են իմաստուն արդիւնք  
մը յառաջ բերելու համար : Ճարտարարուեստ մեքե-  
նայ մը որ սքանչելի արտադրութիւններ յառաջ  
կ'բերէ , մեքենան ինքը չ'է որ այդ արտադրութիւն-  
ները կ'զարմանագործէ , և գործածն ալ իր ճարտա-  
րութիւնը չ'է , անոր ճարտարողին՝ հնարիչին մտաց  
և նպատակին արդիւնքն է : — Հեռագրով լուր հա-  
զորդելու համար ոչ միայն ելեքտրականութիւն ,  
հեռագրական մեքենայ և թելեր հարկաւոր են , այլ  
նաև խոհուն գործող մը հարկաւոր է խօսել տալու  
ելեքտրականութեան :

Աշխարհիս բնական և բարոյական կառավարու-  
թիւնն ալ այսպէս կ'բացատրուի : Տիեզերք և ա-

նոնց մէջ եղած անհատներ՝ իրեր՝ կ'գործեն յար, և  
այլ և այլ արդիւնքներ յառաջ կ'բերեն բնական զօ-  
րութեամբք և օրինօք, և ատոնցմով Արարչին յա-  
ռաջասահման նպատակը յառաջ կ'առանին. վտան զի  
ատոնք ամենը կ'գործուին Անոր վերին Տեսչութեան  
և ներգործութեան տակ: Բայց թէ . ի՞նչպէս, չ'եմք  
կրնար բնական օրէնքներով ապացուցանել. միայն  
իրականութեան հանդէպ համոզում՝ հաւատաք կ'ստա-  
նամք: — Գիրքը առ այս ցոյց կուտայ մեզ միջոցներ՝  
որոցմով Աստուած ստէպ վարուեցաւ աշխարհի գիտ-  
ցընելու համար իր բացարձակ տիրապետութիւնը և  
կառավարութիւնը տիրեգերաց. այսինքն իր նախա-  
ստհմանութիւնը և նախախնամութիւնը. և այս մի-  
ջոցներն են Մարգարէութիւնք և Հրաշք, որ ան-  
տարակուսելի կերպով կ'հաստատեն զայս:



## ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆՔ

Մարգարէութիւնք գուշակութիւններ չ'են, որ  
բնական նշաններէ կ'նախատեսուին. այլ անբնական  
կանխասացութիւնք՝ ապագայից մէջ լինելիք աննա-  
խատեսելի իրողութեանց, որ կարևոր պարագայիւք,  
մանրամասն տեղեկութեամբ և յատկական եղանակաւ  
կ'բացորշուին. այնպէս որ ի՞նչ բանի՝ իրի կամ ան-

Ժի վրայ կ'ըսուի նէ՝ միայն անոնց վրայ կ'ձշգրտին  
և ճշդիւ կ'կատարուին . և ուրիշ շատերու չ'են յար-  
մարիր : Երբ այսպէս Աստուած մարդարէի մը բերնովը  
10. 100. 1000 տարիներ առաջ իմաց կուտայ թէ  
ետքի ատենները կամ այս ինչ ատեն այսպէս և  
այնպէս պիտի ընեմ այս ինչ ազգին կամ քաղաքին,  
այս կամ այն եղանակաւ, այս կամ այն մարդուն  
կամ մարդոց ձեռքով, ևայլն . և այս կանխաձայն-  
եալ իրողութիւնը կէտ առ կէտ կուգայ կ'կատարուի  
օրը օրին, թէ՛և յոյժ բնական եղանակաւ, կ'կար-  
ծեմք թէ ողջամիտ մարդուն համար ա՛լ ամեննեին  
տարակուսական տեղի չ'մնար համոզուելու թէ այն  
բնական եղելութիւնը առանց Աստուածային կամաց  
և խորհրդոց միջամտութեան և ներգործութեան չ'է  
որ կատարուեր է, քանի՛ որ կանխաւ իմաց առւած է  
Նա թէ նս ասիկայ այսպէս պիտի ընեմ : — Ասիկայ  
ապացոյց է նուև ամեն բնական իրողութեանց Աստ-  
ուածային կամաց և խորհրդոց կարգադրութեամբք  
կատարուելուն, ըստ որում ինքը Դրքերով ըսած է  
թէ ինքը կ'վարէ ամեն բան, և իր կամքէն դուրս  
բան մը չ'կրնար կատարուիլ տիեզերաց մէջ :

Աս ամեն ըսուածները լաւ բացատրած ըլլալու հա-  
մար առնումք այս տեղ մէկ քանի՛ մարդարէութիւն-  
ներ՝ իրենց պարագաներովը, և զանոնք իրենց կա-  
տարմանց հետ բաղդատեմք :

## ՏԻՒՐՈՍԻ ՎՐԱՅ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆՔ

Տիւրոսի վրայ մարգարէացան Եսայի (հԳ.), եւ զեկիէլ (իԶ. — իթ.) և Զաքարիա (թ.). Տիւրոս Փիւնիկեցւոց յոյժ հինաւուրց մէկ քաղաքն էր Միջերկրական ծովուն վրայ՝ շատ անուանի վաճառաշահութեամբ: — Արտաքին պատմութիւնը վկայելով ասոր՝ կ'ըսէ թէ Տիւրոս մայրաքաղաքն էր աշխարհի վաճառականութեան. մեծ զօրութիւն ունէր ծովերու վրայ իր բազմաթիւ վաճառանաւերո վը, որովք Միջերկրական ծովուն և Ատլանտեան ովկիանոսի ափանց անթիւ գաղթականութիւններէն հարցատութիւն և զօրութիւն կ'քաղէր: — Ըստ բանի Ս. Պրոց՝ Տիւրացիք ամբարտաւան՝ զեղխ և ամեն մեղքերով լի էին: Մարգարէք Աստուծոյ կողմէն սպառնացան անոնց պատիժներ, զորս սահմանած էր իրենց մեղաց համար:

Այս մարգարէութեանց մէջ վեց պարագաներ նախանշանակուած էին՝ որք հետզետէ պիտի կտարուէին

Ա. Եզեկիէլ մարգարէացաւ թէ Տէրը Տիւրոսի դէմ պիտի հանէր Բաբելացւոց Նարուքողոնոսոր արքայն, անհամար բազմութեամբ. որ քաղքին դէմ մարտկոց պիտի չինէր, հողաբլուր պիտի կանգնէր և անոր դէմ վահան պիտի վերցընէր (Եզեկ. իԶ. 7-9): — Աս մարգարէութիւնը տրուելէն (Քրիստոսէ 588 տարի առաջ) իբր 56 տարի ետքը անոր առա-

Զին մասը՝ առաջին պարագան կատարուեցաւ. իսկ ամբողջական կատարումն եղաւ իբր 1880 տարի ետքը:

Մարդարէութիւնն ըսած էր որ Նաբուքողոնոսոր (և չէ՛ թէ ո՛ն է թագաւոր) պիտի գայ Տիւրոսի վրայ. այնպէս ալ եղաւ. Նաբուքողոնոսոր Բարելացւոց թագաւորը աշխարհի տիրապետելու ելնելով Տիւրոսի մեծահարուստ ճոխութեան համբաւէն ձըզուած անոր դէմ պատերազմելու եկաւ՝ այն ճոխ աւարին տիրանալու համար, ինչպէս որ մարդարէն ըսած էր. և որովհետեւ Տիւրոս շատ զօրաւոր՝ ամուր քաղաք էր, տարիներով չ'կրցաւ զայն անձնատուր ընել կամ յաղթել անոր. և ստիպուեցաւ սաստկապէս պաշարել զայն. և նեղել յոյժ:

Տասուիրեք տարի ամբողջ շարունակեց պաշարումը. կեցաւ պատերազմեցաւ անոր դէմ, մարտկոցներ կանգնեց, հողաբլուր շինեց, վահան վերցուց և չարաչար տագնապեցնելով քաղաքը՝ հուսկ ուրեմն յարձակմանը առաւ զայն՝ հիմն ի վեր տապալելով: — Ահա՝ ինչպէս կ'երևի՝ իրաց ընթացքին մէջ անբնական բան չ'կայ. ամեն բան բնական ընթացքով կատարուեցաւ. բայց Աստուծոյ ըսածը՝ Անոր խորհուրդը և նպատակը առաջ գնաց:

Բ. Եղեկիէլ մարդարէացաւ նաև թէ Նաբուքողոնոսոր իր զօրքերովը Տիւրոսի դէմ երկար ատեն չարաչար տաժանելէն եաքը ամենեւին անվարձ պիտի ելներ. այսինքն այն մեծահարուստ քաղաքէն աւար՝ կողոպուտ չ'պիտի կրնային հանել. քաղաքը պարապ, պարպուած, դատարկացած պիտի գտնէին (Եղեկ. Իթ. 48): — Մարդարէութիւնը այս մասին ալ չ'կրիպեցաւ ո՛չ իսկ ստորակետիւ: Նաբուքողո-

Նոսոր այնչափ երկար պաշարմամբք շարաչար յոգ-նելէն տաժանելէն ետքը . երբ յարձակմամբ քաղաքըն առնելու վրայ էր . քաղքին յոյժ ընչեղ բնակիչ-ները իրենց բոլոր հարստութիւնները նաևը յած փախան քաղքէն . կ'ըսէ արտաքին պատմութիւնը . և անոր դիմացը իրը 30 ասպարէզ կամ մէկ ժամու չափ հեռուն գտնուած կղզին գացին , որ քաղքին իրը արուարձանն էր , և հօն հաստատուեցան : Յաղ-թողները քաղաքը մտնելով բոլորովին պարապուած գտան , քանզի բնակիչք անոնց ձեռքէն փախուցեր էին իրենց հարստութիւնները , անոնց ակնկալած հարուստ աւարները . որ իրենց 13 տարուան աշխատութեանց վալ ձք պիտի ըլլար , հետեւաբար և ձեռնունայն՝ անվարձ էլան . և առ կատաղութեան՝ հիմուվին կործանեցին քաղաքը , բնաւ կանգուն չէնք մը չ'թողլով : — Աստեղ ալ ամեն բան բնականօրէն քա-լեց գնաց , բայց Աստուծոյ կանխաւ Այսպէս պիտի թնեմ ըսածն էր որ կատարեցաւ :

Գ . Եսայի մարգարէացաւ թէ Տիւրոս այսպէս կործանուելէն ետքը 70 տարի պիտի մոռցուի . բայց այնուհետեւ նորէն այցելութիւն պիտի ընէ անոր Տէրը . և առջի պէս նորէն անուանի պիտի ըլլայ և պիտի փառաւորուի ( Ես . իգ . 15-18 ) : — Դէպե-րուն ընթացքովը աս ալ ճշդիւ կատարուեցաւ : Պատ-մութիւնը կ'ըսէ թէ Տիւրոսի առման ատեն քաղքէն փախչող այն մեծահարուստ բնակիչները՝ որ մօտա-կայ կղզին փոխագրուեցան , այն տեղ իրը 70 տարի աշխատելով գուն գործեցին տակաւ վերականգնել անկեալ վաճառականութիւննին , և վերստին իրենց դարձուցին աշխարհի վաճառականութիւնը , որով այս նոր քաղաքը կործանեալ հին քաղքին չափ և անկէ

աւելի ճոխացաւ մեծցաւ անուանի եղաւ . մեծամեծ  
բերդերով ամրացաւ և զօրացաւ , և եղաւ նոր Տիւրոս :  
Աս իրողութիւնն ալ մարգարէութենէն իրը 100 տա-  
րիէն աւելի ետքը ի գլուխ ելաւ ամենաբնական եղա-  
նակաւ , բայց Աստուծոյ ըստածին յարեւ նման կերպով :

Դ . Եզեկիէլ աս ալ մարգարէացաւ թէ այն կոր-  
ծանեալ հին Տիւրոս քաղաքը բոլորովին պիտի աւ-  
լուեր . անոր աւերակները՝ աւերակներուն քարերը  
փայտերը մինչեւ իսկ հողերը ջուրը պիտի քափուին ,  
այնպէս որ հին քաղքէն բան մը չ'պիտի մնար , և  
խսպառ անզտանելի պիտի ըլլար անոր հետեր : (Եզեկ .  
Իջ . 4-12) — Աս մարգարէութիւնը շատ զարժանալի  
կերպով կատարուեցաւ : Պատմութենէ գիտեմք որ Մեծն  
Աղեքսանդր երբ իր աշխարհակալութեանց ճամբուն  
վրայ եկաւ պաշարեց այս նոր Տիւրոսը , այն մրրկեալ  
ծովերուն մէջ շատ վնասուեցան իր նաւերը , և տեսնե-  
լով որ գրեթէ անհնարին կ'ըլլար ծովով (նաւերով) պա-  
տերազմիլ , հրամայեց կործանեալ հին Տիւրոսի ծո-  
վեգերքէն մինչեւ ծովու մէջ շինուած նոր Տիւրոսի  
միջոցը եղած ծովը լեցընել՝ ցամաք դարձընել , և  
ցամաքաւ պատերազմիլ և յաղթել քաղքին : Աս  
յոյժ բազմաշխատ տաժանելի գործին համար իր բո-  
լոր զօրքերը չարաչար աշխատցնելով եօթը ամիս  
այն տեղ առձեռն պատրաստ գտնուած հին Տիւրոսի  
բոլոր աւերակները , քարերը , փայտերը , և հողերն  
անդամ իրը թէ աւելով՝ ամբողջովին ծովը լեցուց ,  
և այնպէս ծովը ցամաք դարձընելով՝ անոր վրայէն  
քալեցուց զօրքը և յարձակմամբ առաւ քաղաքը :  
Այս տեղ ալ ահա բնականէ գուրս բան չ'կայ , բայց  
Աստուծոյ նախագծած ուղղութեան վրայէն կ'ընթա-  
նայ ամէն բան և Անոր ըստածը կ'կատարուի :

Ե. Զաքարիա մարգարէցացաւ թէ նոր քաղաքը որ իբր թէ ծովու մէջ շինուեցաւ, հրկիզութեամբ պիտի կործանէր (Թ. Յ-ն). Նաեւ Եղեկիէլ (ԻԾ. 28) ըսաւ թէ Տիւրոսի երկրորդ աւերը կրակով պիտի ըւլար: — Աս մարգարէութիւնք կատարուեցան անոնց յայտնուելէն աւելի քան երկերիւր տարի ետքը: Ա-ղեքասանդր ՈՒեծն՝ քաղաքը պաշարելուն՝ որովհետեւ բնակիչք անձնատուր չ'եղան, երբ բազմածիգն աշխատութեամբ յարձակմամբ առաւ քաղաքը, բոլոր բնակիչներէն վրէժ լուծելու համար՝ ամեն կողմէ կրակի տուաւ քաղաքը՝ Քրիստոսէ 332 տարի առաջ: — Կուինտոս Կուրտիոս մանրամասն կ'պատմէ զայս:

Զ. Եղեկիէլ մարգարէցացաւ այս նոր Տիւրոսի ևս անկանգնելի կործանումը և ապագայ ամայութիւնը մինչեւ իսպառ. « Քեզի չոր ապառաժի պիտի դարձընեմ, ուռկաններ փոելու տեղ պիտի ըլլաս. մէյ մ'ալ չ'պիտի շինուիս: վասն զի Ես Տէրս խօսեցայ, կ'ըսէ Տէր Եհովան» (ԻԾ. 14): — Աս մարգարէութիւնը Եղեկիէլի մահուանէ քանի մը դար ետքը կատարուեցաւ, և մարգարէութեան ամբողջ կատարումն եղաւ Քրիստոսի 1291 թուին, երբ Եգիպտոսի Սուլդանն առաւ քաղաքը: Ան ատեն բնակիչք իրենց նաւերը մտան փախան, և քաղաքը յաղթողներուն թողուցին բոլորովին: Տիւրոսի այս մարգարէութեան ամբողջովին կատարումը կը հաստատեն ճանապարհորդք, որ կ'ըսեն թէ Տիւրոս աւերակաց կոյտ մ'է միայն: Մանտրել անուն ճամբորդ մը ամբողջ առւն մը անգամ չ'գտաւ հոն 1694-ին, և 1738-ին միայն քանի մը ընտանիք կային հոն: Ճանապարհորդք մ'ալ կ'ըսէ « Երբ ծովէն կ'մօտենաս քաղաքին, անոր հին փառաւորութենէն բան մը չ'ես տես-

ներ. բոլոր բնակիչներն են քանի մը ձկնորսներ»։ Նոյն հեղինակը կ'յաւելու։ « Ժայռի մը գտգաթան պէս է. տեղ մ'ուր ձկնորսք իրենց ուռկանները կ'չորցընեն »։ Նոյն իսկ անհաւատ Վոլնէյ՝ Տիւրոսի հին փառաւորութիւնը ետքի ամայութեան հետ բազդապատճէն ետքը կ'ըսէ. « Փոքր գիւղ է, իբր 50 կամ 60 ընտանիքէ բաղկացեալ. որ մասամբ ձկնորսութեամբ կ'ապրին »։ Ուրիշ ճանապարհորդ մը կ'նկարագրէ զՏիւրոս իբր « Ապառաժ մ'ուր ձկնորսք իրենց ուռկանները կ'չորցընեն »։

Մարգարէին ըսածին պէս հին Տիւրոս ծովը աւլուեցաւ և ամենեւին անգտանելի դարձաւ. Նոր Տիւրոսն ալ հրով և սրով կործանեցաւ և աւերակաց կոյտ մ'եղաւ ամենեւին, չոր ապառաժ մը, ուռկաններ չորցընելու տեղ մը. եւ մինչեւ ցայսօր վերաշխնուած չ'է, ոչ ալ շինուելու հաւանակութիւնը կամ յարմարութիւնը ունի:

Այս մարդարէկութիւնք տրուեցան երբ Տիւրոս հոյակապ քաղաք էր, ամուր և զօրաւոր, և ամենեւին անհաւանական՝ անոր գլխուն սպառնացեալ այս աւերմունքները. բայց ահա այնչափ դարերէ ետքը մենք անոնց ամբողջական կատարումը կ'տեսնեմք. որով և Աստուծոյ կամաց և նպատակին անվրէպ իրագործուիլը. թէպէտ յոյժ բնական եղանակաւ վասալն զի Աստուծուած Ասանկ պիտի լնեմ ըսեր էր, և ասանկ եղաւ։

## ԲԱԲԵԼՈՆԻ ՎՐԱՅ ՄԱՐԳԱՐԷՌԻԹԻՒՆՔ

Բաբելոն առաջին աշխարհակալ բռնաւորն էր որ  
կ'ախրապետէր տիեզերաց և իրեն խրոխտ ամբար-  
տաւանութեան և սեղանազերծ ամբարչութեանց  
համար սպառնացաւ Աստուած մարգարէից բերնով  
ահաւոր պատիժներ անոր դէմ, Սպառսպուռ քան-  
դումն և անկանգնելի կործանումն :

Բաբելոնի վրայ մարգարէացաւ Եսայի( ԺԴ. ՃԴ.  
ԻԱ. ԽԵ. ԽԷ.), Ելեմիա (Ծ. ԾԱ.), և Դանիէլ (Ե.):

Մարգարէք յոյժ շատ պարագաներ նախանշանա-  
կած էին իրենց կանխաձայնութեանց մէջ, որք հետ-  
զհետէ պիտի կատարուէին՝ ցլրումն իրենց մար-  
գարէութեանց . մենք անոնցմէ իբր 15 պարագաներ  
միայն մատնանիշ պիտի ընենք այս աեղ :

Ա. Եսայի ըսած էր թէ Աստուած յականէ ան-  
ուանէ կանչեց Պարսից Կիւրոս թագաւորը և անոր  
մականուն տուաւ ( ԽԵ. 1-4 ), որ իր ձեռքը գործիք  
ըլլայ ազգերը և Բաբելոնը պատժելու համար . (Ե-  
սայիեայ այս մարգարէսւթիւնը Կիւրոսի ծնանելէն  
200 տարի առաջ էր , որ ատեն Պարսից տէրութիւնն  
ալ աննշան բան մ'էր . ) :

Բ. Ելեմիա ըսած էր թէ (ԾԱ. է. Ծ. ԾԴ.) Մա-  
րաց և Պարսից ահագին բանակը՝ գլուխ և առաջ-  
նորդ ունենալով Կիւրոսը՝ պիտի գար պաշարէր Բա-  
բելոնը և պիտի նուաճէր զայն . շատ ազգեր՝ յակա-  
նէ անուանէ՝ միացած պիտի ըլլային այդ բանակին

Հետա:

Գ. Անհնարին խուճապ պիտի տիրէր Բաբելոնի (Ես. ի Ս. 3-9) • դիւթերու՝ կախարդներու՝ ասպեղագէտներու պիտի դիմէր ճար մը գտնելու և իր գլխուն գալիքները գիտնալու համար, և պարապը պիտի ելնէր. « Ի վերայ իմ հասին Ելամացիք, և հրեշտակք Պարսից գան ի վերայ իմ, . . . վասն այտորիկ լցաւմէջ իմ դողութեամբ, և երկունք կալան զիս իբրեւ զծննդական . . . : Աղէ՛ կաց դու այժմ ի դիւթութիւնս քո, և ի բազում կախարդութեան քում, զոր ուսար ի մանկութենէ քումմէ. Եթէ կարասցեն՞ ինչ օգտել. եթէ կարասցե՞ն կազդուրել, զի աշխատեցար ի խորհուրդս քոյարիցեն և ապրեցուացեն զքեզ աստեղագէտքն որ նշմարեն զասելզս երկնից. պատմեացեն քեզ զինչ գալոց է ի վերայ քո » (Ես. Խէ. Եկ. 12-13):

Դ. Եփրատ գեար որ Բաբելոնի ամրութիւնը և ապահովութիւնն էր, նա պիտի պատճառէր քաղքին կորուստը. պիտի ցամքէր անիկայ, և անոր ջրերուն վրայ կամ ջրերուն աեղը սուր պիտի տեղար. « Ամերեցից զծով նորա, և ցամաքեցուցից զաղըիւրս նորա . . . , սուր ի վերայ ջուրց նորա, և ամաչեսցեն » (Երեմ. ՄԱ. 36 . . . 51):

Ե. Ընոր կորուստը յանկալճակի՝ և անակնկալ պիտի ըլլար. « Հասցէ ի վերայ քո կորուստ՝ և ոչ ծանիցես . . . : Լարեցին քեզ որոգայթ՝ Բա'բելոն, և ընդունեցար, և ո՛չ գիտացեր » (Ես. Խէ. ՄԱ: Երեմ. Մ. 24):

Զ. Ուրախութեան օր մը, գիշեր ատեն, գինովութեան և քունի մէջ եղած ատեննին. « Անձն իմ եկաց ի դողութեան (Երը. Դիւեր ուրախութեան

իմոյ եղեւ ինձ զարհութանաց ), պատրաստեա' սեղան ,  
կե՛ր, ա՛րբ > ( Ես . ԻԱ. 4-5 ) : « Ի ջերմն խշտեաց  
իւրեանց տաց նոցա արհաւիրս , և արբուցից զնոսա ,  
զի թմբրեսցին և ննջեսցեն քուն յաւիտենից ... Տէր  
արբեցուսցէ արբեցութեամբ զզօրավարս նորա , և  
զիմաստունս նորա , զիշխանս նորա և զզօրագլուխս  
նորա և զզօրաւորս նորա , և ննջեսցեն ի քուն յա-  
ւիտենից » ( Երեմ. ԾԱ. 39-57 ) :

Է . Քաղըին պղնձի դռները բաց պիտի ըլլային  
կիւրոսի առջեւ . « Բացից առաջի նորա զգրունս  
( Երբ , 'Իրունք բացցին առաջի նորա , եւ մի' վակիս-  
ցին դրունք ) . . . զգրունս պղնձիս խորտակեցից և  
զնիգս երկաթիս փշրեցից » ( Ես . ԽԵ 1-2 ) :

Ը . Քաղաքն առնուած ատեն մէջը գտնուող զօրաց  
բազմութիւնը յարձակողներուն դէմ չ'պիտի ելնէին  
պատերազմաւ , այլ յուսահատած՝ փախուցեալ այծ-  
եամերու և մոլորեալ ոչխարներու պէս՝ ամեն մէկը  
խուճապաւ իր քաղաքը իր տունը իյնալ պիտի նա-  
յէր . « Զայն թագաւորաց և ազանց միահամուռ ժո-  
ղովելոց . . . բեկումն հասեալ է . վասն այսորիկ ա-  
մենայն ձեռք լքցին , և ամենայն անձն մարդոյ դո-  
ղացէ : Խողովեսցին հրեշտակք , և երկունք կալցեն  
զնոսա իբրեւ զկանայս ծննդականս , . . . և եղիցին  
մնացեալքն իբրեւ զայծեամն փախուցեալ , և իբրեւ  
զոչխարս մոլորեալ . եւ ոչ ոք իցէ որ ժողովիցէ . զի  
մարդն անդրէն ի ժողովուրդ իւր դարձցի , և այր  
իւրաքանչիւր յերկիր իւր հալածեսցի » ( Ես . ԺԴ .  
4-14 ) :

Թ , ( Ես . ԺԴ . 18-19 ) . . .

Ժ . Բարելոն պիտի կործանէր՝ սպառսպուռ պիտի  
կորսուէր Սողոմ և Գոմորի պէս . և

**ԺԱ.** Հոն յաւիտեան բնակութիւն չ'պիտի ըլլար  
ամենեւին . և

**ԺԲ.** Գագաններ պիտի բնակէին այն տեղ . և

**ԺԴ.** Հովիւք վրան չ'պիտի կանգնէին հոն , և  
հովիւք հօտերնին չ'պիտի պառկեցընէին . « Եղիցի  
թարելոն՝ որ փառաւորն իոշի ի թագաւորէն Քաղդէ-  
ացւոց . որպէս կործանեաց Աստուած զՍոդոմ և զԴուոր .  
և ո՛չ բնակեսցէ յաւիտեանս ժամանակաց , և մի' մտցեն  
ի նմա յազգս բազումս ( Երբ . Նւ մի' բնակեսցեն ի  
նմա ազգք յազգ ) և հովիւք մի' հանգիցեն ի նմա  
( Երբ . Նւ հովիւք մի' մակարացըն անդ զհօս իւր-  
եանց ), այլ անդ հանգիցեն գագանք վայրենիք , և  
լցցին տունք նոյա աղաղակաւ , և անդ հանգիցեն  
համբարուք , և անդ դեք կաքաւեսցեն , և յուշկա-  
պարիկք բնակեսցեն ինմա , և ոզնիք ձագս հանցեն  
յապարանս նորա » ( Ես . ԺԴ . 19-22 ): « Սուր ի  
վերայ Քաղդէացւոցն ասէ Տէր . . . ճիւաղք բնա-  
կեսցեն ի կղզիսն ( ի թարելոն ) , և բնակեսցեն ինմա  
դստերք համբարուաց » ( Երեմ . Ծ . 39-40 ):

**ԺԵ.** Թարելոն մէյ մ'ալ չ'պիտի վերաշնուէր .  
« Թարելոն . . . մի' ևս շինեսցի իսպառ , և մի' ևս  
բնակեսցէ յաւիտեան » ( Երեմ . Ծ . 39-40 ):

**ԺԵ.** Եւ վերջապէս Բարելոն պիտի ըլլար խորիո-  
րատ տղմոյ . « Այսպէս ասէ Տէր զօրութեանց . Ա-  
րարից զթաքելոն աւերակ , զի բնակեսցին ի նմա ոզ-  
նիք , և եղիցի յոշինչ . և արարից զնա խորիորատ  
տղմոյ ի կորուստ ( Ես ԺԵ . 23 ):

Ա՛ւասիկ թէ ինչպէս կատարուեցան այս մարդա-  
բէութիւնք իրենց մանրամասնութեամբք : — Թարելո-  
նի Նաբոնիդոս թագաւորին ատենը՝ որ Ս . Գրոց  
թաղաւասարն է , թոռն Նաբուքողոնոսորայ , Կիւրոս

Պարսից թագաւորը Մարաց թագաւորին հետ Պարսից և Մարաց բանակներովը աշխարհակալութեան ելաւ, և բովանդակ Ասիան և փոքր Ասիան աղ նուաճելով, և անոնց ամենուն զօրքերովն ստուարացնելով իր բանակը յոյժ յոյժ՝ եկաւ հասաւ Ասորեսատան՝ Բաբելոնի վրայ քալելու համար, որ իրեն դէմ կեցող միայն այդ անառիկ քաղաքը մնացեր էր յոյժ բարերեր դաշտի մը վրայ լայնանիստ՝ քառակուսի, և պարոպագիակ, 60 մղոն չըջապատով։ Կ'ըսուի թէ պարիսպներուն հաստութիւնը 75 ոտք էր և բարձրութիւնը 300 ոտք. և անոնց բոլորտիքը խորունկ և լայն խրամներ փորուած էին. Եփրատ գետը քաղքին մեջտեղէն կ'անցնէր՝ մէկ կողմէն մտնելով և դիմացի կողմէն ելնելով։ Դրսէն պաշարի բնաւ պէտք չ'ունէր, ինքն իրեն բաւական էր, ամեն ուտելի պարէն իր մէջն ունէր, և իր յոյժ բազմաթիւ զօրաց համար 20 տարիէն աւելի բաւելու չափ պաշար համբարած ունէր. ուստի ամենեւին անառիկ էր, և սովով ալ նուաճուելու քաղաք չ'էր։

Կիւրոս աս ամենը տեսնելով չ'վհաստեցաւ. կեղծեց քաղաքը սովի բռնել, և առ այն իր զօրքերը կ'աշխատցընէր խորածոր լայն խրամներ փորել տալով քաղքին բոլորտիքը, և անոր Արեւմտեան կողմէն (ուսկից քաղաքը կ'մտնէր գետը) մինչեւ Նիտոկրիս ծովակը կ'երկարէր այդ խրամներուն ծայրը ։ Քաղքին բնակիչները կարծելով որ Կիւրոսի միտքը էրոք սովի բռնել էր զիրենք. կ'ծաղրէին զինքը՝ պարիս զներէն վար տոպրակներով ցորեն թափելով իր բանակին վրայ. և բնաւ մտքերնուն չ'էր կրնար անցնիլ թէ անիկայ դարան կ'լարէր իրենց. որոգայթ կ'պատրաստէր՝ մարգարէին զրուցածին պէս

(Երեմ. Ե. 24):

Երբ Եկաւ հասաւ Բարելոնի Երեւելի մէկ տօնին օրը, յորում բոլոր քաղաքացիք՝ զօրականք և իշխանք ո՛չ միայն առաջուրնէ մինչեւ իրիկուն՝ այլ նաև գիշերն ի բուն չուայտութեամբ՝ ուտել խմելով կ'անցընէին, Բաղտասար մեծ խրախութիւն ունեցաւ, և այն գիշեր մեծ ընթրիք առաւ իր մեծամեծներէն 1000 հոգւոյ: Երբ որ աղոր մը գինովցաւ զուարթացաւ՝ հրամայեց որ իր պապուն՝ Նարեւքողոնսորայ Երուսաղեմի տաճարէն կողոպուտ բերած ոսկեղէն և արծաթեղէն սուրբ անօթները բերն, և անոնցմավ ինքն ալ մեծամեծներն ալ կանանին ալ ակսան խմել ի նախատինս Երբայեցւոց Աստուծոյն և ի պատիւ Քաղդէական ոսկեղէն՝ արծաթեղէն՝ պղբնձի՝ Երկարի՝ հարեայ եւ փայտեայ աստու ածաց: (Դան. Ե. 4) Այն նոյն ատեն Աստուծոյ կողմանէ զարհուրելի ցուցանք մ'եղաւ. յանկարծ Բաղտասարի նըստած տեղին դիմացը ճարագներու լուսին մէջ մարդու ձեռքի մատուրներ Երեւան՝ որ պատին ճերմակ ծեփին վրայ Երեք բառեր գրեցին, և աներեւոյթեղան:

« Գոյնք թագաւորին հատան » ինչպէս Դանիէլ ըսեր էր (Ե. 9). զարհուրեցաւ, և մեծ խուճապի և տագնապի մէջ ինկան բոլոր բազմականք. թագաւորը իսկոյն կանչեց Բարելոնի մոգերը գիւթերը կախարդները՝ որ այն գրերը կարդան և մեկնեն. բայց անոնք չ'կրցան կարդալ՝ ինչպէս մարդարէն զրուցած էր (Ես. Խէ. 13), չ'կրցան անոր գլխուն գալիքը իրեն պատմել, մինչեւ որ Դանիէլ Եկաւ կարգաց այն գրերը, և մեկնելով ըսաւ թէ Աստուած իրիշխանութիւնը ձեռքէն առած է և կուտայ Մարաց.

և Պարսից : -- Մայր թագուհին և բոլոր սեղանակիցք շղոմական խօսքերով քաջալերելով Բաղտասարը ներկային ապահովութեան վրայ՝ սիրտ տուին իրեն ապագային համար ալ վախը փարատելու և նորէն ուրախութիւնը կերուխումը շարունակելու . ինքն իսկ Դանիէլի սպառնացած Աստուածասատ պատուհասը հեռաւոր անորոշ ապագայի մը համար կարծելով , Եպայեայ ըսածին պէս ( Իւ . 4-9 ) ամեն տեղ գետեր՝ պահնորդներ դրաւ . և հրաման տալով զգուշութիւն ընել քաղքին և թշնամեաց բանակին , և ամեն դէպք իրեն իմացընել , նորէն սեղան նստաւ որ նախասացուած էր ( Ես . Իւ . 5 ) . « Սեղանը կ'պատրաստեն , դէտերը կ'դնեն , կ'ուտեն կ'խմեն » , և շարունակեց ուտել խմելը :

Բայց այն պահուն Աստուած ալ Կիւրոսը շարժած էր գործի սկսելու , որ ժամանակը յարմար գտնելով Եփրատի ճամբան փոխեց . գետին՝ քաղաքը մտած կողմէն՝ ջրերը դարձուց իր նոր բացած խրամներուն մէջ . որ սկսաւ երթալ թափիլ Նիտովրիս ծովակը . որով անոր քաղքին մէջէն անցած ճամբան ցամքեցաւ բաց մնաց . ինչ պէս սպառնացեր էր Աստուած , « Անոր ծովը ցամաք պիտի ընեմ և անոր աղբիւրը պիտի չորցընեմ » ( Երեմ . ԾԽ . 34 ) ըսելով . և իր զօրքերը այդ նոր բացուած ճամբէն՝ կէսը մէկ կողմէն կէսն ալ միւս կողմէն մտան քաղաքը . և որովհետեւ քաղքին զօրքերն ու պահապանները այն գիշեր բոլորովին կերուխումի ինկեր՝ գինովցեր և մոռցեր էին քաղքին մէջի գետը տանող ճամբաներու պղնձի դռները գոցելու , եւ Եսայեայ ըսածին պէս ( ԽԵ . 2 ) բաց թաղեր էին անոնց առջեւ , Կիւրոսի զօրքերը ճամբանին բաց գտնելով արգելք մը չու-

նեցան գեմերնին , և առած հրահանգնուն հետեւելով ամեն դեմերնին ելնողները՝ մեծ ու պղտիկ ջարդեցին : Աս ջարդէն ետքը ա'լ սիրտ չ'մնաց մէկուն վրայ . քաղքին բոլոր զէնք կրող մարդոց եւ զօրականաց սրբատերը թուլցան , որոց մեծ մասը արդէն վարձկան զինւորները ըլլալով վհատած յուսահատած՝ փախչող փախչողի եղան , և իւրաքանչիւր՝ շունչերնին իրենց քաղաքներն ու տներն առին , և բնաւ մէկը չ'գտնուեցաւ յաղթող բանակին դէմն ելնելու և պատերազմելու (Ես . ԺԴ . 4-14) , ինչպէս ըսեր էր Եսայիր Բաղտասարի դիակը այնպէս անթաղ հոտեցաւ փողոցները , «Փարշելի ի մէջ բազում դիականց կոտորելոց սրով » (Ես . ԺԴ . 18-19) . և Բարելոն իսպառ նուաճեցաւ և անցաւ Մարաց և Պարսից ձեռքը Քրիստոսէ 538 տարի առաջ :

Ասոնք ամենը մանրամասն կ'պատմէ Քսենոփոն , Երոդոսո , և այլք : Քսենոփոն աս ալ կ'ըսէ որ անոր բուն անունը կիւրոս չ'էր , վերջէն աս անունը վրան առաւ իբրեւ մականուն (Ես . ԽԵ . 4) :

Բայց ասով ամեն բան չ'վերջացաւ . մարդարէութիւնք ուրիշ շատ բաներ ալ ըսեր էին , որ կամաց կամաց և իրարմէ ետքը պիտի կատարուէին : — Պարսիկք Բարելոնի տիրելնուն՝ իսպառ անբնակ դարձուցին քաղաքը , անոր մօտերը Քօթէսֆոն կամ Տիսրոն քաղաքը կանգնելով , ուր փոխադրուեցան Բարելոնի բոլոր մեծամեծները , հարուստները , որոց ալ հետեւեցան արուեստաւորներն և առուտուրի մարդիկը , որով Բարելոն ամեննեին անմարդացաւ և ամայացաւ . միայն քանի մը յոյժ կարօտեալ աղքատ ընտանիքներ մնացին հոն : — Բայց ատեն անցնելէ ետքը անոնք ալ չ'մնացին . ինքնակալին մէկը ուզելով փառաւոր որսարան մ'ունենալ , Բարելոնի կործանեալ պարիսպները քիչ շատ նորոգեց , և վայրի անասուն-

ներով լեցուց քաղաքը և ահա ան ատեն լեցան քաղաքին տները ոռնացող անասուններով, ջայլամները բը-նակեցան հոն, և անոր պարխապներուն մէջ բորենիներ՝ և զրօսանաց տներուն մէջ ճագարներ զետեղուեցան, ինչպէս ըսեր էին մարդարէք ( ես. ԺԴ : Երեմ. Ծ. ) :

Բայց այս վիճակին մէջ ալ պէտք չ'էր մնար Բաբելոն, Ատեն անցնելով քաղթին աշտարականման աղիւսէ շէնքերը՝ ապարանքները՝ բարձրաբերծ պարխապները կործանելով որսի անասունները փախան ցըրուեցան. բայց այն շէնքերուն ստորերկրեայ շտեմարանները՝ նկուղները և գետնափոր այրերը յարմար որջեր եղան վայրի գաղանաց, գայլերու՝ առիւծներու և բորենիներու։ Արդարեւ այս վիճակին մէջ հովիւք չ'էին կրնար իրենց հօտերը այն տեղուանք արածել և մակաղել, ինչպէս մարդարէն ըսեր էր ( ես. ԺԳ . 19-22 ), բայց Արաբացի որտորդներ՝ որ ահ և երկիւղ չ'ունէին ամենեւին ոչ առիւծէ՝ ոչ վագրէ՝ ոչ ալ բորենիէ, և խումբ խումբ կ'վաղէին կ'յարծակէին անոնց որջերը՝ զիրենք որսալու կամ սպաննելու, անո՞նք ինչու իրենց վրանները չ'կրնային կանգնել այն տեղուանք. և մարդարէին ըսածը կատարուէր։ Պատմիչները և ճանապարհորդները կ'պատասխանեն ասոր, և կ'ըսեն թէ՝ Այս երկնային սպառնալեօք կանխագուշակեալ աւելածոց տակ այնքան թունաւոր և մահացուցիչ օձեր՝ զեռուններ՝ կարիճներ կային, որ կարելի չ'էր մարդու այն տեղ վրան կանգնել և անոր տակ վայրկեան մը աչքերը գոցել ապահով և հանգչիլ.

Եփրատ գէտը միայն մնացեր էր հոն. ան ալ այն փլատակաց կոյտերուն մէջէն կամ տակէն անցնելու անցք չ'գտնելով ջրերը ճամբանին փոխեր կորսնցու-

ցեր էին . և՝ ինչպէս Թէոդորեառոս կ'պատմէ՝ իր առենը Եփրամէն հազիւ պղտիկ վտակիկ մը կ'երեւէր , ան ալ՝ իր օրովը բոլորովին ցամքեցաւ . և Բարելոն այնուհետեւ ամենեւին անգտանելի դարձաւ . և եւ դաւ ի՞նչ որ ըսեր էր Աստուած՝ « Խորխորատ տղմոյ ի կորուստ » ( Ես . Ծ . 22-23 ) : Այլ ո՛չ եւս էր Բարելոն . եւ ո՛չ միայն նորէն չշինուեցաւ՝ ինչպէս Երեմիա ըսած էր . այլ նաեւ անոր հետքն ալ կորսուեր էր , աեղն ալ չ'էր ճանչցուեր թէ ո՛ւր էր . և հազիւ այս վերջին 200 տարուան մէջ ճնախոյզներու ջանքերով ակսաւ ճանչցուիլ անոր աւերակները . և այս դարուս մէջ կարելի եղաւ զանոնք գծագրել և նկարագրել . որ մեծաւ մասամբ հողաբլուրներ են՝ ընդհանրապէս աղիւսէ , եւ են ճեղքուած եւ փուած ժամանակէն , աղիւսի բեկորներով կպրով եւ խեցեղէն ամաններու կտորուանքով խառն : Ամենեւին անմարդի ամայի մնացած է այն տեղը ուր վնասակար գազանք եւ ճճիք կ'վխտան : — Միով բանիւ — Աշխարհի վրայ չ'կայ Բարելոնի նման տեղ մը՝ որ ատենօք անոր չափ ծաղկած ըլլալով հիմայ անոր պէս ան աստիճան անշքութեան հասած ըլլայ :

Ահա այս եւս ըստ ամենայնի կատարուեցաւ յոյժքնական եղանակաւ . բայց ինչ որ ըսած էր Աստուած թէ պիտի ընէր՝ այն իրագործեցաւ ամեն պարագաներով . եւ ով կրնայ հիմա ըսել թէ Աստուած ինքը ըրած չ'է աս ամենը . քանի՛ որ ինքը կանխաւ ըսած էր . « Զորօրինակ ասացի՝ այնպէս եղիցի , եւ որպէս խսրհեալ եմ այն կացչէ » :

Ա՛լ կ'թողումք այս տեղ մարդարէութիւնները այսպէս կրկտելլ , որ ծայր ու ճոթ չ'ունին . ըստ որում բովանդակ Ս . Գիրք մարդարէութեանց կուռ

շղթայով շղթայուած են՝ օղակ օղակէ անցած։ Կը  
թողումք Մեծին Աղեքսանդրի, Մեծին Անտիոքոսի,  
Սելևկիոս Փիլոպատորի, Անտիոքոս Եպիփանի, Նին-  
ուէի, Երուսաղէմի, Տաճարին, Հրէից ազգին։ Յու-  
ղայի, Պետրոսի, մինչեւ իսկ Յիսուսի Քրիստոսի վր-  
բայ եղած մարգարէութիւնները, որոց հետ չէ թէ  
5. 10. 20. 60, այլ ութառունէն աւելի պարագաներ  
ընթացակից են (զորոց տե՛ս ի Գննական Կրօնագիտ։  
Տպ. Բ. էջ 594-619. և Յիսուսի Քրիստոսի վրայ՝ էջ  
181-241)։ և միայն Յիսուսի Քրիստոսի մէկ պղտիկ  
մարգարէութիւնը ձեւք կ'առնումք՝ անով վերջացը-  
նելու համար այս խնդիրը։



## ԵԿԵՂԵՑԻՈՑ ՎՐԱՅ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ

Յիսուս Քրիստոս շատ կանուխիէն մարգարէացաւ  
իր հիմնելիք Եկեղեցին համար, երբ բովանդակ Խս-  
րայէլացիք՝ իրեն հետեւողները, և մինչեւ իսկ տաս-  
ուերկու Առաքեալները, և մինչեւ իր Եղբայրները  
(ազգականները) իրեն համար ճշմարիտ Սստուծոյ  
գաղափարը և հաւատքը չ'ունէին բայց միայն՝ իրեւ  
երկնային սուրբ Վարդապետ, կամ Մարգարէ, կամ  
Այր Աստուծոյ կ'համարէին զինքը. և առաջին անգամ  
Սիմոն Պետրոս եղաւ՝ որ ի յայտնութենէն Հօր՝ որո-  
շակի դաւանեցաւ թէ Մեսիայն է և ԱստուածՈրդին  
(Մտթ. ԺԶ. 14-17). որու ձայնակից էին իր ընկեր-

Ները : Քրիստոս ան ատեն մարդարէացաւ իր դեռ  
չկազմուած Եկեղեցիին համար՝ և ըսաւ . Սիմո'ն . Ահա  
հիմա կ'սկսիմ շինել իմ Եկեղեցին . դուն իմ Եկեղեց-  
այս շինութեան գործածուած է'ն առջի ճգուած քա-  
րըն եղար , ինծի հաւատացողներուն առջինը . քեզմով  
կ'սկսուի շինուիլ Եկեղեցիս . քեզի պէս շատ քարեր  
( քու այդ հաւատքդ ունեցող հաւատացեալներ ) քե-  
զի հետ՝ ամենդ մէկտեղ խառն հիւսելով՝ իրար կցե-  
լով կապելով պահանգելով՝ պիտի շինեմ իմ Եկեղեցիս ,  
որ անդէն և անդ այնպէս պիտի մեծնայ զօրանայ և  
ամրանայ , որ բոլոր տիեզերքը պիտի լեցընէ . և՛ թէ'  
եւ անոր դէմ պիտի ելնեն յարձակին և զարնուին  
դժոխոց բոլոր զօրութիւնները՝ ( այսինքն՝ հեթանոս-  
ները , անհաւատաները , անլստուածները , հերետի-  
կոսները , հայհոյիչները , սուս փիլիսոփաները եայլն )  
մինչեւ իսպաս , բայց ամենեւին չպիտի կրնան յաղ-  
թահարել անոր ( Մաթ . ԺԶ . 16-20 : Մրկ . Դ . 30-32 :  
Ես . Բ . Եզեկ . Ժէ . 22-24 : Դան . Բ . 44 ) . նա պիտի  
անի ուռնանայ լեռ . պիտի ըլլայ , և բոլոր աշխարհը  
պիտի բռնէ . թէ՛ և դժոխք իր կորստական ամեն տե-  
սակ զէնքերովը անդուլ մաքառի մարտնչի անոր դէմ :

Բացատրելու հարկ չ'կայ թէ ի՞նչ զարմանալի  
կերպով՝ ի՞նչ արագութեամբ և ի՞նչպէս կէտ առ կէտ  
կատարուած է այս մարդարէութիւնը , և դեռ ևս կը  
շարունակուի անոր կատարումը մեր իսկ աշաց առջեւ :  
— Հազիւ թէ քանի մը տգէտ տխմար Գալիլիացիներ  
սկսան Քրիստոսի անունը վախն ի վախը բերան առ-  
նուլ և հնչեցընել Հրէաստան երկրին մէջ , հազարա-  
ւորներ բիւրաւորներ գունդագունդ վաղեցին գալ  
յարիլ անոր հաւատքին օրըստօրէ , և ահա անդէն՝  
նոյն իսկ Քրիստոնէութեան ի վեր երևցած բոյնէն՝

Երուսաղէմի մէջ՝ և Քրիստոնէից համազգի Հրէից երեսն ի վեր երեւցան կատաղի զօրութիւնք՝ անորդէմ՝ մոլեգին հալածանօք, որոցմէ առող ատենի մէջ անցաւ Հռովմէական տիեզերակալ կայսերց ձեռքը, որ բովանդակ իրենց տիեզերական իշխանութեան տակ գտնուող երկիրներուն մէջ տարածեցին ամենայն խստութեամբ: — Տասն կայսերք՝ ամենազօր իշխանք դժոխոց՝ յաջորդաբար առաջին երեք դարուց մէջ այն տասը հռչակաւոր հալածանքները հանեցին, որ տիեզերքը միլիոններով Քրիստոնեաներու արիւններով ողողեցին լուացին. բայց այն թափուած արիւնները սերմեր եղան, յորոց նոր նոր Քրիստոնեաներ բուսան, և արդէն եղածներուն թիւը արագ արագ և յոյժ շատ բազմապատիկ ստուարացուցին՝ մինչեւ Դ.րդ դարու սկիզբը, երբ Կոստանդիանոս Քրիստոնէութեան դառնալով այն համաշխարհական հալածանաց վերջ տուաւ: — Այս առ ժամանակօքն դադրեցան հեթանոսաց հալածանք, վերջէն տիեզերաց այլ և այլ կողմերը վերստին զօրանալու և նախձիրներ գործելու համար. բայց հերձելոց՝ հերետիկոսաց՝ անկրօնից և մանաւանդ մոլեկրօնից հալածանքները որ Քրիստոն՛ութեան հետ մեկտեղ բուսան խռուեցան աղնիւ ցորեններու հետ խառն բուսնող որոմներու պէս. անոնք երբէք չ'կասեցան, թէ՛ ծածուկ և թէ՛ յայտնի միշտ տեւեցին կեցան: Վոլթեր և Վոլնէյ և իրենց հետևողք, ինչպէս նաեւ ոչ ստկաւ նիւթապաշտներ՝ ամենէն լիրբ կատաղի հալածիչներն եղան եկեղեցւոյ, երդուեալ թշնամիք Աստուածաշնչին, որ ամեն միջոց ի գործ դրին՝ Գիրքըն ու անոր հաւատքը ընդ նմին սպաննելու թաղելու անհետելու համար. բայց ամենեւին ոչինչ կրցան

վնասել անոր. ըրածնին՝ առակին զրուցած Խարտոքը լիզող օձին ըրածն էր, իրենք իրենց վնասեցին. և մինչդեռ այսօր՝ Գրքին դէմ իրենց ամբարշտական հայՀոյալից գրութիւնները մութին խաւարին մէջ մոռացութեամբ արհամարհանաց թողուած են ցեցակեր կորսուելու, Ս. Գիրք՝ զորս կործանել կ'ջանային՝ այնուհետեւ հարիւրաւոր լեզուններու թարգմանուեցան, բիւրաւոր՝ միլիոնաւոր օրինակներով տարածուեցան աշխարհի մինչեւ ամենէն անծանօթծայրերը, և նոր նոր Քրիստոնեաններ բուսցուցին կան՝ այն դեռ եւս այսօր իրենց յաջորդները, գիտութեանց համբակ աշակերտք, թերուս փիլիսոփուք, որ Գրքերը ծահածուս ծեքծեքելու և անոնց դէմ յարձակելու բուռն ճիգեր կ'թափեն, բայց միշտ կը յանդիմանուին ճշմարտութեան ճառագայթելէն։ Թողայդպէս շարունակին և պիտի շարունակին դժոխոց բոլոր զօրութիւնք միանգամայն մինչեւ երր որ զօրութիւննին տեէ, Եկեղեցին միշտ յաղթող անսասան կայ ու կ'կենայ անոնց դիմաց՝ լերան վրայ կեցող քաղքին պէս. և Աստուծոյ յատուկ Նախախնամութեամբ երթալով կ'երթայ կ'զօրանայ և բոլոր տիեզերքը կ'կեցընէ՝ Դանիէլի մարգարէէութեան լեռնացած քարին պէս, թէ՛ն անոր մէջ սպրդուած գտնուին թուլահաւատներ և անտարբերներ ալ, ինչպէս որ կանխաւ աս ալ ըսած էր Քրիստոս (Ղկ. Ժկ. 8):

Ահա այս տեղ ալ տեսնուեցաւ որ Աստուծոյ այս նպատակի յայտնած է իր կամքը՝ ընելիքը և նպատակը, և բոլոր աշխարհք իրար անցած՝ Աստուծոյ այս նպատակին իրագործման դէմ այնքան արգելքներ յարուցած՝ ամեն միջոցներ գործադրած ատեն՝ Աստուծոյ կամքը ճամբուն վրայ չ' մնացեր, իսկա-

պէս յառաջ գացեր է. և թէպէտ ա Խնարնական եղանակաւ, սակայն Անոր ըսածէն մազանվրէպ՝ ի գլուխ ելած է. զի Նա ինքն է տիեզերքը վարողը, և առայն դէպքերը կարգաւորողը, մինչեւ իսկ գործողը։

Դիտելու յատուկ կէտը աղէկ շշափեմք։ Կ'տեսնեմք որ այս ամեն մարդարէութիւնք՝ իւրաքանչիւր ո՛ր տեղին՝ ո՛ր քաղքին՝ ո՛ր իրին կամանձին վրայ զլուցուեր են թէ այսպէս և այնպէս պիտի իրագործուին, միայն անոնց վրայ հաստատուած են թէ ճշդիւ և մանր պարագաներով իրապէս կատարուած են այն բաները, և անոնցմէ մին՝ մէկ ուրիշ տեղի՝ քաղքի՝ անձի կամ իրի վրայ չ'կրնար ամենեւին յարմարցուիլ։ Տիւրոսի պատկանած կանխասացութիւնք չ'են յարմարիւ Եգիպտոսի, Եգիպտոսինն ալ Բաբելոնի կամ Երուսաղէմի չ'պատշաճիր. և այսպէս բոլոր մարդարէութիւնք. Յուղայի համար եղած մարդարէութիւնք (Գործ. Ա. 15-26, Սղմ. Եւայլն .) Յովհաննէսին չ'են պատշաճիր, Յովհաննեսինները (Իլ. 21-23) Պետրոսին չ'են յարմարիր, Պետրոսիններն ալ (Մաթ. Իջ. 33-35) ոչ մէկ աշակերտի . — Ուրեմն ողջա լիտ տրամաբանութեան կ'իյնայ ըսել՝ թէ այս ամեն տիեզերական՝ բնական և բարոյական փոփոխութիւնք և կարգադրութիւնք՝ Արարչին կամելովը գործադրուեցան և կ'գործադրուին ամենաբնական ընթացիւք, և առանց Արարչին կամաց ոչ մէկ գործառնութիւն կրնայ իրագործուիլ, ինչպէս Գիրքերն ըսած են։



## 2

### Հ Ր Ա Շ Ք Ն Ե Ր

Երկու խօսք ալ Հրաշից վրայ : — Գրքերը կ'ըսեն  
թէ՝ Աստուած իր յաւիտենական խորհրդոց իրագործ-  
ման համար ստէպ հրաշքներ ի գործ դրած է՝ երբ  
և պատշաճ տեսած է : — Գիտութիւնք ինչ կ'ըսեն ա-  
սոնց համար : Ոչինչ : Գիտութիւնք բնական իրաց-  
իրողութեանց հետ կ'զբաղին . հրաշքները բնական  
իրողութիւններ չեն, բնական գործառնութիւններէ  
արտադրուելիք բնական արդիւնքներու տեղ՝ գեր-  
բնական արտադրութիւններ են, որ յատուկ է Աստ-  
ուածային ամենակարող զօրութեան . հետեւաբար  
բնական Գիտութեանց տակ չ'են իյնար : Գիտու-  
թեանց գիտական սահմանները հրաշից գոյութիւնը  
չ'են կրնար ընդունիլ սկզբամբ . Ի՞նչ ԱԿԱՆՅՈՒԷՆ ան-  
կարելի են ատոն կ'րսեն . վասնզի բնականօրէն չ'են  
կրնար բացատրուիլ և ցուցուիլ . վասնզի բնական  
օրինաց համաձայն գործողութիւններ չ'են : Բայց  
չեզոք՝ անկախ՝ ստուգագոյն պատմութեանց անստելի  
վկայութիւնները կան, որոց առջեւ ըսելիք չ'մնար .  
վասնզի անոնք իրականութիւնը կ'հաստատեն, և ա-  
մեն ուրացութիւն անզօր է և անտրամաբան անոնց  
առջեւ . Գիտութիւնք այս անսուտ վկայութեանց  
հանդէպ կ'լուեն և պէտք է լուեն . ապա թէ ոչ՝ պատ-

մական հաւատքը ժխտած պիտի ըլլան, մինչդեռ նոյն իսկ Գիտութեանց նախատարերք՝ յորոց ծնունդ և կեանք առած են Գիտութիւնք՝ այդ հաւատքով ձեռք բերուած են. առանց պատհական հաւատոց Գիտութիւնք եւս դեռ չ'ծնած պիտի մեռնէին:

Քրիստոնէութեան միապէս թշնամի Հրէայ և հեթանոս մատենագիրներ վկայած են Աստուածաշունչ Գրոց մէջ պատմուած հրաշքներուն իրօք կատարուած ըլլալուն համար ( տես ի Փննական կրօնագիտ. Տպ. Բ. էջ 314.-337 ) : — Եթէ Աստուածաշունչ Գրոց մէջ պատմուած հրաշքներն իրօք եղած չ'ըլլային Խորայիի որդոց աշներուն առջեւ. և ստայօդ առասպելներ ըլլային, ամենեւին անբացատրելի պիտի դառնային մեզ համար թէ Հրէական և Քրիստոնէական դրութիւնները ինչպէս գոյութիւն և հաստատութիւն գըտան: Եթէ որդիք Խորայէլի իրենց աչքերով տեսած չ'ըլլային Հնդամատենին մէջ պատմուած իրողութիւնները, յորոց ծնունդ առին իրենց օրէնքներն ու ծեսերը, ի՞նչպէս հաւատք պիտի ընծայէին Մովսէսի՝ և անոր աւանդած օրինաց և ծիսից այնպէս սերտիւ պիտի փարէին ի սրաէ, և տեւէին բերէին մինչեւմեր օրերը հասցընէին այն դրութիւնը ( տես ի Ներած. Ս. Գր. հատ. Բ. էջ 9-10 ): Նոյն բանը պէտք է ըստ Քրիստոնէութեան համար ալ. Եթէ Քրիստոս անուանեալ Աստուածային Առաքեալը Հրէաստանի մէջ ծնած ապրած և շատ անհամար հրաշքներով իր դրութիւնը աւանդած հաստատած չ'ըլլար. իր աշառ կերտներն ալ այնչափ բազմազան հրաշքներով իրենց Առաքելութեան եւ վարդապետութեան ճշմարտութիւնը ապացուցած չ'ըլլային, ի՞նչպէս կարելի էր այնչափ սուղ ժամանակի մէջ նոյն իսկ Մովսէսի ա-

շակերտ Հրէաներէն՝ ինչպէս նաեւ հեթանոսներէն միլիոնաւորներ՝ թողէին իրենց սրտերուն հաճելի պապենական ախտաբոյծ կրօնքներնին, եւ մէկէն գային յարէին Քրիստոս Վարդապետին այն ինչ հիւնած Քրիստոնէական ժողովքին, որ կատարեալ անձնուրացութիւն եւ կենդանի մարտիրոսութիւն կ'պահանջէր իր զաւկներէն։ Եթէ Քրիստոս իրօք հրաշքներ գործած չըլլար, ինչո՞ւ Հրէից ռաբբիները զայն կախարդ անուանէին, եւ Էնելզեբու լովլ կ'զարմանագործ ըսէին, որոց այս անմիտ քան և ստուածուրաց բարբանջանաց ստութիւնը յանդիմանուած ըլլալուն համար յԱւետարանոն, ետքի ռաբբիներն ալ Թալմուտին մէջ աւելի մեծ անմոռութիւն մը աւանդէին, թէ Տաճարին Սրբութիւն Սրբութեանց ըսուած տեղը նուրական գոհար մը կար՝ վրան քանդակուած Աստուծոյ անթարգմանելի անունը « Եովէ » կամ « Եհովա » , այսինքն՝ « Որ էն ». աս անունը լաւ առոգանութեամբ արտասանել գիտցողը կրնար հրաշագործել . Յիսուս տաճարէն գողցեր էր աս քարը, և այն անունը լաւ առոգանութեամբ արտասանել կրնալով կ'հրաշագործէր : Ոհա ամենեւին սրբապիղծ հերքում մը . հերքում մը որ հերքելովը աւելի ամուր կ'հաստատէ թէ Քրիստոս Յիսուս ճշմարտապէս հրաշքներ գործեր էր :

— Ինչո՞ւ ժամանակակից Հրէայ մատենադիրներ, երեք անկախ պատմիչներ, Յովելապոս, Փիլոն եւ Յուսուս Տիբերիացի, որ ամենեւին թշնամի էին Աւետարաններուն, չեն հերքեր բնաւ անոնց մէջ պատմուած հրաշքներուն եւ ոչ մէկը (1) : — Հեթանոսնե-

(1) Յովէպոս (ի Հնախօս. ՀԲ. ԺՀ. 3) ունի վկայութիւն մը Յիսուսի հրաշագործութեան եւ Յաշութեան վրայ. « Այն

ըէն ալ կելսոս Եպիկուրեան՝ փիլիսոփան՝ մոլեգին թշնամին Քրիստոնէութեան՝ ինչո՞ւ կ'խոստովանի Քրիստոսի հրաշքները . թէ և կախարդութեան ընծայելով զանոնք, եւ ուրացողն Յուլիանոս բոլորու վին կ'հասատատէ (առ Կիրզի Աղեք. Գլ. Ը.) ըսելով. « Ի՞նչ բաներ ըրաւ Քրիստոս իր կենաց մէջ եթէ մէկը մեծ բան չ'ամարի ախտաժէտաց բժշկութիւնը, կուրաց աչաց բացումը, Բեթսայիդայի եւ Բեթանիայի կողմերը այսահարի մը ազատութիւնը» : Արդարեւ եթէ իրօք առանց ամենեւին հրաշք մը գործուած ըլլալու Խորայէլեան եւ Քրիստոսեան դըրութիւնները երեւան եկած հաստատուած են, ատիկայ Ս. Գրոց մէջ պատմուած բոլոր սքանչելիքներէն տաելի մեծ՝ Խրաչեներս Խրաչէր պիտի ըլլար, ինչպէս ըսեր է մեծ իրաւամբ՝ իմաստունին մէկը, և ասիկայ՝ ոչ մէկ ողջամիտ դատողութիւն կրնայ ընդունիլ :

Ասոնք ամենը թողումք ի բաց . միայն Յիսուսի Քրիստոսի Յարութեան վարդապետութիւնը բաւական է մեզ, որուն բոլոր աշխարհք վկայած են, զոր ընդունած են ամենէն լուսամիտ՝ համբաւաշտ

---

ատենները, կ'ըսէ, երեւցաւ Յիսուս անուն իմաստուն մարդը, եթէ արժան է զինքը մարդ անուանել, ինչու որ նա սրանչելագործ էր եւ ուսուցիչ ամեն անոնց որ յօժարամիտ հն ճշմարտութեան հնազանդելու. Շատեր՝ Հրէայ եւ հեթանոս՝ հնտեւեցան իրեն, եւ հաւատային Աէ Քրիստոսն է: Եւ Պիդատոս առ նախանձու իշխանաց մերոց զինքը խալք հանելէն ետքն ալ իր սիրողները իրենց սիրոյն մէջ հաստատ կեցան. ըստ որում երբորդ օրը նոյն ինքն կենդանի երեւցաւ անոնց. որու համար մարզարէից Գրեղը աս ամենը եւ ուրիշ շատ հրաշալի բաներ աւետարաներ էին »: — Սակայն Քննիչք ումանք այս վկայութեան վաւերաւթիւնը չ'են հաստատեր:

գիտուններ (1), մինչեւ իսկ անկրօն գիտուններ : Ափինողա կ'ըսէ . « Կ'խոստովանիմք որ Քրիստոսի յարութիւնը այնպիսի պարագաներով պատմուած է որ անհնար է մեզ ուրանալթէ Աւետարանիչք ինքնին Քըրիստոսի մարմինը յարուցեալ տեսած չ'ըլլան , և թէ անհաւատք չ'էին կրնար զայն տեսնել՝ ինչպէս որ անոնք տեսան , եթէ գտնուած ալ ըլլային այն տեղուանք ուր երեւցաւ Քրիստոս իր աշակերտաց» : — Տէ Վէդդէ անուն Գեր մանացի փիլիսոփայ մատենագիրն ալ՝ որ անկրօնից դասուն մէջ « Ընդհանուր տարակուող » համբաւուած էր , մեռնելէն տարի մը առաջ իր վերջին հետազօտութեանց արդիւնքը հրատարակելով իր վերջին գործքին մէջ՝ արձակ համարձակ խոստովանած է թէ՝ « Քրիստոսի յարութիւնը արդարեւ պատմական դէպք մ'է . ուստի եւ այն դիպաց միջոցին եւ եղանակին վրայ թէպէտ եւ անփարա-

(1) Գիտուն հեղինակ մը կ'ըսէ . Քրիստոնէութիւնը վնաս կրած չ'է բնական գիտութեան ապացուցեալ վարդապետութենէն . նա մանաւանդ բարեպաշտ Քրիստոնեայր են բնական զիտութեան չերմազոյն հետեւողք . . . . Գիտութեանց եւ արուեստից մ.ջ մեծ գիւտեր ընող նշանաւոր անժինք մեծաւ մասամբ անկեղծ Քրիստոնեաներ էին . զարօրինակ . Բօմէր Պէյզըն , Մեծն Ալֆրետ , Կոլոմպոս , Կոպերնիկոս , Տպագրական արուեստին հնարողք , Կալիէսո , Միքայէլ Անդէլոյ , Ռաֆայէլ , Լէոնարդոյ տա Վէնչի , Մամէլլան , Կեսներ , Քերլէր , Նետոն , Ֆրանչիսկոս , Պէյզըն , Տէզարո , Քանդ , Լոզ , Վանինի , Ներիր , Պէզզ Բասգալ , Լայպնից , Կասանդի , Դորրիչելի , Ուլիամ Հերշել , Ճոն Հերշել , Պիւֆֆոն , Լեյարտ , եւ ուրիշ շատ նշանաւոր անկեղծ Քրիստոնեաներ են . . . . : Ամերիկայի մէջ նշանաւորագոյն գիտնոց բոլորն , ինչպէս են հանգուցեալ Ակամիզ , եւ Հիշզող , Հենրի , Բիրս , եւ Տէյնա , Կրէյ , Տուրեն , Կիւյոյ , Ելնկա , Եւայլն , Եւայլն , Եւայլն , որ զեռ կենդանի են , են անկեղծ Քըրիստոնեայր :

տեղի մթութիւն կը տիրէ , սակայն դէպքը չ'կրնար երկբայութեան տակ ձգուիլ , ինչպէս որ Յուլիոս կայսեր սպանման պատմական ստուգութիւնը չ'կըրնար երկբայութեան տակ ձգուիլ » : — Այս Թրիստոսի յարութեան վարդապետութիւնը միայն , կ'ըսեմք , բաւական է հրաշից գոյութիւննը եւ կարելիութիւնը հաստատելու . թո՛ղ որ մարդ կոյր ըլլալու է , եւ աչքով կոյրէ աւելի՝ հոգւով եւ մտօք կոյր , չը տեսնելու համար տիեզերք , եւ ինձինք , որ հրաշալեաց հրաշալիքն են , զորա գործած է Աստուած , զոր կ'ընդունին Գիտութիւնք լուութեամբ , եւ մեծ գիտուններ կ'խոստովանին եւ կ'հռչակեն , ինչպէս ի վերն տեսանք Արարջութեան պատմութեան մէջ , եւ մինչեւ իսկ Շրջափոխական եւ Նիւթապաշտ անԱստուածութիւնք խոստովանած են զայս յանկամն՝ Աստուած ըսելու տեղ կայ եղած զօրութիւնն ասոնք դործած է՝ ըսելով . ըսել է՝ Աստուած հրաց զործեր է , ըսել է՝ Աստուած հրաց կրնայ զործել երբ որ ուզէ . այս չափը հերիք է մեզ , և մենք այս տեղ կ'փակեմք այս խնդիրը՝ Խուսայի մէկ բանաւոր խորհրդածութեամբը . « Կարո՞ղ է Աստուած սքանչելիք գործել . այսինքն՝ կրնա՞յ Աստուած իր սահմանած օրէնքները տնօրինել : Ասանկ անվայել խնդիր մը թէ որ լըրջմտութեամբ քննութեան առնուի , ամբարշտական կ'ըլլայ , թող թէ անտեղի . ատիկայ ժխտողը պատուհասելը՝ իրեն չափազանց պատիւ ընել է , զինքը կապել փակելը հերիք է իրեն » . (յԵմիլիոսն .) :

Հրաշից գոյութիւնը Աստուծոյ Նախախնամութեան եւ Նախասահմանութեան հզօր ապացոյցն է . Աստուած ստէպ հրաշքներ երեւցուցած է իր յափտենական խորհրդոց իրագործման համար , ինչպէս

Աստուածաշունչ Գրքերը կ'զբուցեն . Խորայէլի որդիքը  
Աստուած քառասուն տարի անապատին մէջ հրաշիւք  
ինամեց . Մովսէսի ձեռքով անոնց հաց՝ միս՝ ջուր և  
ամեն պէտք ունեցած բաներնին պարզեց . Հրա-  
շիւք , եւ այս բաւական է բանական մարդուն համո-  
զում գոյացընելու համար Անոր Նախախնամութեան  
և Նախասահմանութեան :

## Յ Ա Ս Ա

Էջ

<b>Նպատակ</b>	<b>Է—Ժ</b>
<b>Ա.</b> <b>Աստուած</b>	<b>11</b>
Արարչութիւն եւ Կազմութիւն Տիեզերաց	12 — 20
Վեցօհայ Արարչութիւն	20 — 28
Արարչութիւն Գործարանաւոր էակաց	28 — 63
—Սկզբանաւորութիւն մարդոյ	30 — 39
—Ի՞նչ է Հողին	40 — 49
—Թարութիւն մեռելոց, ի՞նչպէս եւ ո՛ւր	49 — 55
—Երրորդութիւն	57 — 60
—Պատկեր եւ նմանութիւն Աստուծոյ իմարդեց	60
Դրախտ Եղեմայ	64 — 66
Նախածնողաց Դրախտի կեանքեն	66 — 67
Հնութիւն մարդոյ	68 — 77
Յաղըանդսմութիւն եւ Երկարակեցութիւն	
նախամարդոց	77 — 79
Զրիեղեղ	80 — 85
Աղեղուն Երկնից կամ Միաձան	83
Սերունդի Երից ուղուոց Նոյի	87 — 93
Աւարակաշինութիւն եւ բաժանումն լեզ-	
ուաց	93 — 99
Կործանումն Սոդոմ եւ Գոմոր խաղաց	100 — 101
Ի՞նչ ի՞նչ Եղիպատիան Վաղեմի սովորու-	
թիւն	101 — 102
Յեսուայ արեգակը կեցընելը եւ Խայիայ	
եւ դարձնելը	103 — 105
<b>Բ.</b> <b>Կառավարութիւն տիեզերաց</b>	<b>107 — 140</b>
1. Մարգարեկութիւն	119 — 123
Տիւրոսի վրայ մարգարեկութիւն	113 — 118
Բաբելոնի վրայ մարգարեկութիւն	119 — 120
Եկեղեցւոց վրայ Մարգարեկութիւն	129 — 133
2. Հրաշեներ	134 — 140

Վ Ր Ի Պ Ա Կ

Էջ 99, առող 7, Զիները՝ պէտք է ըլլայ՝ Զիներէնը

